

# ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزقك

مَجَلَّة رِیَاضِيَّة شَهْرِيَّة  
تصدرها جمعية الهومنتمن بيروت


marzig

SPORTS MAGAZINE

34-րդ ՏԱՐԻ, 2015, ԹԻԻ 4-5 (394-395) VOL. XXXIV № 4 - 5 0-4 - السنة الرابعة والثلاثون - العدد رقم 4-5



## Հ.Մ.Ը.Մ.-ի 11-րդ ՊԱՏԳԱՄԱԲԱՐԶԱՆԿԱՆ ԺՈՂՈՎ



# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

այ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան 11-րդ Պարգամատրական Ժողովը Կեդրոնի ունեցած 7-11 Սեպտեմբեր 2015-ին, Ադվերանի մէջ, Հայաստան, մասնակցութեամբ Շրջանային եւ Մեկուսի 20 շրջաններէ 65 պարգամատրներու եւ 34 հրաւիրեալներու:

Ժողովը համապարտիակ քննութեան ենթարկեց Հ.Մ.Ը.Մ.ի անցնող չորս փարիներու սերնդակերպման ու հայակերպման աշխատանքները, գնահատեց կատարուած իրագործումները եւ ապագայի հաշտոյն մշակեց նոր ծրագիրներ:

Պարգամատրական Ժողովը լայնօրէն անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի սկստութիւնը, մարզական կեանքը եւ երիտասարդութիւնը յուզող հրապարակային հարցերուն եւ համապարտասխան որոշումներով քայլեր առաջադրեց անոնց լուծման թափ փայտու նպատակով: Ժողովը քննեց նաեւ միութեան կազմակերպական ընդհանուր իրավիճակը եւ ընդգծեց Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքային մասնաճիւղերուն աշխատանքային դաշտերը ընդլայնելու կարելիութիւնները: Օրակարգի նիւթ դարձան նաեւ կանոնադրային փոփոխութիւններու կարգ մը բարեփոխումներ եւ միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթին ու կայքէջին զարգացման վերաբերող ծրագիրներ:

Պարգամատրական 11-րդ Ընդհանուր Ժողովը ճշդեց Հ.Մ.Ը.Մ.ի յառաջիկայ փաստանշաններու զարգացման ռազմավարական ծրագիրը՝ համահայկական մօտեցումով (Հայաստան եւ Սփիւռք): Այս իմաստով, ժողովը փուստ հիմնական որոշումներ՝ հայ երիտասարդութեան ներգրաւման, Հայաստանի մէջ աշխատանքներու ընդարձակման, միութեան կազմակերպական կեանքի արդիականացման եւ արհեստագիտական նորագոյն միջոցներու օգտագործման համար:

կան նորագոյն միջոցներու օգտագործման համար:

Պարգամատրական 11-րդ Ժողովը առաջադրեց Հայաստանի առաջին Հանրապետութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան զոյգ 100-ամեակներու առիթով շեշտարկներու հնարաւորութիւնները եւ թելադրեց փառաշուք փոխակապարտութեամբ յիշատակել զոյգ 100-ամեակները:

Իր աշխատանքներու աւարտին, Պարգամատրական Ժողովը ընտրեց յառաջիկայ քառամեայ նպատակաշարժանի նոր Կեդրոնական Վարչութիւնը եւ Ընդհանուր Ժողովի դիւանի ներկայութեան կազմուեցաւ Կեդրոնական Վարչութեան դիւանը բաղկացած հետեւեալներէն.-

- Եղբ. Գառնիկ Մկրտիչեան- արեւնապետ (Լիբանան)
- Եղբ. Բաֆֆի Կէլօղլանեան- արեւնադպիր (Լիբանան)
- Եղբ. Վաչէ Նաճարեան- գանձապահ (Լիբանան)
- Եղբ. Իշխան Եղիայեան (Լիբանան)
- Եղբ. Բագրատ Եսայեան (Հայաստան)
- Եղբ. Օշին Փիրումեան (Հայաստան)
- Եղբ. Վիգէն Դաւթեան (Արեւմտեան Միացեալ Նահանգներ)
- Եղբ. Հրաչ Մեսրոպեան (Արեւելեան Միացեալ Նահանգներ)
- Եղբ. Մոսիկ Թօփուզեան (Փանապա)
- Եղբ. Անդրանիկ Պահարեան (Փարիզ)
- Եղբ. Ալէք Խաչատրեան (Լոնտոն)
- Եղբ. Վիգէն Քորթեան (Աւստրալիա)
- Եղբ. Արմանյո Թորգոմեան (Հարաւային Ամերիկա)

Հ.Մ.Ը.Մ.Ի 11-ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԴԻՒԱՆ

## ՄՏԱՑԱՆՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՊՈՐՏԸ  
ԵՒ ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ  
ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆՈՒՄ

Հայկ Դեմոյեան, Հայոց ցեղասպանութեան  
Թանգարան-ինստիտուտ, Երեւան, 2015:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՆ  
ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ ԵՒ ՄԱՀԱՑԱԾ ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ  
(ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)  
ԱԼՕ Գաթրճեան, Հալէպ, 2015:

ԲԺԻՇԿԻՆ Գ. ԽՕՍԲԸ  
ԲԺԻՇԿ Կարպիս Հարպոյեան, Անթիլիաս, 2015:

ԲԺԻՇԿԻՆ Դ. ԽՕՍԲԸ  
ԲԺԻՇԿ Կարպիս Հարպոյեան, Անթիլիաս, 2015:

## ԱՐՏԱՔՍՈՒՄ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը Շուէտի մեկուսի շրջանէն կ'արտաքսէ Հայրենիք Յովսէփեանը՝ միութեան կանոնադրային իր անյարիր ընթացքին պատճառով:

Հայրենիք Յովսէփեան վերջին ամիսներուն յանդգնած էր իր ստորագրութիւնը կրող Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղին պետական արտօնագիրը փոխարինել նոր արտօնագիրով մը եւ զայն սեփականացնել «Չաւարեան» անունով:

Առ այդ, Հայրենիք Յովսէփեան Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն կ'արտաքսուի միութեան ընդհանուր կանոնագրի 107-րդ յօդուածին համաձայն:

Հ.Մ.Ը.Մ.Ի  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

Պատմական առաքելութեանը **1**

11-րդ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ **3 - 29**


ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԸՆԹԵՐ **30 - 41**

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՆԵՐՈՒ ՀԵՏ **42 - 47**



**ՄԵՐ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԸ**

**54 - 55**



**ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 6-ՐԴ ՄԱՐԶԱՆԱԳԵՐ**

- 48** Աստղը Արեւմտահայաստանը ներկայացրնող խումբերը
- 49** Չափին ուղեորութիւնը Աղթամարէն Երեւան
- 50** Երեւոյթներ եւ եզրակացութիւններ
- 51** Ընդհանուր արդիւնքները
- 52** Ի՞նչպէս կեանքի կոչուեցաւ այս տօնը

Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon-Tel: 9611248043, Fax: 9611260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org

**Խմբագիր:** Վիգէն Աւագեան **Խմբագրական կազմ:** Մարտ Բէշիշեան, Սեւան Նազարեան, Տիրան Շահինեան  
**Վարչական կազմ:** Պարրիկ Կիլիպէնկեան, Գրիգորիս Պողարեան, Արօ Մոսիկեան  
**Էջադրում եւ ընդհանուր շեւարում:** Արշօ Պալեան, **Կողքի պատրաստութիւն:** Y Concept International, **Փրաշարութիւն:** Շողիկ Պոյաճեան, **Հրատարակութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Հրատարակութիւն:** Համազգայինի «Վահէ Սէրեան» փոխարան:  
**Քաժանորդագրութիւն:** «Մարզիկ» կը հասնի աշխարհի 30 երկիրներու քաժանորդներու: Տարեկան քաժանորդագրութեան սակ ճշդուած է՝ Լիբանան 32 \$, Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 70 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 75 \$: Լիբանանի մէջ թերթին հարստացման սակն է 4000 Լ.Ո.: **Ցրում:** «Մարզիկ»-ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յարուկ ցրուիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է ստանալ նաեւ «Համազգային»-ի գրասխանութէն: Լիբանանէն դուրս թերթը կը ստացուի «Liban post»-ի միջոցով: **Ծանուցումներ:** «Մարզիկ»-ի մէջ ծանուցելու համար դիմել թերթին վարչական կազմին (Հեռ: 9611248043):

«Մարզիկ» ամսաթերթ կը հրատարակուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ - Հասցէ: «Սեւան» շէնք, թիւ 77 փողոց, թիւ 4 հատաւած, Պ. Համուտ, Պէյրութ, Լիբանան - Հեռ: 9611248043, Հեռախոս: 9611260117 - Ե-նամակ: marzig@Homenetmen.org - Փոստարկ: 80486 Պուրճ Համուտ, Լիբանան - www.Homenetmen.org

# ՊԱՏՄԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՄԲ

**Պ**ատմական հարիւրամեակներու միջեւ գումարուած կարեւոր իրադարձութիւն մը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի 11-րդ Պատգամատրական Ժողովը, որ տեղի ունեցաւ Մեպտեմբեր 2015-ին, Աղվերանի մէջ, Հայաստան:

Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին յաջորդած այս ժողովը, համազգային հրամայականներէ թելադրուած, վերահաստատեց միութեան պատմական առաքելութիւնը՝ Հայ Մարմնակրթական ԸՆԴՀԱՆՈՒՐ միութիւն ըլլալու հանգամանքը եւ, առ այդ, միութեան 100-ամեակի սեմին, ուղեգիծ մշակեց *ընդհանուրին* համար գործելու եւ *ընդհանուրը* համախմբելու համար:

Հ.Մ.Ը.Մ.ի 11-րդ Պատգամատրական Ժողովը միութեան դիմաց բացաւ աշխատանքի անսահման դաշտ մը, որ կ'ենթադրէ անվերջ ծրագրում եւ տքնանք՝ ընդառաջելու համար մեծին ու փոքրին, սկաւտին թէ մարզիկին, վարչականին թէ ծնողքին: Ամէն մէկը ունի իր կարիքը՝ տեղական պայմաններէ եւ ժամանակի պահանջներէ բխած:

Սկաւտութեամբ եւ մարզախաղերով, Հ.Մ.Ը.Մ. կամաւոր գործ պիտի հայթայթէ բոլորին, պիտի կրթէ եւ ազնուացընէ բոլորը, բարոյական սկզբունքներ եւ ազգային արժէքներ ջամբելով անոնց:

Աշխատանքի անսահման դաշտը աշխարհագրական սահմանափակումներ չի ճանչնար: Պատգամատրական Ժողովի տրամադրութիւններով, Հ.Մ.Ը.Մ. կոչուած է գործելու Հայաստանի, Արցախի, Ջաւախքի, նախկին Խ. Միութեան երկիրներու մէջ, այնպէս ինչպէս գործած է ու կը գործէ աւանդական եւ նոր Սփիւռքներու տարածքին: Առաջնահերթը, բնականաբար, հայրենիքն է, ուր վերջին տարիներուն սկսուած գործը պէտք է ծաւալի եւ ամբարպնդուի՝ սկաւտական յանգրեալ միատրներու յառաջացումով եւ նոր ակումբներու ստեղծումով:

Օրուան հրամայականն է ըլլալ հո՛ն ուր հայեր կան, բայց հայութիւն չկայ, հոն ուր ազգային կեանք ու կառոյցներ չկան: Պէտք է կազմակերպել, ձեռն ու դիմագիծ տալ անկազմակերպ հայ հաւաքականութիւններուն: Հ.Մ.Ը.Մ. անյետաձգելի պարտականութիւնը ունի հայութենէ օտարացող բեկորները իրենց արմատներուն վերադարձնելու:

Հ.Մ.Ը.Մ. ընդհանուրին միութիւնն է եւ ընդհանուրին

համար գործելը կը պահանջէ ունենալ ընդհանուրին անհրաժեշտ «զէնք»երը. արդի արհեստագիտութիւնը, դաստիարակչական-միութենական ժամանակակից ծրագիրները, ակնբային-ժողովական կեանքի նորագոյն մօտեցումները, եւ այս բոլորին տիրապետող ձեռներէց մարդուժը: Խոստմնալից տղաք ու աղջիկներ, որոնք իրենց անձնական կեանքի յաջողութիւններուն հետ մէկտեղ, դուրս գան իրենց կաշիէն, իրենց անձնական հետաքրքրութիւններու նեղ շրջանակէն եւ իրենց ուժերու կենսունակութեամբ նոր հորիզոններ բանան ազգային-միութենական մեր կեանքին:

Ընդհանուր միութիւնը տիրութիւն կ'ընէ ընդհանուրին: Տիրութիւն՝ սակայն ոչ տիրելու եւ տիրապետելու հասկացողութեամբ, այլ՝ հոգալու, խնամելու եւ ծառայելու պատրաստակամութեամբ, այնպէս ինչպէս ըրած էր Ա. Հանրապետութեան օրերուն, Աղեքսանդրապոլ ապաստանած 30 հազար հայ որբերուն: Այնպէս ինչպէս ըրած էր անկէ քանի մը տարի ետք, գաւառներէն Պոլիս եւ Կիլիկիա համախմբուած 15 հազար հայ որբերուն: Եւ այնպէս

ինչպէս ըրած էր սփիւռքեան կեանքի սկզբնական տարիներուն, Լիբանանի, Մուրիոյ եւ Յունաստանի որբանոցներուն մէջ հաւաքուած հայ որբերուն: Այսօր որբեր չկան, սակայն որբացած հայութիւն կայ: Աներդիք մարդոց ազգային երդիք ապահովելու պահանջը կայ:

Երոպական ցամաքամասի ներկայ իրավիճակը խօստուն է: Հ.Մ.Ը.Մ. փրկարար աշխատանք կը տանի Միջին Արեւելքի տագնապալի կացութենէն խոյս տուած մեր ժողովուրդի գաւակներուն մարդկային ընդունելի միջավայր ստեղծելու եւ ազգային կազմակերպ կեանք յառաջացնելու համար: Հ.Մ.Ը.Մ. կը մնայ պատմէշի վրայ, հաւատարիմ իր պատմական առաքելութեան, *ընդհանուրը* համախմբելու եւ *ընդհանուրին* համար գործելու անխախտ համոզումով: Հ.Մ.Ը.Մ.ի դերակատարութիւնն է այդ, որ կու գայ պատմական հարուստ անցեալէ եւ 11-րդ Պատգամատրական Ժողովի բովէն անցնելով՝ դէպի 100-ամեակ միութեան երթը կը ծառայեցնէ հայութեան հաւաքական ուժին կազմակերպման՝

Վասն հայապահպանման մեր կռուաններուն ամբարպնդման,

Ի խնդիր մեր ընդհանրական նպատակներուն իրականացման:



# ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ Հ.Մ.Ը.Մ.Ի 11-ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Սիրելի հայրենակիցներ,

Ձերմօրէն ողջունում եմ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան 11-րդ Պատգամաւորական Ժողովի մասնակիցներին եւ հիւրերին:

Արդէն բարի աւանդոյթ է դարձել համահայկական փարբեր կառոյցների ընդհանուր ժողովների գումարումը մայր հայրենիքում, ինչը չափազանց կարեւոր եւ գնահատելի երեւոյթ է: Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը եւս անմասն չէ այդ որդեգրած դիրքորոշումից: Սա Հայաստան-Սփիւռք գործակցութեան լուսագոյն օրինակներից է:

Մենք մշտապէս եղել ենք հայկական կազմակերպութիւնների կողքին եւ ամէն ինչ անելու ենք հայրենիքի հետ կապն աւելի ամրապնդելու, հայրենիքի շուրջ համախմբուելու եւ Հայաստանակենտրոն գործունէութիւնն առաւել խթանելու համար:

Խորհրդանշական այս փարբում, երբ համայն հայութիւնն աշխարհի առաջադէմ մարդկութեան հետ միասին նշում է Հայոց Տեղասպանութեան 100-րդ փարբիցը, մենք մէկ անգամ եւս ապացուցեցինք, որ անկործան է հայի կամքը, եւ վճռական նրա ոգին, քանզի յաղթում են այն ժողովուրդները, որոնց պայքարն արդարացի է, եւ նպատակները՝ արդարացում: Արցախեան հերոսամարտը ասածիս փայլուն վկայութիւններից է: Այսօր մենք աւելի քան հասարակամ ենք եւ քաջ գիտակցում ենք մեր վաղուայ անելիքները,



որոնք կեանքի պիտի կոչենք միասնաբար, ուսուսի փուսած ջանադիր աշխատանքով:

Գրեթէ մէկ դարեայ գոյութեան ընթացքում Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը բազմիցս ապացուցել է իր անմնացորդ նուիրումն աշխարհի փարբեր ծայրերում ապրող հայ երիտասարդների հայեցի դաստիարակութեան եւ հայապահպանութեան շնորհակալ գործին: «Բարչրացի-բարչրացուր» ահա այն վեհ գաղափարը, որը Միութեան հէնքը հանդիսանալով փակաւին արդիական է մնացել այսօր: Հայոց պերտութեան, Արցախ աշխարհի եւ Սփիւռքի առջեւ ծառայած նոր մարտահրաւերներն աւելի քան երբեւէ ենթադրում են ուժերի համախմբում եւ խոհեմ գործելակերպ: Մեր արդար դարի ճանապարհը համապեղ ենք անցնելու, մեր յարթանակի կերպման ուղին միասին ենք հարթելու:

Արցախ աշխարհի եւ Սփիւռքի առջեւ ծառայած նոր մարտահրաւերներն աւելի քան երբեւէ ենթադրում են ուժերի համախմբում եւ խոհեմ գործելակերպ: Մեր արդար դարի ճանապարհը համապեղ ենք անցնելու, մեր յարթանակի կերպման ուղին միասին ենք հարթելու:


Սիրելի հայրենակիցներ,

Հաւատացած եմ, որ Պատգամաւորական Ժողովի ընթացքում ծառայուած քննարկումները եւ կայացուած որոշումները մեծապէս կը նպաստեն մեր ազգային առաջնահերթ խնդիրների լուծմանը՝ յօգուտ Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութեան հզօրացման, ի շահ համայն հայութեան:

Մաղթում եմ չեզ նորանոր յաջողութիւններ եւ արդիւնաւէտ աշխատանք:

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆՆԵՐ, ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐ, ՄԻԱԻՈՐՆԵՐ

**Հայաստան:** Երեւան, Մալաթիա, Ձէյթուն, Կոմիտաս, Էրեբունի, Արուսեան, Չարենցաւան, Հրազդան, Արմաւիր, Էջմիածին, Մարտունի, Գիւմրի, Վերի. **Չաւախք:** Ախալքալաք, Ախալցխա. **Ռուսիա:** Մոսկուա. **Լիբանան:** Պէյրութ, Չահլէ, Թրիփոլի, Պուրճ Համուր, Այնճար, Ճիւնի, Անթիլիաս, Ժլրէյրէ, Պատւշրիէ, Ռատուրա. **Սուրիա:** Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա, Գամիշլի, Բեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Ադէքասնոփիա. **Իրաք:** Պաղարատ, Մուսուլ. **Քուէյթ:** Քուէյթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գոքինիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնդոն. **Աւստրիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանդիա:** Ալմէլո, Ալքմար. **Գերմանիա:** Միւնիխ, Շուտը, Վեստերոս, Սոյերթելիա. **Պուլկարիա:** Սոֆիա, Ռուսէ, Փլովարիվ, Վառնա, Շումէն, Պուրկաս, Տոպրիչ. **Գանապոս:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Բէնպրիճ, Սէնթ Գաթրիկ, Լասալ. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքօ, Ֆրեզնօ, Մոնթեպելլօ, Փասադինա, Կլէնթելլ, Օրէնճ Բաունթի, Սան Ֆեռնանտօ, Սան Տիէկօ, Ինչընըր Էմիլայր, Սանթա Գլարա, Սաուր Պէյ, Բրեսէնթա Հովիլ, Պրայէնք, Լաս Վեկաս, Ֆինիքս, Ուոլնաթ Բրիք, Նորթ Հոլիվուդ. **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Շիքսօ, Ֆիլադելֆիա, Տիքոնք, Փրովիպընս, Ֆլորիդա, Ալպընի. **Հարաւային Ամերիկա:** Պուէրտօ Ալթօ, Գորդապա, Մոնթեվիդէօ. **Աւստրալիա:** Սիդնի («Անդրանիկ»), Սիդնի («Արար»), Սիդնի («Կամք»), Սիդնի («Արարատ»), Մելբուռն.



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՏԳԱՄԱԲՈՐԱԿԱՆ 11-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

**Ե**րկուշաբթի, 7 Սեպտեմբեր 2015-ի առաւօտեան ժամը 11-ին, «Էրեբունի փլազա» պանդոկի «Էրեբունի» սրահին մէջտեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական 11-րդ Ընդհանուր ժողովին բացման հանդիսութիւնը՝ ներկայութեամբ Հայաստանի Հանրապետութեան նախագահի ներկայացուցիչ՝ Աւետիս Պէրպէրեանի, Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանի, մարմնակրթութեան եւ երիտասարդութեան հարցերու նախարար Գաբրիէլ Ղազարեանի, Ամենայն Հայոց Գարեգին Բ. Վեհափառի ներկայացուցիչ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնէական դաստիարակութեան կեդրոնի տնօրէն Վարդան Եպս. Նաւասարդեանի, Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանի, «Փիւնիկ» հիմնադրամի պատուոյ նախագահ Գաբրիէլ Զեմպէրճեանի, Համագործակցութեան եւ Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ Երեւան ժամանած Հ.Մ.Ը.Մ.Ի աշխարհասփիւռ ընտանիքի 104 ներկայացուցիչներուն:

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանի ողջոյնի խօսքը փոխանցեց նախագահի օգնական Աւետիս Պէրպէրեան: Նախագահը իր խօսքին մէջ կը հաստատէր, որ «Գրեթէ մէկ դարեայ գոյութեան ընթացքում Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը բազմիցս ապացուցել է իր անմնացորդ նուիրումն աշխարհի տարբեր ծայրերում ապրող հայ երիտասարդների հայրենի դաստիարակութեան եւ հայապահպանութեան շնորհակալ գործին»:

Խօսքին շարունակութեան մէջ, նախագահ Սարգսեան ղրտել կու տար, որ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր՝ ահա այն վեհ գաղափարը, որը Միութեան հէնքը հանդիսանալով՝ տակաւին արդիական է մնացել այսօր: Հայոց պետութեան, Արցախ աշխարհի եւ Սփիւռքի առջեւ ծառայած նոր մարտահրաւէրներն աւելի քան երբեք ենթադրում են ուժերի համախմբում եւ խոհեմ գործելակերպ: Մեր արդար դատի ճանապարհը համատեղ ենք անցնելու, մեր յաղթանակի կերտման ուղին միասին ենք հարթելու» (խօսքին ամբողջութիւնը տեսնել առանձին):

Պատգամաւորական ժողովին Ամենայն Հայոց Գարեգին Բ. Վեհափառին ողջոյնները փոխանցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնէական դաստիարակութեան կեդրոնի տնօրէն Վարդան Եպս. Նաւասարդեան: Ան մաղթեց, որ Հ.Մ.Ը.Մ. «Հայ ժողովրդի կեանքում իր ճանաչողութեամբ եւ իր նախնեաց յիշողութեամբ կարողանայ բարձրանալ, թեւածել տիեզերքի երկնակամարում եւ պահանջատիրութեան ու պայքարի ոգով միշտ բարձրացնէ ճղճի-



Եղբ. Գառնիկ Սկրտիչեանի պարգևատրում՝ «Երախտագիտութեան» շքանշանով:




Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ եղբ. Զրաչ Շմալոնեան:



Հայաստանի նախագահին խօսքը կ'ընթերցի Ալետիս Պերպերեան:



Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին պատգամը կ'ընթերցի եղբ. Կարպիս Գապասագալեան:



Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին պատգամը կը փոխանցի Վարդան Եպս. Նալասարդեան:

մուլթեան, նիւթականութեան, ցածրութեան եւ վախկոտութեան մէջ գտնուող իր շրջապատը»:

Այնուհետեւ, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառին օրհնութեան գիրը ընթերցեց ընթացակարգի Կեդրոնական Վարչութեան ատենադպիր եղբ. եղբ. Կարպիս Գապասագալեան: Արամ Ա. Հայրապետական իր գիրով Հ.Մ.Ը.Մ.ի ուշադրութեան կը յանձնէր չորս մտածումներ՝ միութեան ներկայ դրուածքը եւ անոր առնչուած գործելակերպերը վերատեսութեան ենթարկել, տարբեր պայմաններու համապատասխան գործելաոճ որդեգրել, դաստիարակչական իր առաքելութիւնը շեշտել եւ վերանորոգ նուիրումով մնալ մեր ազգային պահանջատիրական պայքարի յառաջապահ դրօշակիրներէն մէկը (Հայրապետական պատգամը տեսնել առանձին):



Սփիւռքի նախարար Զրանոյշ Յակոբեան:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Զրաչ Շմալոնեան: Ան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ վստահութիւն յայտնեց, որ «Մայր հողի վրայ չորրորդ անգամ կայացող Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական սոյն 11-րդ ժողովը մեզ նպատակամղելու, հաւատ ներշնչելու, նուիրական նպատակներն իրականացնելու երաշխիքն է հանդիսանում»:

Ապա, Եղեռնի 100-ամեակի ոգեկոչումներէն քաղուած դասերուն անդրադառնալով, եղբ. Շմալոնեան շեշտեց, որ «Հայրենասիրութիւնը մեր ժողովրդի այն առանձնատկութիւնն է, որը, չնայած բռնազաւթումներին ու բռնասպանութիւններին, անգամ ցեղասպանութիւններին դարեր ի վեր մեզ հայ է պահում: Ու պահելու է յաւերժ: Դրա վառ ապացոյցն է այսօրուայ Ազատ, Անկախ Հայաստանի Հանրապետութիւնը,



հզօր Սփիւռքը, որը մշտապէս Մայր հայրենիքի կողքին է, երեք տարուց 100-ամեակը տօնող Հ.Մ.Ը.Մ-ը, որը հաւատացէք էլ աւելի է ծաղկելու, էլ աւելի ուժեղ եւ գիտակից սերունդներ է դաստիարակելու եւ տանելու է մեր նուիրական նպատակի իրականացմանը» (խօսքը տեսնել էջ 40):

Շմաւոնեան իր խօսքին աւարտին «Ոսկէ Շուշանածաղիկ» շքանշանով պարգեւատրեց եղբ-Օշին Փիրումեանը՝ Հ.Մ.

Ը.Մ-ի Հայաստանի աշխատանքներուն իր ունեցած մեծ ներդրումին համար:

Այս առիթով ներկաները ողջունեց Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան: Ան բարձր գնահատելով Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութիւնը, շեշտեց, որ այս միութիւնը հայ անունը դրոշմած է իր ճակատին: Յակոբեան ընդգծեց, որ միասնականութեամբ անհրաժեշտ է կառուցել մեր հայրենիքը:

ՃԱՆՉՆԱՆՔ



## ԵՂԲ. ԱՔՐԱՀԱՄ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Եղբ. Աքրահամ Ահարոնեան Հ.Մ.Ը.Մ-ի Պուլնոս Այրէսի վաստակաշատ անդամներէն է: 1980-էն սկսեալ ան մաս կազմած

է մասնաճիւղի վարչութեան, իսկ 1988-ին՝ Հ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի անդրանիկ Շրջանային Վարչութեան, որուն ատենապետութիւնը վարած է ձեռընհասօրէն:

Այնուհետեւ, ան Հ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան մաս կազմած է երեք շրջան՝ 1990-1992, 1994-1996 եւ 1997-1999:

Հ.Մ.Ը.Մ-ի 7-րդ Պատգամաւորական ժողովին եղբ. Աքրահամ ընտրուած է միութեան Կեդրոնական Վարչութեան անդամ: Երկու քառամեակ՝ 1999-2003 եւ 2003-2007 ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան, իբրեւ Հարաւային Ամերիկայի ներկայացուցիչ:

Միութեանական իր բեղուն կեանքին մէջ, ան մասնակցած է Հ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի Շրջանային գրեթէ բոլոր ժողովներուն եւ միութեան Պատգամաւորական 3-րդ, 7-րդ, 8-րդ եւ 9-րդ ժողովներուն: Հրաւիրուած է նաեւ 11-րդ Պատգամաւորական ժողովին:

Վարչական իր գործունէութեան կողքին, եղբ. Աքրահամ վերջին տասնամեակին ունեցած է մտաւորական գործունէութիւն՝ իր նպաստը բերելով սպաներէն լեզուով Հ.Մ.Ը.Մ-ական գրականութեան մշակման եւ տարածման: Ան սպաներէնի թարգմանած է եղբ. Կարօ Թիւթիւնճեանի «Հ.Մ.Ը.Մ. եւ Ապրիլ 24» աշխատասիրութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ-ի ծանօթացումը կատարող շարք մը գրքոյկներ:

Եղբ. Աքրահամին երախտաշատ աշխատանքը եղած է միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրականներու առաջին եւ երկրորդ հատորներուն թարգմանութիւնն ու հրատարակութիւնը 2009-ին եւ 2011-ին: Եղբայրը մինչեւ օրս պարտաճանաչ կերպով կը թարգմանէ պաշտօնաթերթին բոլոր խմբագրականները եւ զանոնք կը պատրաստէ հրատարակութեան:

Իր վերջին եւ կարեւորագոյն աշխատանքը եղաւ Հ.Մ.Ը.Մ-ի Պուլնոս Այրէսի մասնաճիւղին 85-ամեայ պատմութիւնը ներկայացնող պատմագիրքին պատրաստութիւնը: Գիրքը լոյս տեսաւ 2015-ին եւ արժանացաւ Հ.Մ.Ը.Մ-ականներու մեծ ուշադրութեան եւ գնահատանքին:



## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ Հ.Մ.Ը.Մ.Ի 11-ՐԴ ՊԱՏԳԱՄԱԲՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

**Մ**եծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ, քրիստոնէական սիրով եւ ազգային ապրումներով կ'ողջունենք ձեզ: Ահա դարձեալ, որպէս Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ընդհանուր Ժողով, հաւաքուած էք միասնաբար քննելու ու գնահատելու անցնող շրջանի ձեր կազմակերպութեան աշխատանքը եւ ապագայատեսիլ մօտեցումով ծրագրելու յառաջիկայ շրջանի ձեր գործունէութիւնը:



թիւնը ու մեծութիւնը: Ընկերա-բարոյական տազնապներով լեցուն ներկայ ընկերութեան մէջ, որուն ազդեցութեան տակ կ'ապրի նաեւ մեր սերունդը, առաւել եւս Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է շեշտէ իր դաստիարակչական առաքելութիւնը:

դ) Իր դաստիարակչական առաքելութեան առընթեր, Հ.Մ.Ը.Մ.ը նաեւ մեր ազգի գերագոյն ձգտումներուն իրագործման բերած է իր կարեւոր ներդրումը՝ պահանջատիրական ոգին ներարկելով նոր սերունդներու կեանքին մէջ: Մեր սպասումն է, որ

Արդարեւ, մօտէն ճանչցած ըլլալով Հ.Մ.Ը.Մ.ը իր կառոյցով, բնոյթով ու նպատակով, այս առիթով կ'ուզենք ձեր ազնիւ ուշադրութեան յանձնել մի քանի մտածումներ.-

ա) Առաջին հերթին, որպէս կազմակերպութիւն, Հ.Մ.Ը.Մ.ը կոչուած է իր կազմակերպչական ներկայ դրուածքը եւ անոր առնչուած գործելակերպերը վերատեսութեան ենթարկելու, նկատի ունենալով մեզ շրջապատող կեանքի յարափոփոխ պայմանները: Ոեւէ հաւաքականութիւն, որպէսզի չկորսնցնէ իր կենսունակութիւնը ու այժմէականութիւնը, անհրաժեշտ է որ վերանորոգութեան մնայուն ընթացքի մէջ ըլլայ՝ ընկերութեան պայմաններուն ու սպասումներուն համահունչ դարձնելով իր գործելակերպը:

բ) Իր բնոյթով ու գործունէութեամբ համահայկական նկարագիր ու տարողութիւն ունենալով, Հ.Մ.Ը.Մ.ը կոչուած է տարբեր պայմաններուն համապատասխան գործելաոճ որդեգրելու: Մեր երիտասարդները ապրելով ընկերային տարբեր պայմաններու մէջ, տարբեր մօտեցումներ ու կարծիքներ ունին: Հետեւաբար, Հ.Մ.Ը.Մ.ը կարեւորութեամբ պէտք է նկատի ունենայ մեր գաղութներու իւրայատկութիւնները:

գ) Ինչպէս յաճախ կը յիշեցնենք, Հ.Մ.Ը.Մ.ը սոսկ մարզական միութիւն մը չէ, լոկ մարզական նպատակներ հետապնդող: Ըստ ձեռի այդպէս ըլլալով, ըստ էութեան Հ.Մ.Ը.Մ.ը կոչուած է մեր նոր սերունդներուն բարոյական ու ազգային դաստիարակութիւն ջամբել: Այլ խօսքով՝ դպրոց է եղած Հ.Մ.Ը.Մ.ը: Հո՛ս է Հ.Մ.Ը.Մ.ին իւրայատկու-

Հ.Մ.Ը.Մ.ը վերանորոգ նուիրումով շարունակէ մնալ մեր ազգային պահանջատիրական պայքարի յառաջապահ դրօշակիրներէն մէկը:

Մեր ծնողները իրենց զաւակները միշտ վստահած են Հ.Մ.Ը.Մ.ին, որովհետեւ զայն նկատած են կառոյցէն անդին՝ հայակերտ առաքելութիւն: Այս յանձնառութեամբ Հ.Մ.Ը.Մ.ը կոչուած է վերանորոգելու ու վերակազմակերպելու իր առաքելութիւնը մեր ժողովուրդի կեանքէն ներս:

Ահա այս սպասումով Մեր հայրական սէրն ու օրհնութիւնը կը փոխանցենք Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքի բոլոր անդամներուն: Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ միշտ զօրեղ ու կենսունակ պահէ Հ.Մ.Ը.Մ.ը, որպէսզի ան կարենայ իրագործել իրեն վստահուած համազգային առաքելութիւնը:

Հայրական ջերմ սիրով,

Աղօթարար  
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

21 Օգոստոս 2015  
Անթիլիաս, Լիբանան



Ապա, ներկաներուն անակնկալ մը հրամցնելով՝ Հրանոյշ Յակոբեան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենա-

պետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանը պարգեւատրեց Հայաստանի Հանրապետութեան նախագահի «Երախտագիտութեան» շքանշանով՝ «Հայրենիք-Սփիւռք կապերու ամրապնդման գործին ներդրած աւանդին համար»:



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ եղբ. Յրաչ Շմաւոնեան «Ոսկէ շուշանածաղիկ» շքանշանով կը պարգեւատրէ եղբ. Օշին Փիրումեանը:

Հ.Յ.Դ. Բիւրոյի խօսքը փոխանցեց Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան: Ան նշեց Հ.Մ.Ը.Մ.ի ազգային դերակատարութիւնը մեր կեանքին մէջ եւ ըսաւ. «Մեր գործը ազգի կազմակերպումն է: Ազգը մէկ ամբողջականութիւն է: Ոչ մի ժամանակ չի կարող Հ.Մ.Ը.Մ.ը հանգիստ քնի, եթէ կազմակերպութիւնը ամբողջական, հայկական չի: Այսինքն՝ հայկական իրականութիւնը պարտադրում է, Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը պարտաւորեցնում է, որ նա մտածի իր սփռուածութեան քարտէսը ամբողջացնելու համար: Մտածի եւ աշխատի տարածուելու եւ ամէնուր ներկայ լինելու մասին»:



Հ.Մ.Ա.Կ.ի յուշանուէրի փոխանցում Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

Մարգարեան անդրադարձաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Հ.Յ.Դ.ին ուղեկից կազմակերպութիւն ըլլալու հասկացողութեան եւ շեշտեց, որ «Մենք նոյն ուղու վրայ ենք, նոյն արժէքներով ենք առաջնորդուում: Նոյն նպատակներն ենք հետապնդում: Մենք քաղաքական դաշտում, դուք՝ հասարակական դաշտում: Մենք մէկս միւսով պէտք է հզօրանանք եւ մէկս միւսով պէտք է աւելի դիւրութիւն ունենանք աշխատելու: Ձեր գործը համահայկական գործ է, ազգային գործ է, քաղաքացիական հասարակութիւն ձեւաւորելու գործ է, եւ այս գործը մեծ առաքինութիւն է պահանջում, սա մեծ աշխատանք է, որ չպէտք է կիսատ թողնենք» (խօսքը տեսնել էջ 37):

Վերջին խօսք առնողը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան ողջունեց հիւրերն ու ներկաները եւ գոհունակութեամբ հաստատեց, որ «Նախորդ Պատգամաւորական Ժողովէն ասդին շատ բան փոխուած է մեր կեանքին մէջ: ... Հայաս-



տանեան մեր կառույցը անցնող չորս տարիներուն ապրեցաւ քանակական եւ որակական ուսուում: Հ.Մ.Ը.Մ. իր արմատները ամրապնդեց հայրենի հողին մէջ: Միութիւնը փայլուն յաջողութեամբ կատարեց Համա-Հ.Մ.Ը.Մ.ական իր 9-րդ մարզախաղերը եւ 10-րդ բանակումը: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-ը օժտուեցաւ նոր եւ յարմարաւէտ կեդրոնով մը, իսկ մեծագոյն իրագործումը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Բիւրականի բանակավայրին ընդարձակումը եւ վերանորոգումը հայրենի պետութեան եւ «Փիւնիկ» մարզկային պաշարներու հիմնադրամին օժանդակութեամբ»:

Շարունակելով, եղբ. Մկրտիչեան ընդունեց, որ ուրախալի իրագործումներու կողքին, միութիւնը բաժնեկցեցաւ մեր ժողովուրդին վիճակուած դժուարին պահերը: Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ մասնաճիւղերը իրենց ընթացիկ գործունէութիւնը առկախելով նուիրուեցան մեր ժողովուրդի ծառայութեան գործին: Տուն նահատակներ, բայց մնացին պատնէշի վրայ, հաւատարիմ իրենց խոստումին եւ դաւանանքին: Դժուարին օրեր ապրեցան նաեւ միութեան իրաքի մասնաճիւղերը, որոնքՔերքուկի, Մուսուլի եւ Պաղտատի մէջ ցուցաբերեցին ազգային գիտակցութեան եւ յանձնառութեան բարձր ոգի: Այսպէս, պայմաններու բերումով, մեծաթիւ Հ.Մ.Ը.Մ.ականներ լքեցին իրենց անապահով շրջանները եւ անցան սփիւռքեան տարբեր ուստաններ, բայց ուր որ գացին, անոնք իրենցհետ տարին Հ.Մ.Ը.Մ.ն ու Հ.Մ.Ը.Մ.ականութիւնը:

Հետեւաբար, ընդգծեց եղբ. Մկրտիչեան. «Պատմութիւնը կրկնեց ինքզինք: 1918-ին Հ.Մ.Ը.Մ. հազիւ հիմնուած զբաղեցաւ որբահաւաքի եւ գաղութներու երիտասարդութեան կազմակերպման աշխատանքով: Այսօր որբեր չկան, սակայն որբացած գաղութներ կան: Հ.Մ.Ը.Մ. դարձեալ գործի վրայ է: Հայ երիտասարդութիւն կը համախմբէ, հայեցի դաստիարակութեան միջավայր եւ մթնոլորտ կը ըստեղծէ: Սկսուտութեան եւ մարզախաղերու ճամբով երի-

տասարդները ձուլման վտանգէ կը փրկէ, հայութեան եւ Հայաստանին կը կապէ» (խօսքը տեսնել էջ 38):



Ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան անդամները պարգևատրեալ իրենց ատենապետին հետ:



Հարաւային Ամերիկայի պատգամաւորները պարգևատրեալ իրենց եղբօր հետ:

### ԳԱՔՐԻԷԼ ՉԵՄՊԵՐՃԵԱՆ

Արմատներով Այնթապէն, Ծնունդով Յալէպէն, գործունէութեամբ հոն, ուր հայ մշակոյթը, հայ մա-

ՃԱՆՉՆԱԼՔ



մուլը, հայ կըրթ ու թիւնը պէտք ունի աջակցութեան՝ Գաբրիէլ Չեմպերճեան հայտնութեան Ծանօթ է ճիշդ գործին, ճիշդ աշխատանքին իր կատարած

մեծագումար օժանդակութիւններով:

Իբրեւ «Փիւնիկ» հիմնադրամի համանախագահ, Գաբրիէլ Չեմպերճեան որեւէ ատեն չէ զլացած իր մասնակցութիւնը այն աշխատանքներուն, որոնք հայը կը կապեն իր հայրենիքին եւ հիմնովին կը նպաստեն Հայաստան-Սփիւռք համագործակցութեան: Հայ եկեղեցին, հայ դպրոցը, հայ մամուլը եւ հայ միութիւնը Գաբրիէլ Չեմպերճեանին համար հանդիսացած են այն անփոխարինելի եւ կարելորագոյն միջավայրերը, ուր հայ երիտասարդը ստացած է ազգային դաստիարակութիւն եւ հայրենիքին ծառայելու կրթութիւն:

Մեծ է Գաբրիէլ Չեմպերճեանին երախտիքը Հ.Մ.-Ը.Մ.ի սկաուտական աշխատանքներուն ընդհանրապէս եւ Բիւրականի բանակավայրին յատկապէս: Անոր կատարած բազմաթիւ օժանդակութիւններէն կ'արժէ յիշել Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի սկաուտական շէփորախումբին սարքերու ապահովումը եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ին վրաններու նուիրումը:

Չեմպերճեանի «Փիւնիկ» հիմնադրամը 280 հազար ամ. տոլարով իր աջակցութիւնը բերաւ Բիւրականի բանակավայրի ընդարձակման եւ վերանորոգման աշխատանքներուն:

Խօսքին վերջին բաժինով, եղբ. Մկրտիչեան յայտնեց, թէ նշակալից այս առիթով Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը որոշած է «Արժանեաց» շքանշանով պարգեւատրել Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Աբրահամ Ահարոնեանը եւ «Արտակարգ» շքանշանով պատուեց «Փիւնիկ» հիմնադրամի պատուոյ նախագահ Գաբրիէլ Չեմպերճեանը (պարգեւատրեալներուն կենսագրական գիծերը տեսնել առանձին)՝ միութեան ցուցաբերած իր նկատառելի օժանդակութեան համար:

Հուսկ, բացման պաշտօնական հանդիսութիւնը վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերգի կատարումով:

### ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵՆԷՆ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԵՏՔ՝



## ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Պատգամաւորական Ժողովի բացման պաշտօնական հանդիսութեան անմիջապէս ետք, Աղվերանի Ժողովատեղին ուղղուելէ առաջ, Ժողովին ամբողջ կազմը, Երկուշաբթի, 7 Սեպտեմբերի յետմիջօրէի ժամը 3-ին, այցելեց Ծիծեռնակաբերդ՝ յարգանքի իր տուրքը տալու Հայոց Յեղապանութեան մէկուկէս միլիոն նահատակներուն, որոնք անցնող 100 տարիներուն ապրեցան իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի սրտին ու մտքին մէջ, արեան ու պահանջատիրութեան մէջ: Ապրեցան՝ Հ.Մ.Ը.Մ.ի հետապնդած ազգային նպատակներուն մէջ, յաջողութիւններուն եւ տեսլականներուն մէջ:

Ծիծեռնակաբերդի մուտքին, Պատգամաւորական Ժողովի կազմը ընդունեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի երկշաբթի պատուի կանգնած սկաուտները:

Յոռւ շա կ թ թ ղ հասնելով, Հ.Մ.-



Ը.Մ.ի մեծ ընտանիքին անունով ծաղկեպսակ գետեղեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրները: Ապա, բոլորը յամբարայլ մուտք գործեցին յուշակոթողէն ներս եւ բոլորուեցան անմար կրակին շուրջ:

Այս առիթով մտածումներու շարան մը տողանցեց այցելուներու միտքերուն եւ հոգիներուն մէջ: Բոլորը եկած էին հաստատելու, որ իբրեւ 97-ամեայ միութեան մը անդամները, իրենք կը յիշեն մեր նահատակները եւ կը պահանջեն անոնց անմեռ կտակին իրականացումը: Մեր նահատակներուն կտակը մեզի կը թելադրէ քաջաբար դիմազրաւել մեր դէմ ցցուող բոլոր դժուարութիւնները: Հ.Մ.Ը.Մ.ականի մեր երդումին տէր կանգնելը կը թելադրէ անխախտ պահել ազգային մեր դիմագիծը, հաւաքական կամքը եւ միութեան կողմը:

Այնուհետեւ, ներկաները երգեցին «Յառաջ նահատակ» քայլերգը, իբրեւ «Տորմիղ հրաթեւ, կամաւոր բանակ» ազգային իրենց պահանջատիրութեան տէր կանգնելու խոստումով:



ՄԻՈՒԹԵԱՆ 11-ՐԴ ՊԱՏՊԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ Կ՝ՈՐՈՇԷ՝

# Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԸ ԴԻՄԱԲՈՐԵԼ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԶՕՐԱՑՄԱՆ ԵՒ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՈՎ

Հ.Մ.Ը.Մ.Ի 97 փարիներու պայմանագրի մէջ նոր էջ մը բացաւ 11-րդ Պատգամաւորական Ժողովը, որ փետի ունեցաւ 7-12 Սեպտեմբեր 2015-ին, Ադիերանի մէջ, Հայաստան:

Հին էջը փակուեցաւ վերջին փարիներուն միութեան Հայաստանի մէջ ունեցած նուաճումներով (Քիւրականի բանակաւայր, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի եռայարկ նոր կէտրոն, Հայկ Յովսէփեան բանակաւայր, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Արովեանի գրասենեակ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ներկայացուցիչի Սկաուտական Համաշխարհային Շարժումի Քիւրոյի անդամ ընկրտութիւն, հայրենիքի մէջ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու եւ բանակումի փայլուն իրագործում եւ այլն) եւ նոր էջը բացուեցաւ դէպի 100-ամեակի մինչեւ 2018 Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպական հզօրացման եւ փարսածման յուսալի ծրագիրներով, որոնք ազգակերպման ու հայակերպման նպատակներով ի մի պիտի խմբեն աշխարհի չորս ծագերուն ցրուած հայերը եւ յարկապէս անոնք, որոնք Միջին Արեւելքի արիւնալի փրկանքի փրկանքներէն խոյս փայտով այսօր ապաստանած են եւրոպական անժամօք ուրախներ:

**11**-րդ Պատգամաւորական Ժողովին նիստերը երկարեցան չորս օրերու վրայ եւ ընդգրկեցին մարզախաղերու թէ՛ սկաուտութեան ճամբով նորահաս սերունդներու հայեցի առողջ դաստիարակութեան աւելցումը զիստուր հարցերը: Ժողովը լայնօրէն անդրադարձաւ Իրաքէն, Սուրիայէն եւ Լիբանանէն կեդրոնական եւ հիւսիսային Եւրոպա գաղթող հայերու պարագաներուն եւ համապատասխան քայլեր որդեգրեց անոնց համախմբման եւ կազմակերպման համար: Ադվերանի «Ռեսթ Ուեսթըն» հիւրանոցին մէջ, նիստերը ընթացք առին Երկուշաբթի, 7 Սեպտեմբերի երե-

կոյեան ժամը 9-30-ին, Պատգամաւորական Ժողովին պաշտօնական բացումէն եւ պատգամաւորներու Ծիծեռնակաբերդ այցելութենէն ետք: Ժողովին բացումը կատարեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, որ նախ մէկ վայրկեան յօտընկալ լուծեան հրաւիրեց ներկաները՝ յարգելու համար մեզմէ յաւատ քաճուած Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակը: Ապա, փոխան բացման խօսքի, ան ընթացքեց «Մարզիկ» պաշտօնաթերթի վերջին թիւի «Չափ ու սահման» խորագրեալ խմբագրականը, որ կը շեշտէր միութեանական արժեքներով գործելու անհրաժեշտութիւնը:



Առժամեայ դիւանը բաղկացաւ եղբ. Մոսիկ Թոփուզեանէ՝ ատենապետ (Գանատա) եւ քոյր Թայլին Օրտողլեանէ՝ քարտուղար (Լիբանան): Լիազօրագիրներու ստուգումէն ի յայտ դարձաւ, որ ժողովին ներկայ էին միութեան Շրջանային եւ Մեկուսի 20 շրջաններէ 65 պատգամաւորներ: Գլխաւոր բացականչեցին Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի, Պուլկարիոյ, Աւստրիոյ ներկայացուցիչները: Իսկ առաջին անգամ ըլլալով նման ժողովի մը կը մասնակցէին Սթոքհոլմի եւ Սոտերթելիոյ (Շուէտ) նորաստեղծ շրջանները: Ընթացաւ Կեդրոնական Վարչութիւնը ներկայացուած էր լիազօր ներկայացուցիչով մը, իսկ ի պաշտօնէ եւ խորհրդակցական ձայնով կը մասնակցէին 34 հրաւիրեալներ, ինչպէս նաեւ՝ ընթացաւ Կեդրոնական Վարչութեան 12 անդամներ (կամքէ անկախ պատճառներով կը բացակայէր եղբ. Յակոբ Թիւֆէնկճեան): Այս հաստատումները կատարելէ եւ շրջաններու նիւթական պարտաւորութիւններուն փակուած ըլլալը ստուգելէ ետք, ժողովը նկատուեցաւ օրինաւոր եւ նախքան իր աշխատանքներուն սկսիլը ընթացքեց ժողովին հրաւիրուած, սակայն բանաւոր կերպով բացակայող Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Բիւզանդ Թորիկեանի ողջոյնի գիրը՝ ուղղուած Պատգամաւորական Ժողովին դիւանին ու կազմին: Մնայուն դիւանի ընտրութեան օրակարգին, առժամեայ դիւանի կազմին վրայ աւելցան եղբայրներ Վաչէ Նաճարեան՝ ատենապետ (Լիբանան), Տիրան Շահինեան (Գանատա) եւ

Շանթ Ժամկոչեան (Արեւելեան Մ. Նահանգներ)՝ քարտուղարներ: Ապա, ընտրուեցան արխիւային, հաշուեքննիչ, բանաձեւի եւ քուէախոյզ յանձնախումբերու անդամները: **ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ** Երեքշաբթի, 8 Սեպտեմբերի առաւօտուն, Պատգամաւորական Ժողովը իր աշխատանքները սկսաւ ընթացաւոր Կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութեան (Սեպտեմբեր 2011-Սեպտեմբեր 2015) քննարկումով: Նիւթական տեղեկագիրը յատուկ պատասառի մը վրայ հեռափոխուած ներկայացուեցաւ տեղւոյն վրայ, իսկ բարոյական տեղեկագիրը նախապէս համացանցով պատգամաւորներու տրամադրութեան տակ դրուած ըլլալով, ժողովականները անցան լուսաբանական հարցումներու բաժնին: Կեդրոնական Վարչութիւնը իր ատենապետին ճամբով լուսաբանական հարցումներուն պատասխանեց յաջորդ նիստով: Մինչ այդ, արհեստագիտական տեղեկատուութեան յանձնախումբը ներկայացուց վիճակագրական ամփոփ պատկերներ՝ շրջաններու անդամական թիւերուն մասին: Պատգամաւորական Ժողովին չորրորդ նիստը յատկացուեցաւ Կեդրոնական Վարչութեան նիւթական տեղեկագրին շուրջ լուսաբանական հարցումներու եւ պատասխաններու: Քառամեայ տեղեկագիրին քննարկումէն ի յայտ եկաւ, որ անցնող չորս տարիներուն միութիւնը կազմակերպական զգալի աշխուժութիւն ապրած է Եւրոպայի մէջ: Շուէտի անդամական կազմը բազմաճաւղով, շրջանը բաժնուած է երեք

**ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ  
Հ.Մ.Ը.Մ.Ի 104 ՄԱՍՆԱԾԻՂԵՐՈՒ**

Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ա.Ս.Կ.	Քաղաք	Հիմն.	Սկաուտ Անդամ Ընդհ.		
			724	211	935
Երեւան	Կենտրոն	1989	74	24	98
Երեւան	Մալաթիա	1990	56	8	64
Երեւան	Զէյթուն	1990	32	3	35
Վահան Չերազ	Գիւմրի	1990	21	14	35
Աբովեան	Աբովեան	1991	46	19	65
Հրազդան	Հրազդան	1992	24	9	33
Երեւան	Էրեբունի	1992	32	9	41
Վարդան Բախշեան	Արմաւիր	1992	193	62	255
Վաչէ	Էջմիածին	1993	57	18	75
Յ. Առուստամեան	Չարենցաւան	1993	31	13	44
Մարտունի	Մարտունի	2012	50	15	65
Երեւան	Կոմիտաս	2014	70	6	76
Վետի	Վետի	2014	38	11	49

ՋԱԻԱՆՔ	Հիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Ախալքալաք	2001		Կազմաւոյծ		
Ախալցխա	2001		Կազմաւոյծ		

ՌՈՒՄԻԱ	Հիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Մոսկուա	2008		Կազմաւոյծ		

ԼԻԲԱՆԱՆ	Հիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		1285*	850**	1620	3755
Պէյրուս	1924	265	331	375	971
Չահլէ	1927	22	2	30	54
Թրիփոլի	1929	-	30	45	75
Պ. Համուտ	1935	243	89	365	697
Այնճար	1940	294	56	125	475
Ծիւնի	1950	-	33	75	108
Անթիլիաս	1970	233	149	400	782
Ժըտէյտէ	1974	175	44	90	309
Պաուշրիէ	1998	17	50	75	142
Ռաուտա	2011	36	66	40	142

\* Այս թիւէն դուրս կը մնան Սկ. Շրջ. խմբապետութիւնը, Շրջանային շեփորախումբը եւ Այնճարի շեփորախումբը:  
\*\* Թիւը նկատի չունի Շրջանային Վարչութեան ֆութպոլի ակադեմիային ֆութպոլիստները:

ՍՈՒՐԻԱ*	Հիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		720	420	390	1530
Հալէպ	1925	300	250	200	750
Դամասկոս	1925	100	40	60	200
Լաթաքիա	1926	150	50	50	250
Գամիշլի	1931	100	60	60	220
Քեսապ	1994	70	20	20	110

\* Նկատի ունենալով երկրին պայմանները՝ շրջանին թիւը անկայուն է:

մասնաճիւղի՝ Սթոքհոլմ, Վեսթերոս եւ Սոտերթելիա: Հոլանտան ունեցած է իր երկրորդ մասնաճիւղը՝ Ալքմարը եւ կը պատրաստուի ունենալու երրորդը՝ Առնհէմի մէջ: Գերմանիան Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին միացած է Միլենիխի նորաստեղծ մասնաճիւղով, իսկ Ֆրանսայի Վալանս ու Ալստրիոյ Վիեննայի մասնաճիւղերը նոր թափ ու ծաւալ տուած են իրենց աշխատանքներուն:

Մասնաճիւղերու եւ միաւորներու պարագային, միութիւնը անցնող չորս տարիներուն օժտուած է վեց նոր մասնաճիւղերով՝ Ռաուտա (2011), Վեսթերոս (2014), Ալքմար (2014), Սթոքհոլմ (2015), Սոտերթելիա (2015) եւ Միլենիխ (2015), որուն դիմաց հինգ մասնաճիւղեր իրենց դռները փակած են վերջնականապէս՝ Միլանո, Պոլտափէշթ, Սոլթ Լէյք Սիթի, Քոլորատո եւ Աշտարակ:

Թիւերու լեզուով խօսելով, զգալի յառաջդիմութիւն արձանագրուած է յունախօս աշխարհին մէջ: Յունաստանի մարզիկներուն թիւը 144-էն բարձրացած է 396-ի, իսկ Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիոյ մէջ, սկաուտական նորաստեղծ շարժումը իր շուրջ համախմբած է 53 սկաուտներ:

Եւրոպայէն դուրս, Հայաստան ունեցած է սկաուտական շարքերու 6.6 առ հարիւրի թիւի աճ: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. այսօր կը հաշուէ 724 սկաուտ: Հայաստանի միաւորներէն մեծագոյն թիւը ունի Արմաւիրի Վարդան Բախշեան միաւորը՝ 193 սկաուտ: Չորս տարի առաջ միաւորը ունէր 58 սկաուտ: Թիւի յաւելումներ կան նաեւ Էջմիածինի, Մարտունիի եւ Վետիի մէջ, մինչդեռ մայրաքաղաք Երեւանի մէջ արձանագրուած է սկաուտական թիւի 20 առ հարիւրի նուազում:

Միջին Արեւելքի մէջ, Ազեքսանդրիա, Գահիրէ եւ Քուէյթ պահած են անցեալի իրենց թիւերը: Չգալիօրէն նուազած են սակայն Երոսաղէմի, Ամմանի եւ Պաղտատի մասնաճիւղերուն անդամական թիւերը: Սուրիոյ պարագային, երկրին տազնապալի կացութիւնը ծանօթ է բոլորին: Մասնաճիւղեր իրենց գործունէութիւնը կը շարունակեն իրենց կարելիութեան սահմաններուն մէջ, անշուշտ՝ նախկինէն նուազ թիւերով: Նկատելի է ընդհանուր թիւի շուրջ 50 առ հարիւրի անկում: Շրջանը այսօր կը հաշուէ 720 սկաուտ, 420 մարզիկ եւ 390 անդամ, ընդհանուրը՝ 1530 թիւով: Նախորդ քառամեա-



կին շրջանը կը հաշուէր 2920 Հ.Մ.Ը.Մ.ական (1325 սկաուտ, 830 մարզիկ, 390 անդամ):

Միջին Արեւելքի միակ յուսատու շրջանը Լիբանանն է, որ անցնող քառամեակին ունեցած է մասնաճիւղային եւ անդամական թիւի աճ: 2011-ին շրջանը օժտուած է իր 10-րդ մասնաճիւղով՝ Ռաուտայի մէջ: Սկաուտութեան թիւը արձանագրած է 17 առ հարիւրի աճ՝ հասնելով 1285-ի: Այդ թիւին կարեւոր մէկ մասը Լիբանան հաստատուած նախկին հալէպահայ սկաուտներ են: Մարզիկներու թիւը 982-էն նահանջած է 850-ի, սակայն անդամներու թիւը կրած է փոքր յաւելում մը՝ 1595-էն բարձրանալով 1620-ի: Այսօր, Լիբանանի շրջանը կը հաշուէ 3755 Հ.Մ.Ը.Մ.ական:

Արեւմտեան կողմն աշխարհի, Գանատայի շրջանը ունեցած է սկաուտներու եւ մարզիկներու թիւի աճ: Սկաուտութեան թիւը 683-էն բարձրացած է 718-ի, իսկ մարզիկներուն թիւը՝ 613-էն 645-ի: Ամերիկաներու պարագային, դրական փոփոխութիւնները կը բացակային: Արեւելեան շրջանին 10 մասնաճիւղերը նախկին 469 սկաուտի փոխարէն այսօր ունին 336 սկաուտ (28 առ հարիւրի նահանջ), իսկ Արեւմտեան շրջանի 18 մասնաճիւղերը՝ նախկին 1333 սկաուտի փոխարէն՝ 1149 սկաուտ (13.8 առ հարիւրի նահանջ): Անցնող քառամեակին, Արեւմտեան շրջանը նուազում ունեցած է նաեւ մարզիկներու եւ պարզ անդամներու թիւերու: Այսօր շրջանը կը հաշուէ 4008 մարզիկ (նախկին 5228-ի փոխարէն) եւ 862 անդամ (նախկին 1092-ի փոխարէն): Պատկերը նոյնը չէ Արեւելեան շրջանին մէջ, ուր մարզիկներու թիւը 365-էն բարձրացած է 452-ի, իսկ պարզ անդամներուն թիւը 319-էն նուազած է 234-ի: Հարաւային Ամերիկան արձանագրած է ընդհանուր թիւի աննշան յաւելում (չորս տարուան մէջ եօթը յաւելեալ անդամ): Մարզիկներու թիւը հոս եւս արձանագրած է նուազում (268-էն 235): Յաւելումը եղած է մարզիկներու (336-էն 345) եւ պարզ անդամներու (752-էն 783) պարագային:

Ամէնէն ուշագրաւ փոփոխութիւնները արձանագրուած են Աւստրալիոյ մէջ, ուր թէեւ 5 մասնաճիւղերէն մէկը կը մնայ կազմալոյծ, սակայն մնացեալ չորս մասնաճիւղերը ունեցած են թիւի զգալի աճ: Շրջանին սկաուտութեան թիւը



**ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ  
Հ.Մ.Ը.Մ.Ի 104 ՄԱՍՆԱՃԻՂԵՐՈՒ**

Ս. ԱՐԵՒԵԼՔ	Հիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	ԸՆԴԻ.
		485	334	986	1805
Աղեքսանդրիա*	1912	12	12	125	149
Գահիրէ*	1914	63	52	212	327
Երուսաղէմ	1935	62	19	110	191
Հայֆա	1937	-	15	30	45
Եաֆա	1937	-	12	28	40
Ամման	1937	48	-	56	104
Քուէթ	1983	200	80	160	440
Պաղտատ**	1949	100	144	265	509
Մուսուլ **	1960		Կազմալոյծ		

\* Աղեքսանդրիոյ «Կամք»ը եւ Գահիրէի «Արարատ»ը Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին միացած 1974ին:

\*\* 35 տարուան ընդմիջումէ ետք Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին միացած 2003ին:

ԿԻՊՐՈՍ*	Հիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	ԸՆԴԻ.
Նիկոսիա	1927	53	24	151	228

\* 2003ին վերամիացած Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին:

ՅՈՒՆԱՍՏԱՆ	Հիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	ԸՆԴԻ.
		186	396	295	877
Աթէնք	1924	89	240	125	454
Գոքինիա	1924	97	121	85	303
Սելանիկ	1928	-	35	85	120

ԵՒՐՈՊԱ	Հիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	ԸՆԴԻ.
		241	101	358	700
Լոնտոն	1979	85	46	108	239
Վիեննա	1985	28	-	26	54
Ալմէլօ	1996	74	43	79	196
Ալքմար	2014	14	12	80	106
Միւնիխ	2015	40	-	65	105

ՖՐԱՆՍԱ	Հիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	ԸՆԴԻ.
		102	440	139	681
Փարիզ	1977	50	50	39	139
Վալանս	1983	52	40	50	142
Մարսէյ- «Արծի»*	1924	-	350	50	400

\* 2007ին վերամիացած Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին:

ՇՈՒԷՏ	Հիմն.	Սկաուտ	Մարզիկ	Անդամ	ԸՆԴԻ.
		123	78	230	431
Վեսթերոս	2014		Կազմալոյծ		
Սոտերթելիա	2015	65	63	120	248
Սթոքհոլմ	2015	58	15	110	183

**ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ  
Հ.Մ.Ը.Մ.Ի 104 ՄԱՍՆԱԳԻՂԵՐՈՒ**

ՊՈՒԿԱՐԻԱ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		165		80	245
Սոֆիա	1991	38	-	20	58
Ռուստ	1991	33	-	15	48
Փլովտիվ	1992	10	-	20	30
Վառնա	1992	40	-	15	55
ՇուսեՆ	1997	15	-	-	15
Պուրկաս	1999	29	-	10	39
Տոպրիչ	1999		Կազմալոյծ		

ԳԱՆԱՏԱ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		718	645	367	1730
Մոնթրեալ	1958	392	252	62	706
Համիլթոն	1968	-	12	7	19
Թորոնթո	1969	256	256	128	640
Քեմպրիժ	1977	70	103	49	222
Ալեք Քաթրինգ	1986		Կազմալոյծ		
Լաւալ	2010	-	22	121	143

ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. Ն.	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		336	452	234	1022
Ուաշինգթոն	1971	50	60	31	141
Պոսթըն	1973	80	100	50	230
Նիւ Եորք	1975	15	30	15	60
Նիւ Ճորձի	1975	45	80	20	145
Շիքսկո	1975	40	50	10	100
Ֆիլադելֆիա	1975	25	35	9	69
Տիբորոյթ	1976	40	60	35	135
Փրովիդենս	1981	41	37	13	91
Ֆլորիտա	1981	-	-	26	26
Ալաբամա	1986	-	-	25	25

160-էն բարձրացած է 228-ի, իսկ մարզիկներուն թիւը՝ 365-էն՝ 822-ի:

Իբրեւ ընդհանուր գնահատական, անցնող չորս տարիներուն Հ.Մ.Ը.Մ. ունեցած է 2163 անդամի կորուստ (նախորդ քառամեակի ընդհանուր թիւին 8.73 առ հարիւրի նուազում): Միութիւնը այսօր կը հաշուէ 104 մասնաճիւղեր եւ միաւորներ, որոնցմէ եօթն կը գտնուի կազմալոյծ վիճակի մէջ՝ Ախալքալաք, Ախալցխա (Ջաւախք), Մոսկուա (Ռուսիա), Մոստուլ (Իրաք), Տոպրիչ (Պուկարիա), Սատլի Պէյ (Արեւմտեան Մ. Նահանգներ) եւ Միտնիի «Կամք» մասնաճիւղ (Աւստրալիա):

Սեպտեմբեր 2015-ի տուեալներով, Հ.Մ.Ը.Մ. իր 104 մասնաճիւղերով կը հաշուէ 6750 սկառուտ, 8915 մարզիկ եւ 6940 անդամ, ընդամենը՝ 22605 Հ.Մ.Ը.Մ.ական: 2011-ի ընդհանուր թիւին բաղդատած (24768)՝ կորուստները եղած են հետեւեալ ձեւով.՝ 351 սկառուտ, 838 մարզիկ, 974 անդամ (Շրջաններու անդամական ընդհանուր պատկերները տեսնել առանձին տախտակներով):



Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան տասներորդ Կեդրոնական Վարչութիւնը 2011-2015 երկարող իր գործունէութեան շրջանին ունեցած է բեղուն գործունէութիւն.՝

- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Զ. Համագումար (Մաղկաձոր, 24-29 Օգոստոս 2012):
- Միջ-վարչական դիւանական Ը. խորհրդաժողով (Նիկոսիա, 29-31 Մարտ 2013):
- Վկայեալ կարգի եւ խմբապետներու վերաորակաւորման ցամաքամասային դասընթացք (Մէնթ Գաթրինգ, 25-29 Օգոստոս 2013):
- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Թ. մարզախաղեր (Երեւան, 27 Յունիս-3 Օգոստոս 2013):
- «Արարատեան» կարգի տեսական եւ գործնական դասընթացքներ (Դեկտեմբեր 2013-էն Յունիս 2014 եւ 26-30 Յունիս 2014):
- «Կուկլը»ի հետ համաձայնութեան ստորագրութիւն (1 Յունուար 2014):
- Սփիւռքի նախարարութեան հետ գործակցութեան յուշագրի ստորագրութիւն (Երեւան, 3 Օգոստոս 2014):
- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ժ. բանակում (Բիւրական, 31 Յունիս-9 Օգոստոս 2014):
- Հ.Մ.Ը.Մ.ի քոյր մասնաճիւղերու միօրեայ հանդիպում (Երեւան, 12 Օգոստոս 2014):
- Բիւրականի ընդարձակում եւ բարեկարգում բանակավայրի պաշտօնական բացում (22 Օգոստոս 2014):
- Եղբ. Բագրատ Եսայեանի Համաշխարհային Սկառուտական Շարժումի Բիւրոյի անդամակցութիւն (14 Օգոստոս 2014):

**ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ  
Հ.Մ.Ը.Մ.Ի 104 ՄԱՍՆԱԳԻՂԵՐՈՒ**

ԱՐԵՒՍՏԵԱՆ Մ. Ն.	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		1149	4008	862	6019
Լոս Անճելլոս	1968	66	322	34	422
Սան Ֆրանսիսկո	1970	41	231	48	320
Ֆրեզնո	1971	63	146	35	244
Մոնթեպելլո	1974	19	146	7	172
Փասատինա	1977	90	427	60	577
Կլեմտլլ	1978	383	464	281	1128
Օրէնձ Քաունթի	1979	15	207	28	250
Սան Ֆեռնանտո	1979	94	773	101	968
Սան Տիէկո	1983	87	91	21	199
Ինլընտ Էմփայր	1990	-	85	28	113
Սանթա Գարա	1991	40	103	40	183
Սաութ Պէյ	1992		Կազմալոյծ		
Քրետնթա հովիտ	1993	89	634	48	771
Պրայէնթ	1995	83	218	54	355
Լաւ Վեկաս	1997	33	45	18	96
Ֆիլմոնթ	1998	14	22	14	50
Ուոլնաթ Քրիք	1999	32	34	22	88
Նորթ Յոլիվուտ	2011	-	60	23	83

Հ. ԱՄԵՐԻԿԱ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		235	345	783	1363
Պուլեոս Այրես	1927	91	235	596	922
Գորտուպա	1929	80	30	95	205
Մոնթելիսո	1987	64	80	92	236

ԱՄՏՐԱԼԻԱ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		228	822	234	1284
Սիտնի «Անդրանիկ»	1965	118	356	39	513
Մեկուոն «Արաքս»	1966	-	93	45	138
Սիտնի «Նաւասարդ»	1973	70	58	25	153
Սիտնի «Կամք»	1981		Կազմալոյծ		
Սիտնի «Արարատ»	1989	40	315	125	480

● «Մարզիկ» պաշտօնաթերթի 41 թիւերու հրատարակութիւն:

Տեղեկագիրներու քննութեանն եւ լուսաբանական հարցում-պատասխաններէն ետք, Չորեքշաբթի, 9 Սեպտեմբերի չորս նիստերը յատկացուեցան ժողովականներու ըստ էութեան արտայայտութիւններուն եւ Կեդրոնական Վարչութեան խօսքին: Ժողովականները լսեցին նաեւ արխիւային, հաշուեքննիչ եւ բանաձեւի յանձնախումբերուն զեկուցումները, որոնք ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան գործունէութիւնը նկատեցին «Գնահատելի»:

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐԸ**

Հինգշաբթի, 10 Սեպտեմբերին, Պատգամաւորական Ժողովը ընթացաւ աշխատանքային նիստերու ղրութեամբ: Աշխատանքային հինգ յանձնախումբերը՝ կազմակերպական-կանոնադրային, սկառուտական, մարզական, ռազմավարական-արհեստագիտական եւ «Մարզիկ»-տնտեսական, առանձին հանդիպումներով քննարկեցին իրենց վստահուած օրակարգի կէտերը եւ շրջաններու բանաձեւերու հիմնամբ պատրաստեցին որոշումի կարգ անցնելիք առաջարկները: Նոյն օրը երեկոյան եւ յաջորդ օր գումարուած նիստերուն որդեգրուելէ ետք՝ այդ առաջարկները դարձան Հ.Մ.Ը.Մ.ի յառաջիկայ քառամեակի գործունէութեան առաջնորդող սկզբունքները: Յանձնախումբերու կողմէ ներկայացուած եւ Պատգամաւորական Ժողովին կողմէ որդեգրուած հիմնական որոշումներուն այստեղ կ'արժէ անդրադառնալ ընդհանուր գիծերով:

**ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ԿԱՆՈՆԱԳՐԱՅԻՆ**

- Ստեղծել գործիչներու ղրութիւն՝ օժանդակելու համար Հ.Մ.Ը.Մ.ի նորաստեղծ մասնաճիւղերու կազմակերպման, վարչական, մարզական թէ՛ սկառուտական մարզերու մէջ:

- Նիւթաբարոյական յատուկ հոգածութիւն ցուցաբերել Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ շրջանին: Միութեան Շրջանային եւ Մեկուսի վարչութիւնները Սուրբոյ շրջանին կարիքները մնայուն կերպով ունենան իրենց օրակարգին վրայ:

- Կեդրոնական Վարչութիւնը յառաջանէ կազմակերպական յանձնախումբ մը, որ գործէ ռազմավարական ծրագրի մշակած կէտերուն համաձայն: Յանձնախումբը կրնայ ունենալ իր գործավարը եւ կրնայ ստանձնել Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի ֆոնտին յանձանձումը:

- Կազմակերպել վարչականներու վերաորակաւորման յատուկ սեմինար, որ վարչագիտական անհրաժեշտ տեղեկու-



# ԳԼԽԱԲՈՐ ԲԱՑԱԿԱՆ



Պատգամաւորական Ժողովի գլխաւոր բացական եղբ. Միհրան Շիմշիրեանն էր, Հ.Մ.Ը.Մ.ի ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան անդամը, որուն անսպասելի մահուան երկուքուկէս տարիները չէին յաջողած դարմանել անոր կորուստին վիշտը:

Պատգամաւորները իրենց ելոյթներուն ընթացքին յաճախ վկայակոչեցին եղբօր յիշատակը, յատկապէս հաշուական եւ պիտոճեական հարցերու քննարկման ժամանակ: Եղբայր Միհրան փորձառու հաշուապահ էր: Ան երկար տարիներու վաստակ ունէր Հ.Մ.Ը.Մ.ի հաշուապահական դրութեան ստեղծման եւ գործադրութեան մէջ: Մեծ էր անոր երախտիքը համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու եւ բանակումներու ելեւմտական հրակայական գործառնութիւններու բժախնդիր կատարման մէջ:

Հմուտ հաշուապահ մը ըլլալու կողքին, եղբ. Միհրան կազմակերպական իր բազմակողմանի կարողութիւններով լայն յարաբերութիւններ մշակած էր միութեան համահայկական կառոյցի գրեթէ բոլոր պատասխանատուներուն հետ: Ան փնտռուած գրուցակից էր, յարգելի ղեկավար եւ հեղինակաւոր միութեանական:

Պատգամաւորական Ժողովը յիշեց ու փնտռեց եղբ. Միհրանը:

Թիւններ փոխանցէ միութեան աշխարհասփիւռ մասնաճիւղերու եւ միաւորներու վարչական կազմերուն: Սեմինարը կարելի է իրագործել միջ-դիւանական խորհրդաժողովի ընթացքին:

- Զարկ տալ Արցախի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը հիմնադրութեան աշխատանքներուն:

- Հ.Մ.Ը.Մ.ի իւրաքանչիւր Շրջանային կամ Մեկուսի շրջան պատրաստէ հինգ վայրկեան տեւողութեամբ տեսանիւթ մը, որ ներկայ եւ ապագայ սերունդներուն ընդհանուր տեղեկութիւններ փոխանցէ իր շրջանին, կառոյցին եւ աշխատանքներուն մասին: Տեսերիզը պէտք է ընդգրկէ.-

ա) Երկրին եւ քաղաքին սահմանները համաշխարհային քարտէսին վրայ:

բ) Վարչական անդամները շրջանի ակումբին ժողովասրահին մէջ:



գ) Սկաուտական հաւաքոյթներու վայրը:  
դ) Մարզական փորձերու վայրը:  
ե) Շրջանի կազմաւորման տարին, անդամներուն թիւը, մարզիկներուն եւ սկաուտներուն թիւերը առանձնաբար:

- 2018-ին Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակը կազմակերպել արժանաւորապէս: Այս առիթին նուիրել միութեան 10-րդ մարզախաղերը (2017) եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ բանակումը (2018):

100-ամեակի տօնակատարութիւններ կատարել միութեան բոլոր շրջաններուն եւ, կարելիութեան պարագային, նաեւ Պոլսոյ մէջ: Նոյն ծիրին մէջ, Գիւմրիի մէջ տեղադրել Հ.Մ.Ը.Մ.ի առաջին սերունդի նուիրեալներէն Վահան Զերազի յուշարձանը:

- Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին առիթով պարտրաստուի միութեան մէկ դարու պատմութիւնը ներկայացնող բազմալեզու տեսանիւթ մը: Հրապարակուի նաեւ երգարան մը, երգերու Սի. Տի. մը: Պատրաստուին յատուկ խորհրդանշան (լոկօ), քայլերգ, որմազդ եւ քարոզչական այլեւայլ իրեր:

- Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին առիթով հիմնել հիմնադրամ մը (Endowment Fund), որուն անձեռմխելի գումարը պահ կը դրուի դրամատան մը մէջ եւ որուն հասոյթը հետագային կ'օգտագործուի Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներու իրագործման համար:

Այս նպատակին համար Կեդրոնական Վարչութիւնը նշանակէ յանձնախումբ մը, որ իր ենթալիցանախումբերը ունենայ իւրաքանչիւր մասնաճիւղի մէջ:

Հիմնադրամը կը ղեկավարուի յատուկ հոգաբարձու մարմինի մը կողմէ եւ կ'ունենայ իր կանոնագիրը, որ կը վաւերացուի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

Կանոնագրային բարեփոխումներու բաժնով, Պատգամաւորական Ժողովը միութեան մայր կանոնագրին մէջ կատարեց շարք մը փոփոխութիւններ եւ յաւելումներ, որոնք շուտով լոյս կը տեսնեն առանձին հրատարակութեամբ:

## ՍԿԱՈՒՏԱԿԱՆ

- Յառաջացնել յանձնախումբ մը, որպէսզի անհրաժեշտ ուսումնասիրութիւններ եւ պրպտումներ կատարելով, մշակէ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան ընդհանուր ուղեգիծը:

Մշակուած ուղեգիծը Կեդրոնական Վարչութեան ճամբով փոխանցուի Հ.Մ.Ը.Մ.ի շրջաններուն, որպէսզի անոնք իրենց տեղական պայմաններուն համաձայն կիրարկեն զայն:

- Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը շրջաններէն ներս կատարէ ընկերային ծառայութեան լայնածաւալ աշխատանքներ:

- Վերամշակել Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական կարգերու եւ պէճերու գիրքերը՝ զանոնք

հարստացնելով արդիական նորութիւններով:

- Սկսուտ խմբապետներու աշխատանքային դժուարութիւնները լուծելու համար, պատրաստել ուղեցոյց գիրքեր:

- Ստեղծել համացանցային շտեմարան մը, ուր շրջանները կարենան իրենց դաստիարակչական գիտելիքները ամբարել: Այդ շտեմարանէն կրնան օգտուիլ բոլոր շրջանները:

- Հ.Մ.Ը.Մ-ի շրջաններու սկսուտական շարքերու ամբողջական տուեալները տեղեկատուական արհեստագիտութեան միջոցով տեղադրուին համացանցի վրայ, որպէսզի Կեդրոնական Վարչութեան սեփականութիւնը դառնան անոնք:

Կեդրոնական Վարչութիւնը յառաջացնէ կեդրոնական սկսուտական յանձնախումբ կամ կորիզ մը, որ զբաղի շրջաններու սկսուտական աշխատանքներու համադրման եւ միօրինականացման գործով:

- Բաղձանք՝ համա-Հ.Մ.Ը.Մ-ական բանակումները անգամ մը Հայաստան եւ անգամ մըն ալ Հ.Մ.Ը.Մ-ական այլ



Բանաձեւի յանձնախումբը:

շրջանի մը մէջ կազմակերպելու:

- Վերատեսութեան ենթարկել եւ անհրաժեշտ փոփոխութիւններու ենթարկել համա-Հ.Մ.Ը.Մ-ական բանակումներու կանոնադիրը:

- Համա-Հ.Մ.Ը.Մ-ական բանակումները ունենան իրենց յարաբերական եւ քարոզչական յանձնախումբերը, որոնք անհրաժեշտ աշխատանքներ կատարեն բանակումներէ առաջ:

- Համա-Հ.Մ.Ը.Մ-ական բանակումի աւարտին կազմակերպիչ մարմինը պատրաստէ հարցարան մը, ուր բանակումի մասնակցողները արժեւորեն բանակումին զանազան երեսները:

Կազմակերպիչ մարմինը պարտի վերլուծել եւ ամփոփել հարցարաններու պատասխանները եւ անհրաժեշտ եզրակացութիւնները կատարելով փոխանցէ զանոնք Կեդրոնական Վարչութեան:


- Հ.Մ.Ը.Մ-ի սկսուտները առաւելագոյն թիւով մասնակցին միջազգային ճամպորիներուն:

## ՄԵՐ ՄԵԾԵՐԸ

Մեր մեծերը՝ Հ.Մ.Ը.Մ-ի վաստակաշատ դէմքերը յատուկ ուշադրութեան եւ գուրգուրանքի արժանացան Պատգամատրական Ժողովի ամբողջ ընթացքին:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ՝ եղբ. Աբրահամ Ահարոնեան, Արժանթինէն, Ժողովի բացման հանդիսութեան միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով պարգեւատրուեցաւ իր երկարամեայ ծառայութեան եւ նուիրաբերումին համար:

Կեդրոնական Վարչութեան նախկին փոխ ատենապետ, 2015-ին Արեւմտեան Մ. Նահանգներու «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական» եղբ. Ժիրայր Սարգիսեան արժանացաւ Ժողովականներու անվերապահ յարգանքին՝ իր հայրական ողջմիտ կեցուածքներուն եւ պատգամներուն համար: Յատկանշական էր Ժողովի աւարտին անոր արտասանած սրտի խօսքը, ուր ան ողջունեց պատերազմի արհաւիրքէն եկած Սուրիոյ ներկայացուցիչները եւ մասնաւոր գնահատանքով արտայայտուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի ատենապետ եղբ. Հորասիօ Թերզեանին մասին: Թերզեան յաջողած էր տեսնուիլ Հռոմի Ֆրանչիսքոս Պապին հետ, շնորհակալութիւն յայտնել Հայոց Յեղասպանութեան ճանաչման համար եւ այս առիթով անոր յանձնել Հ.Մ.Ը.Մ-ի սկսուտական փողկապը:



Ժողովականները եղբայր Ժիրայրին խօսքերուն արձագանգեցին բուն ծափահարութիւններով (եւոյթը դիտել հետեւեալ կապով՝

<https://www.facebook.com/shawn.aghababian/videos/939922256066918/>):

Վաստակաւորներու շարքին երիցագոյնը՝ 83-ամեայ եղբ. Պատրիկ Կիւլպէնկեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան երկարամեայ անդամը, իր վրայ հրաւիրեց բոլոր լուսարձակները: Ժողովականներու շարքին ան միակն էր, որ մասնակցած էր միութեան 11 Պատգամատրական Ժողովներէն 9-ին (1983, 1987, 1991, 1995, 1999, 2003, 2007, 2011, 2015): Քանիցս ան յոտնկայս ծափահարութիւններով գնահատուեցաւ ներկաներու կողմէ:

Եղբ. Պատրիկ յուզումնախառն եւոյթ մը ունեցաւ Ժողովի աւարտին՝ ափսոսալով որ այս Ժողովը կրնայ վերջինը ըլլալ իր կեանքին մէջ եւ ինք իր սիրելի Հ.Մ.Ը.Մ.էն կրնայ բաժնուիլ՝ առանց յագեցած ըլլալու անով (եւոյթը դիտել հետեւեալ կապով՝

<https://www.facebook.com/shawn.aghababian/videos/939929249399552/>):



Յանձնախմբային աշխատանքի պահուն:

**ՄԱՐՁԱԿԱՆ**

- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերը կատարել 2017-ին, Հայաստանի մէջ:
- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն շրջանները չսահմանափակուին միայն մէկ խումբով մասնակցութեամբ: Իւրաքանչիւր շրջանի արտօնութիւն տրուի, որ առաւելագոյնը 3 խումբով մասնակցելու իրաւունք ունենայ իւրաքանչիւր մարզաձեւի, իւրաքանչիւր դասակարգի մէջ:
- Ֆուլթայլի մարզաձեւին մէջ, մարզիկներու թիւը 18-էն բարձրանայ 23-ի: Իսկ իւրաքանչիւր խաղի կիսախաղը 35 վայրկեանէն բարձրանայ 40 վայրկեանի:
- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը աւելի հետաքրքրական դարձնելու համար, նկատի ունենալ նաեւ նոր մար-

- զաձեւեր, օրինակ՝ ֆուլթայլ, ըմբշամարտ, բռնցքամարտ եւ այլն:
- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն, Սուրիոյ մարզիկներու պարագային, մարզախաղերուն մասնակցին միայն Սուրիա գտնուող մարզիկները եւ ոչ՝ Հայաստան գտնուող սուրիահայ Հ.Մ.Ը.Մ.ականները:
- Մշակել Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներու յատուկ դաստիարակչական ծրագիր մը, որուն նպատակը ըլլայ մարզանքի միջոցով մարզիկներուն եւ մարզիչներուն փոխանցել միութենական ոգի:
- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն նկատի ունենալ «Տիպար մարզիչ»-ի բաժակ:
- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն ընթացքին մարզիկներուն յաւելեալ առիթներ ստեղծել միասին գտնուելու եւ լաւ ժամանակ անցընելու: Մարզիկները ծառայութիւններ մատուցեն Հայաստանի մէջ:
- Հ.Մ.Ը.Մ.ի մարզական կեանքին մէջ հաստատուին դաստիարակչական կարգեր եւ իւրաքանչիւր շրջան աշխատանք տանի, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ական աւելի լաւ դաստիարակուած մարզիկներ ունենանք:
- Երկու տարին անգամ մը կազմակերպել Միջերկրական-եան Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղեր:

**ՆՈՐ ՀԱՐՔԸ**



**Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական**

11-րդ Ժողովը յատկանշող երեւոյթներէն մէկը եղաւ Եւրոպայի մասնաճիւղերու մեծաթիւ մասնակցութիւնը: Ժողովին առանձին շարք մը կազմեցին վերջին քանի մը տարիներուն կազմուած կամ վերակազմուած մասնաճիւղերու պատգամաւորները, նախկին սուրիահայեր, իրաքահայեր եւ լիբանանահայեր, որոնք կը ներկայացնէին Շուէտի, Հոլանտայի եւ Ֆրանսայի հայկական գաղութներու Հ.Մ.Ը.Մ.ական միւտրները: Նորաստեղծ մասնաճիւղերէն կը բացակայէր Գերմանիոյ ներկայացուցիչը:

Ներկաներու շարքին էին նաեւ Կիպրոսի եւ Անգլիոյ ներկայացուցիչները: Բանաւոր պատճառներով կը բացակայէին Պուլկարիոյ, Աւստրիոյ եւ Յունաստանի պատգամաւորները:

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ-ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ**

- Հ.Մ.Ը.Մ.ի 9-րդ Պատգամաւորական Ժողովին ըստեղծուած եւ 10-րդ Պատգամաւորական Ժողովին որդեգրուած ռազմավարական ծրագիրին հիմամբ, Կեդրոնական Վարչութիւնը յառաջիկայ քառամեակին՝
  - ա) Ստանձնէ ռազմավարական ծրագրի գործադրութեան ղեկավարութիւնը իր բոլոր ճիւղաւորումներով:
  - բ) Մշակէ ռազմավարական ծրագրի գործադրութեան ժամանակացոյցը:
  - գ) Նշանակէ մնայուն յանձնախումբերու ատենապետները (մինչեւ Յունիս 2016):
  - դ) Նշանակէ մնայուն յանձնախումբեր (մինչեւ 2016-ի վերջ):
  - ե) Նախապէս որդեգրուած փորձառական ծրագիրը (Pilot

# ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԱՐԱՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՐԶԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՏԳԱՄԱԲՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական 11-րդ Ընդհանուր Ժողովի

Յարգարժան նախագահուքին,  
Հ.Մ.Ը.Մ.ական սիրելի քոյրեր եւ եղբայրներ,

Հայ Մշակութային Արարատ Կազմակերպութեան Կենտրոնական Վարչութեան եւ բոլոր անդամների անունից ողջունում եւ շնորհակալութեան խօսք ենք ուղղում ձեզ Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մեր ներկայութեան համար կրկին անգամ առիթ ստեղծելու կապակցութեամբ:

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ, աշխարհասփիւռ հայ ժողովուրդը որտեղ էլ որ նա հաստատուել է, իր կենաց ու մահու պայքարի ընդմիջից, առաջնային է համարել ազգային գոյատեւումը եւ իր բեկորների համախմբումը: Մշակել է ձեւեր եւ ստեղծել միջոցներ, ազգակործան վտանգներից պաշտպանուելու, որպէս ազգ յարատեւելու եւ իրեն աւանդ թողած հարուստ մշակոյթը պահպանելու ու զարգացնելու համար:

Սփիւռքում աշխատող գաղափարակից քոյր միութիւններ՝ Հ.Մ.Ը.Մ.ը եւ Հայ Մշակութային Արարատ Կազմակերպութիւնը նոյն առաքելութեամբ եւ ի գին մեծ գոհաբերութիւնների՝ աշխատել եւ աշխատում են համախմբելով հայ երիտասարդութեան նոյն նպատակի շուրջ ուղղորդել նրանց դէպի հայ ժողովրդի նպատակների իրագործումը: Երբ մի ժողովուրդ ունի ազգային կեանքով հետաքրքրուած ու նրա ապագայով մտահոգ սերունդ, որը գիտակցում է ժամանակի պահանջն ու հրամայականը, որը գործի է անցնում ու որսում ստեղծուած ՊԱՀԸ, նա քայլում է ԱԶԳԻ ՅԱԻԵՐ-ԺՈՒԹԻՒՆՆ ապահովող ճամբով:

Յետադարձ հայեացք նետելով Հ.Մ.Ը.Մ.ի անցած ճանապարհին, բազում դրական իրագործումների եւ հպարտա-

ռիթ երեւոյթների առջեւ ենք գտնում մեզ եւ դարձեալ համոզոււմ, որ յանձնառու միութեանականների բոլորանուէր աշխատանքների արդիւնքում՝ ստուարանում է պատասխանատու եւ ազգանուէր ոգով տոգորուած հայ երիտասարդութեան շարքերը:

Իսկ Հայրենիք-Սփիւռք մերձեցման եւ համագործակցութեան ոլորտում՝ բարձր գովասանքի է արժանի անկախացումից անմիջապէս յետոյ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ծաւալած աշխատանքը Հայաստանում, որը վկան է նրա ղեկավարութեան զգոնութեան եւ ՊԱՀԸ ճիշդ գնահատելուն:

Սակայն փոխուել են ժամանակները, փոխուել են մատաղ սերնդի եւ երիտասարդութեան հետաքրքրութիւնները, նիւթապաշտ այս աշխարհում եւ համաշխարհայնացման այս դարում, երբ աշխարհակույ մշակոյթները կլանում են թոյլերին, ահագանգ է հնչեցում աշխարհասփիւռ, ինչու չէ՞ հայաստանաբնակ երիտասարդութեան, ազգային նկարագիրը պահպանելու կենսական հարցում:

Առ այդ, անհրաժեշտ է միատեղուած եւ նոյն նպատակով աշխատել: Սա է այսօրուայ մեր՝ ազգային նպատակների ծառայող քոյր միութիւնների գերխնդիրը, պահը հասունացել է լսելու համար ազգակործան վտանգի ահագանգը: Սփիւռք, հայրենիք, միասնաբար պիտի լծուենք աշխատանքի, մշակենք ծրագիր՝ որը գործադրելի կը լինի աշխարհագրական ցանկացած ցամաքամասում, համապատասխան տուեալ վայրի առանձնատկութիւնների, յանուն մեր ազգային նկարագրի եւ արժէքների պահպանման:

Արդ, բարի երթ ենք մաղթում Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական 11-րդ Ընդհանուր Ժողովին եւ մաղթում, որ այս փառայեղ միութեան աշխարհով մէկ ծաւալած գործունէութիւնը եւ ապագայ ծրագրերը կ'իրականացնի համայն հայութեան ակնկալիքները:

Բի՛ւր յարգանք ազգիս նուիրեալներին:

project) համամիութենական տարողութեամբ կիրարկէ մշակույթն յանձնախումբերու ճամբով:

գ) Կազմէ ռազմավարական ծրագրի վերահսկիչ յանձնախումբ մը, իբրեւ խորհրդատու մարմին:

է) Գործադրէ նախապէս փոխանցուած Հ.Մ.Ը.Մ.Ի կազմակերպական չափանիշները (Organizational measures):

ը) Պարբերաբար շրջանները տեղեկացնէ ռազմավարական ծրագրի յաջողութիւններուն մասին:

Արհեստագիտական տեղեկատուութեան մարզին մէջ, Պատգամաւորական Ժողովը առաջադրեց հետեւեալները.-

- Կեդրոնական Վարչութիւնը գնէ եւ շրջաններուն տրա-

մաղրէ Software-ի ծրագիր մը, որ բաւարարէ միութեան բոլոր շրջաններու կարիքները:

Հ.Մ.Ը.Մ.ը ունենայ իր կեդրոնական Database-ը:

- Շրջանային եւ Մեկուսի վարչութիւնները նշանակեն արհեստագիտական տեղեկատուութեան իրենց ներկայացուցիչները եւ արհեստագիտական տեղեկատուութեան յանձնախումբին հետ իրենց կապը հանդիսացող պատասխանատուները: Նոյն ձեւով, մասնաճիւղեր նշանակեն արհեստագիտական տեղեկատուութեան իրենց ներկայացուցիչները եւ արհեստագիտական տեղեկատուութեան յանձնախումբին հետ իրենց կապը, Շրջանային Վարչութեան հետ:

- Կեդրոնական Վարչութիւնը ստեղծէ Web Content



Ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան անդամներ:

Management-ի յանձնախումբ մը, որ շարունակ տեղեկութիւններ հայթայթէ միութեան համացանցի կայքէջին:

Թելադրանք Կեդրոնական Վարչութեան՝ յառաջացրելու Intranet-ի յատուկ ցանց, յանձնախումբերու աշխատանքներու մասին տեղեկութիւնները ներքին կարգով փոխանցելու համար:

Ուսումնասիրուի «Մարզիկ»ի էլեկտրոնային հասցէներու այցելուներուն թիւը, էլեկտրոնային միջոցներուն գտած յաջողութիւնը եւ տարածման կարելիութիւնը՝ առաւելագոյն թիւով միութեանականներու եւ համակիրներու մօտ: Եւ եթէ ուսումնասիրութիւնները ցոյց տան էլեկտրոնային այս միջոցներուն առաւելութիւնը՝ տպագիր մամուլի վաճառքի օրինակէն, անցնիլ թերթին արդիականացման երրորդ հանգրուանին:

Երրորդ հանգրուանին, որ կրնայ երկարիլ 30 Յունիս 2017-էն մինչեւ յաջորդ Պատգամաւորական ժողով, «Մարզիկ» միութեան լուրերը էլեկտրոնային իր միջոցներով կը փոխանցէ առօրեայ դրութեամբ, իսկ երեք ամիսը անգամ մը կը հրատարակէ տպագիր թիւ մը՝ ներկայացնելով Հ.Մ.Ը.Մ-ի ազգային, պատմական, գաղափարական եւ դաստիարակչական առաքելութիւնը ներկայացնող նիւթեր:

«Մարզիկ»ի աշխատանքներուն հետեւողական եւ արագ հետապնդումը կատարելու համար, Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններ պարտին ունենալ «Մարզիկ»ի իրենց մնայուն ներկայացուցիչները, որոնք պիտի զբաղին թերթին նիւթեր եւ ծանուցումներ ապահովելով: Ներկայացուցիչները պիտի ջանան թերթին շուրջ լայն հետաքրքրութիւն ստեղծել իրենց շրջաններուն մէջ:

«Մարզիկ»ի արդիականացման ծախսերը հոգալու եւ



**ԴԱՐՁԵԱՎ ՎԻՉԷՆՆԵՐ...**

Ինչպէս նախորդ Պատգամաւորական ժողովին, այս ժողովին եւս Վիգէնները եղան տիրապետող ներկայութիւն՝ յաճախ շքիոթի մատնելով ժողովականները:

Ժողովին ներկայ էին վեց Վիգէններ. Վիգէն Քորթեան (Կեդրոնական Վարչութեան անդամ, Աւստրալիա), Վիգէն Դաթեան (Կեդրոնական Վարչութեան անդամ, Արեւմտեան Մ. Նահանգներ), Վիգէն Աւագեան («Մարզիկ»ի խմբագիր, Լիբանան), Վիգէն Աբելեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), Վիգէն Սեմերեան (Սուրիա) եւ Վիգէն Նազարեան (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.):

**«ՄԱՐԶԻԿ»-ՏՆՏԵՍԱԿԱՆ**

«Մարզիկ» պաշտօնաթերթը յառաջիկայ քառամեակին հարկ է հանգրուանային կերպով թեւակոխէ արդիականացման նոր շրջան:

Առաջին հանգրուանին, մինչեւ 30 Յունիս 2016, պաշտօնաթերթը պարտի ունենալ դիմատետրի իր էջը եւ երկլեզու՝ անգլերէն-հայերէն համացանցի կայքէջը եւ application-ը:

Երկրորդ հանգրուանին, 30 Յունիս 2016-էն 30 Յունիս 2017, «Մարզիկ» հարկ է տպագիր իր հրատարակութեան կողքին գործէ նաեւ էլեկտրոնային իր միջոցներով՝ դիմատետր, կայքէջ եւ application: Այս հանգրուանին պիտի



Ժողովին դիւանը աշխատանքի պահուն:



Թերթին նիւթական բեռը մասամբ թեթեւեցնելու համար, միութեան անդամներու ցենզերուն վրայ աւելցնել տարեկան մէկ ամ- տուարի գումար:

Տնտեսական մարզի մէջ, Պատգամաւորական Ժողովը նպատակաշարժար գտաւ հետեւեալները.-

- Յառաջացնել յատուկ յանձնախումբ մը, որ գրադի կեդրոնական Վարչութեան «Չաթալպաշեան» կալուածի օգտագործման կարելիութիւններու ուսումնասիրութեամբ:

- Յառաջացնել յատուկ յանձնախումբ մը, որ մինչեւ մէկ տարի ուսումնասիրէ եւ պատրաստէ միութեանական մեծ ձեռնարկներու համար (մարզախաղեր, բանակումներ, եւ այլն) մարքեթինկի թղթածրար մը, որ պիտի ներկայացուի մասնագիտական ընկերութիւններու՝ Հ.Մ.Ը.Մ-ին միջազգային հովանաւորներ ապահովելու համար:

- Շարունակել եւ իր աւարտին հասցնել նախորդ կեդրոնական Վարչութեան օրով սկսուած Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրամի մը ստեղծման աշխատանքը:

- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան հետ համախորհուրդ, քննել կարելիութիւնները Հ.Մ.Ը.Մ-ի Բիւրականի բանակավայրը եկամտաբեր աղբիւրի վերածելու:

- Միութեան 100-ամեակին առիթով հրապարակել սահմանափակ քանակով արժէքաւոր յուշանուէր մը, որուն վաճառքին մասնակից դարձնել նաեւ շրջաններն ու մասնաճիւղերը՝ յատուկ շահաբաժին տրամադրելով անոնց:

**ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԵՐԸ**

Ուրբաթ, 11 Սեպտեմբերի յետմիջօրէին տեղի ունեցաւ Պատգամաւորական Ժողովի նախաՎերջին նիստը, որ քննեց եւ հաստատեց 2015-2019 քառամեակի գործունէութեան նախահաշիւը եւ ըստ այնմ ճշգրեց միութեան Շրջանային եւ Մեկուսի շրջաններու ցենզի սակերը: Դադարին, Ժողովը դիտեց ռազմավարական ծրագրի յանձնախումբին կողմէ պատրաստուած կարճ տեսանիւթ մը, որ կը ներկայացնէր արդի արհեստագիտութեան պայմաններով կազմակերպական աշխատանքի արագութեան եւ արդիւնաւէտութեան նպաստող նոր ձեւեր:

Դադարէն ետք, Պատգամաւորական Ժողովի աշխա-

տանքները իրենց լրումին հասան կեդրոնական Վարչութեան նոր կազմի ընտրութեամբ: Անդամներու թիւ ճշդուեցաւ 13: Յետ քուէարկութեան, 2015-2019 քառամեակին համար Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական Վարչութեան անդամ ընտրուեցան եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան, Վաչէ Նաճարեան, Իշխան Եղիայեան, Բաֆֆի Կէփօղլանեան (Լիբանան), Բագրատ Եսայեան, Օշին Փիրումեան (Հայաստան), Անդրանիկ Պահարեան (Փարիզ), Ալէք Խաչատրեան (Լոնտոն), Վիգէն Դաւթեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), Հրաչ Մեսրոպեան (Արեւելեան Մ. Նահանգներ), Մոսիկ Թոփուզեան (Գանատա), Արմանտո Թորգոմեան (Հարաւային Ամերիկա) եւ Վիգէն Քորթեան (Աւստրալիա):

Հասաւ Պատգամաւորական Ժողովի փակման պահը: Սրտառուչ մթնոլորտի մէջ, սրտի խօսքեր արտասանեցին ներկայ վաստակաշատ եղբայրները, ընթացաւ արտ կեդրոնական Վարչութեան անդամները, շրջաններու ներկայացուցիչները եւ Ժողովին դիւանը: Խօսքերը եղան տպաւորիչ եւ դաստիարակիչ: Յատկանշական եղան յատկապէս միութեանական պատկառելի վաստակի տէր եղբայրներ Պատրիկ Կիւլպէնկեանի եւ Ժիրայր Սարգիսեանի պատգամները, որոնց կ'անդրադառնանք առանձին (Տեսնել «Սեր մեծերը» նիւթը):

Խօսքերէն ետք, 11-րդ Պատգամաւորական Ժողովին փակումը կատարուեցաւ երեկոյեան ժամը 10.15 անց, «Յառաջ նահատակ» քայլերգի խմբերգովով եւ միութեան պատմութեան մէջ նոր էջ մը բացած ըլլալու արդար գոհունակութեամբ:

**ՆԱԽՈՐԴՆԵՐԸ**

Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառոյցին ըստեղծումէն ի վեր՝ 1974-էն ասդին գումարուած են 11 Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներ, հետեւեալ ձեւով.-

- Ա. Պատգամաւորական Ժողով- Պէյրուք, 13-15 Դեկտ. 1974:
- Բ. Պատգամաւորական Ժողով- Նիկոսիա, 6-8 Ապրիլ 1979:
- Գ. Պատգամաւորական Ժողով- Աթէնք, 14-17 Ապրիլ 1983:
- Դ. Պատգամաւորական Ժողով- Աթէնք, 17-20 Ապրիլ 1987:
- Ե. Պատգամաւորական Ժողով- Աթէնք, 29 Մարտ-3 Ապրիլ 1991:
- Զ. Պատգամաւորական Ժողով- Պէյրուք, 11-17 Ապրիլ 1995:
- Է. Պատգամաւորական Ժողով- Պէյրուք, 31 Մարտ-5 Ապրիլ 1999:
- Ը. Պատգամաւորական Ժողով- Ծաղկաձոր, 4-7 Յունիս 2003:
- Թ. Պատգամաւորական Ժողով- Ծաղկաձոր, 19-23 Յունիս 2007:
- Ժ. Պատգամաւորական Ժողով- Ծաղկաձոր, 5-10 Սեպտ. 2011:
- ԺԱ. Պատգամաւորական Ժողով- Աղուերան, 7-11 Սեպտ. 2015:



Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան եւ Արեւելեան Մ. Նահանգներու պատգամաւորական կազմերը իրենց հրաւիրեալներուն եւ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչներուն հետ:



Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի պատգամաւորները Կեդր. Վարչութեան իրենց ներկայացուցիչին հետ:




Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ պատգամաւորները Կեդր. Վարչութեան իրենց ներկայացուցիչին հետ:



Հ.Մ.Ը.Մ.ի Եւրոպայի շրջանի (Լոնտոն, Փարիզ, Շուէտ, Ալմէյօ, Կիպրոս, Երուսաղէմ) պատգամաւորներու յիշատակի նկար:



Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի շրջանի պատգամաւորները Կեդրոնական Վարչութեան իրենց ներկայացուցիչին հետ:



Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի մեկուսի մասնաճիւղի պատգամաւորները:



Պատգամաւորական ժողովին մասնակից քոյրերը՝ պատգամաւորներ եւ հրաւիրեալներ:



Հ.Մ.Ը.Մ.ի Շուէտի շրջանի պատգամաւորները:



Հ.Մ.Ը.Մ.ի Ալմէլոյի շրջանի պատգամաւորները:



Հ.Մ.Ը.Մ.ի ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան անդամները: Նկարէն կը բացակայի եղբ. Վիգէն Դաւթեան:





Յիշատակելի խմբանկար մը բոլոր այն պատգամաւորներու, որոնք անցեալին ծառայած են Հ.Ս.Ը.Մ.ի սկաւտական շարքերուն:



Հ.Ս.Ը.Մ.ի Լիբանանի շրջանի պատգամաւորները:



Հ.Ս.Ը.Մ.ի Սուրիոյ շրջանի պատգամաւորները:




Հ.Ս.Ը.Մ.ի Գահիրէի մեկուսի շրջանի պատգամաւորները:



Հ.Ս.Ը.Մ.ի Պաղտատի եւ Կիպրոսի մեկուսի շրջաններու պատգամաւորները:



Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի պատգամաւորները Կեդրոնական Վարչութեան իրենց ներկայացուցիչին հետ:



Պատգամաւորական ժողովին դիւանը:



Հ.Ս.Ը.Մ.ի 11-րդ Պատգամաւորական ժողովի մասնակիցներու ընդհանուր խմբանկար:

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ 11 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ. համագաղութային կազմակերպության կը վերածուի 1974-ին, Պէյրուսի մէջ գումարելով իր առաջին Պատգամատրական Ժողովը եւ ընկերելով անդրանիկ Կեդրոնական Վարչութիւնը:

Միութեան առաջին Պատգամատրական Ժողովը կը կազմակերպէ Հ.Մ.Ը.Մ.ի Մերշատը Արեւելքի 20-րդ Պատգամատրական Ժողովին կողմէ յառաջացած եռանդամ մարմինը բաղկացած եղբայրներ Վարդգէս Տէր Կարապետեանէ, Նշան Թիւսիզեանէ եւ Հրանդ Մուրադեանէ:

1974-էն մինչեւ օրս, միութիւնը գումարած է 11 Պատգամատրական Ժողովներ, որոնց ընթացքին ընկրած է միութեան գործադիր, գերագոյն մարմինը ներկայացնող 11 Կեդրոնական Վարչութիւններ հետեւեալ կազմերով.-

## Ա. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ (1974-1979)

- Վարդգէս Տէր Կարապետեան
- Վարդգէս Ալահայրոյեան
- Տիգրան Ոսկունի
- Բիզանդ Թորիկեան
- Նշան Թիւսիզեան
- Յովհաննէս Պայթարեան (Լիբանան)
- Արմէն Տէյիւմէնճեան (Արեւմտեան Մ.Ն.)
- Դանիէլ Դանիէլեան (Փանապա)
- Պարգէլ Պարսամեան (Հարաւային Ամերիկա)

## Բ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ (1979-1983)

- Վարդգէս Տէր Կարապետեան
- Բիզանդ Թորիկեան
- Նշան Թիւսիզեան
- Յովհաննէս Պայթարեան
- Յարութիւն Գազանճեան
- Վարուժան Մուրադեան (Լիբանան)
- Արմէն Տէյիւմէնճեան (Արեւմտեան Մ.Ն.)
- Վարուժան Սերոբեան (Փանապա)
- Պարգէլ Պարսամեան (Հարաւային Ամերիկա)

## Գ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ (1983-1987)

- Վարդգէս Տէր Կարապետեան
- Բիզանդ Թորիկեան
- Յարութիւն Գազանճեան
- Վարուժան Մուրադեան
- Երուանդ Տէմիրճեան
- Միհրան Շիմշիրեան

- Կարօ Թիւթինճեան (Լիբանան)
- Վարդգէս Ալահայրոյեան (Արեւմտեան Մ.Ն.)
- Վարուժան Սերոբեան (Փանապա)

## Դ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ (1987-1991)

- Միսաք Արզումանեան
- Յովհաննէս Տէր Յարութիւնեան
- Արա Յակոբեան
- Պարրիկ Կիւլպէնկեան
- Երուանդ Տէմիրճեան
- Միհրան Շիմշիրեան
- Կարօ Թիւթինճեան (Լիբանան)
- Ժիրայր Պոյաճեան (Արեւմտեան Մ.Ն.)
- Վարուժան Սերոբեան (Փանապա)
- Սիւսանթօ Կարապետեան (Լոնպոն)
- Ճորճ Տաղլեան (Հարաւային Ամերիկա)

## Ե. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ (1991-1995)

- Միսաք Արզումանեան
- Յովհաննէս Տէր Յարութիւնեան
- Արա Յակոբեան
- Պարրիկ Կիւլպէնկեան
- Յարութիւն Գազանճեան
- Միհրան Շիմշիրեան
- Կարօ Թիւթինճեան (Լիբանան)
- Սուրէն Նազարեան (Սուրիա)
- Վարդան Բախշեան (Հայաստան)\*
- Ժիրայր Պոյաճեան (Արեւմտեան Մ.Ն.)
- Վարուժան Սերոբեան (Փանապա)
- Եղիշէ Խոսրոյեան (Լոնպոն)
- Արթիւրօ Յովհաննէսեան (Հարաւային Ամերիկա)

\*Նահապարակուած՝ 18 Դեկտ. 1991-ին, Արցախի ազատագրման կռիւներուն:



**Զ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ (1995-1999)**

Միսսր Արզումանեան  
Պապրիկ Կիլլպէնկեան  
Միհրան Շիմշիրեան  
Կարօ Թիթիւնճեան  
Անդրանիկ Պէօյիքեան (Լիբանան)  
Մանուէլ Հալլաճեան (Սուրիա)  
Գօգօ Պալեան  
Ժիրայր Սարգիսեան (Արեւմտեան Մ.Ն.)  
Սարգիս Սրեփանեան (Արեւելեան Մ.Ն.)  
Վարուժան Սերոբեան (Գանապրա)  
Հրաչ Սիսեռեան (Փարիզ)

**Է. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ (1999-2003)**

Բիզանդ Թորիկեան  
Գառնիկ Մկրտիչեան  
Սրեփան Տէր Պեպրոսեան  
Յարութ Չէքիճեան  
Պեպիկ Սապունճեան (Լիբանան)  
Մանուէլ Հալլաճեան (Սուրիա)  
Գօգօ Պալեան  
Ժիրայր Սարգիսեան (Արեւմտեան Մ.Ն.)  
Սուրապ Մանուկեան (Արեւելեան Մ.Ն.)  
Հրաչ Տէր Սարգիսեան (Գանապրա)  
Հրաչ Սիսեռեան (Փարիզ)  
Արրահամ Ահարոնեան (Հարաւային Ամերիկա)  
Սարգիս Տէր Պեպրոսեան (Աւստրալիա)

**Ը. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ (2003-2007)**

Գառնիկ Մկրտիչեան  
Սրեփան Տէր Պեպրոսեան  
Կարօ Թիթիւնճեան\*  
Պապրիկ Կիլլպէնկեան (Լիբանան)  
Գէորգ Կարապետեան (Սուրիա)  
Յարութին Յարութինեան (Հայաստան)  
Մհեր Դաւիթեան  
Մանուէլ Մարսէլեան (Արեւմտեան Մ.Ն.)  
Վահրամ Դանիէլեան (Արեւելեան Մ.Ն.)  
Հրաչ Տէր Սարգիսեան (Գանապրա)  
Լեւոն Պաղտասարեան (Փարիզ)  
Արրահամ Ահարոնեան (Հարաւային Ամերիկա)  
Սարգիս Տէր Պեպրոսեան (Աւստրալիա)  
\* Մահէն երբ զինք փոխարինած Կարպիս Գապասագայեան:

**Թ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ (2007-2011)**

Գրիգորիս Պողարեան  
Կարպիս Գապասագայեան  
Միհրան Շիմշիրեան (Լիբանան)

Յարութին Յարութինեան (Հայաստան)  
Գօգօ Պալեան (Արեւմտեան Մ.Ն.)  
Վահրամ Դանիէլեան (Արեւելեան Մ.Ն.)  
Արմէն Կէրիկեան (Գանապրա)  
Հրաչ Սիսեռեան (Փարիզ)  
Գարլոս Սէֆերեան (Հարաւային Ամերիկա)



**Ժ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ (2011-2015)**

Գառնիկ Մկրտիչեան  
Կարպիս Գապասագայեան  
Միհրան Շիմշիրեան\*  
Սրեփան Տէր Պեպրոսեան (Լիբանան)  
Կարպիս Թովմասեան (Սուրիա)  
Բագրատ Եսայեան (Հայաստան)  
Յակոբ Թիֆէնկճեան  
Վիգէն Դաւթեան (Արեւմտեան Մ.Ն.)  
Հրաչ Մեսրոպեան (Արեւելեան Մ.Ն.)  
Արմէն Կէրիկեան (Գանապրա)  
Հրաչ Սիսեռեան (Փարիզ)  
Գարլոս Սէֆերեան (Հարաւային Ամերիկա)  
Վիգէն Քորթեան (Աւստրալիա)  
\*Մահէն երբ զինք փոխարինած Գրիգորիս Պողարեան:

**ԺԱ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ (2015-2019)**

Գառնիկ Մկրտիչեան  
Վաչէ Նաճարեան  
Իշխան Եղիայեան  
Բաֆֆի Կէվօղլանեան (Լիբանան)  
Բագրատ Եսայեան  
Օշին Փիրումեան (Հայաստան)  
Վիգէն Դաւթեան (Արեւմտեան Մ.Ն.)  
Հրաչ Մեսրոպեան (Արեւելեան Մ.Ն.)  
Մոսիկ Թոփուզեան (Գանապրա)  
Անդրանիկ Պահարեան (Փարիզ)  
Ալէք Խաչատրեան (Լոնդոն)  
Արմանյո Թորգոմեան (Հարաւային Ամերիկա)  
Վիգէն Քորթեան (Աւստրալիա)

# Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՓԱՌՎԵՈՐ ԾԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

**Վ**երջին երեք Պատգամաւորական ժողովներուն ստեղծուած գեղեցիկ սովորութեան համաձայն, 11-րդ Պատգամաւորական ժողովի աւարտին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. ճաշկերոյթ մը կազմակերպեց ի պատիւ հիւր պատգամաւորներու եւ հրաւիրեալներու: Ծաշկերոյթը տեղի ունեցաւ Շաբաթ, 12 Սեպտեմբերի երեկոյեան, «Կովկաս» ճաշարանին մէջ, ներկայութեամբ 200 Հ.Մ.Ը.Մ.ականներու, որոնց կարգին՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի բարեկամներ եւ բարերարներ:



բանակում, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի նոր կեդրոն, Աբովեանի մէջ կեդրոն, Հայկ Յովսէփեան բանակավայր եւ մաղթեց, որ յաջողութիւններու շարքը շարունակուի՝ ի խնդիր Հ.Մ.Ը.Մ.ի ազգային նպատակներուն իրականացման եւ ի շահ հայրենի նորահաս սերունդներու քաղաքացիական առողջ դաստիարակութեան:

Գեղարուեստական յայտագիրը եղաւ բաւական հարուստ: Հանդէս եկան հայրենի շարք մը երգիչներ ու պարահումբեր, որոնց հետ երգեցին ու պարեցին բոլորը: Օրուան խանդավառութիւնը իրենց գագաթնակէտին հասցուցին ծանօթ երգիչներ Ներսիկ եւ Արաբօ Իսպիրեաններ:

Իրենց ներկայութեամբ ճաշկերոյթը պատուեցին Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմնի եւ Համազգայինի ներկայացուցիչները, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի

ընթացաւարտ ու նորընտիր կեդրոնական վարչութիւններու անդամները:

Ծաշկերոյթին բացումը կատարելով, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան ողջունեց 11-րդ Պատգամաւորական ժողովի աւարտը եւ յաջողութիւն մաղթեց միութեան յառաջիկայ քառամեակի աշխատանքներուն:

Հ.Մ.Ը.Մ.ական ուրախութեան եւ ցնծութեան ոգեւորիչ մթնոլորտին մէջ, ներկաները աւելի քան 25 հազար տոլարի սրտաբուխ նուիրատուութիւններով իրենց զօրակցութիւնը յայտնեցին Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի մէջ տարածման ու ամրապնդման աշխատանքներուն:

Ծաշկերոյթը ազգային-հայրենասիրական երգերով շարունակուեցաւ մինչեւ երեկոյեան ուշ ժամեր: Ներկաները սրահէն բաժնուելէ առաջ՝ շրջանակ մը կազմած, ձեռք-ձեռքի շղթայած, ուրաշուրթեան եւ հրաժեշտի արցունքներով երգեցին «Յտեսութիւն» երգը:

**ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԾԱՇԿԵՐՈՅԹԻՆ՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ԻՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ**

- Եղբ. Հրաչ Սիսեռեան	15.000 \$
- Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսա	3.000 \$
- Հ.Մ.Ը.Մ. Արեւմտեան Մ. Ն.	2.600 \$
- Եղբ. Ժիրայր Սարգիսեան	1000 \$
- Հ.Մ.Ը.Մ. Գանատա	600 \$
- Հ.Մ.Ը.Մ. Հարաւային Ամերիկա	450 \$
- Եղբ. Ֆէտի Թաթրա	100 \$
- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ. Կիպրոս	100 ԵՐՐՕ
- Հ.Մ.Ը.Մ. Լիբանան	1.000.000 դրամ
- Հ.Մ.Ը.Մ. Արեւելեան Մ. Ն.	120.000 դրամ
- Հ.Մ.Ը.Մ. Ալմելո	100.000 դրամ
- Եղբ. Բագրատ Եսայեան	100.000 դրամ
- Եղբ. Պերճ Թիւֆէնկճեան	100.000 դրամ

Խօսք առաւ նորընտիր կեդրոնական վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ առաջին հերթին շնորհակալութիւն յայտնեց ժողովի հիւրընկալ շրջանին՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ին: Ապա, ան խօսեցաւ անցնող քառամեակին միութեան Հայաստանի մէջ ունեցած յաջողութիւններուն մասին՝ սեփական բանակավայր, 100-ամեակի

**«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ**

- Եղբ. Ժիրայր Սարգիսեան (Մ. Նահանգներ) 500 \$
- Մարի Տաքէսեան (Ամման) 300 \$



# «ՎԱՐՈՒԺԱՆ ԵՒ ՍՈՆԱ ԳԱԶԱՆՃԵԱՆ» ԿԵԴՐՈՆԻ ԲԱՅՈՒՄ ԱԲՈՎԵԱՆԻ ՄԷՋ



**Հ**ՄԼՄ-ի 11-րդ Պատգամաւորական ժողովի աշխատանքներու աւարտին, Շաբաթ, 12 Սեպտեմբերի յետմիջօրէին, Աբովեանի մէջ տեղի ունեցաւ ՀՄԼՄ-ՀԱՍԿ-ի «Վարուժան եւ Սոնա Գազանճեան» կեդրոնին բացումը, բարերարութեամբ Գահիրէէն Վարդան եւ Հէրի Գազանճեաններու, ի յիշատակ իրենց ծնողաց՝ վաստակաշատ ՀՄԼՄ-ական Եղբ. Վարուժան եւ Սոնա Գազանճեաններու:

Կեդրոնի բացման արարողութեան ներկայ գտնուեցան ՀՄԼՄ-ի նորընտիր եւ ընթացաւարտ կեդրոնական

Վարչութիւններու անդամներ, Պատգամաւորական ժողովի առիթով տարբեր երկիրներէ Հայաստան ժամանած պատգամաւորներ, ՀՄԼՄ-ՀԱՍԿ-ի վարչութեան անդամներ, սկաուտներ եւ Վարուժան եւ Սոնա Գազանճեաններու հարազատները՝ տէր եւ տիկ. Վարդան եւ Սապին Գազանճեաններ:

Կեդրոնին բացումը կատարելով, խօսքեր արտասանեցին ՀՄԼՄ-ՀԱՍԿ-ի վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան, ՀՄԼՄ-ի կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ բարերար եղբ. Վարդան Գազանճեան: Եղբ. Շմաւոնեան ՀՄԼՄ-ՀԱ-

ՄԿ-ի անունով շնորհակալութիւն յայտնեց բարերար Գազանճեան ընտանիքին, որ լիաբուն նուիրատուութեամբ իր մասնակցութիւնը բերաւ Աբովեանի մէջ ՀՄԼՄ-ի կեդրոնի մը ստեղծման գաղափարին: Կեդրոն մը, որ պիտի ծառայէ իբրեւ հաւաքավայր սկաուտական աշխատանքներու զարգացման ու ծաւալման:

Եղբ. Գառնիկ Մկրտիչեան իր խօսքին մէջ ներկայացուց նուիրեալ ՀՄԼՄ-ական եղբ. Վարուժան Գազանճեանը, որ միութենական բեղուն ծառայութիւն ունեցած է Եգիպտոսի մէջ, ՀՄԼՄ-«Արարատ»ի պասքեթպոլի խումբի ու ապա վարչական աշխատանքներու ընդմէջէն: Եղբ. Մկրտիչեան շեշտեց, որ «Եղբ. Վարուժան Գազանճեան սփիւռքահայ կեանքին մէջ իր հետքը եւ դրոշմը ձգած պատուական անուններ




րէն մէկն է: Ան ծնած է 1931-ին, Գահիրէ, «Արարատ» մարզական ակումբի հիմնադիրներէն Վարդան Գազանճեանի ընտանեկան յարկին տակ: Նախնական կրթութիւնը ստացած է Մխիթարեաններու տեղւոյն վարժարանը, իսկ բարձրագոյն ուսումը՝ Գահիրէի Ամերիկեան Համալսարանը: Եղբ. Վարուժան պատանեկութեան եղած է «Արարատ»ի սկաուտական միաւորի անդամ: Հետագային ան մաս կազմած է ակումբի պասքեթպոլի երէց տղոց խումբին:

Շրջան մը եղած է խմբապետ: Ան անդամ եղած է եգիպտահայ մարզական խաղերու կազմակերպիչ յանձնախումբին, 1978-էն սկսեալ եղած է Հ.Մ.-Լ.Մ.-«Արարատ»ի վարչական անդամ՝ գանձապահ, փոխ ատենապետ եւ ատենապետ: Ան մասնակցած է Հ.Մ.-Լ.Մ.-ի Պատգամաւորական չորրորդ ժողովին եւ ղիւաններու առաջին ժողովին»:

Ապա, եղբ. Մկրտիչեան աւելցուց. «Եղբ. Գազանճեան ճանչցուած է իբրեւ բարեսէր եւ բարեգործ անձնաւորութիւն: Մեծ նուիրատուութիւններ կատարած է Գահիրէի ազգային գաղութի կրթական եւ բարեսիրական կառույցներուն: Իր ներդրումը ունեցած է նաեւ

Հ.Մ.-Լ.Մ.-ի Պէյրութի կեդրոնատեղիի վերանորոգութեան եւ ընդարձակման աշխատանքներուն: 65-ամեայ ազգային եւ միութենական բեղուն ծառայութենէ ետք՝ եղբ. Վարուժան Գազանճեան մահացած է Յուլիս 2008-ին, բարեսիրութեան եւ բարեգործութեան իր աւանդը փոխանցելով զաւակներուն, որոնք այսօր իրենց հօրը երազներէն մէկը կ'իրականացնեն այս սրահին բացումով»:

Իր կարգին, եղբ. Վարդան Գազանճեան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.-Լ.Մ.-ի կեդրոնական վարչութեան՝ իր ծնողքին անունով կեդրոնի մը բացման առիթը ընծայած ըլլալուն համար: Ան լսաւ, որ իր հօրը՝ եղբ. Վարուժանի տարիներու երազն էր Հ.Մ.-Լ.Մ.-ի գործու-



Բարերար Վարդան եւ Սապին Գազանճեաններ Հ.Մ.-Լ.Մ.-ի կեդրոնական վարչութեան նախկին անդամ եղբայրներ Պատրիկ Կիւլպէնկեանի եւ Ժիրայր Սարգիսեանի հետ:



նէութեան ծաւարումը Հայաստանի մէջ, հետեւաբար, ան մաղթեց, որ կեդրոնը լաւագոյնս ծառայէ Արփեանի մէջ ազգային-սկաուտական գործունէութեան ծաւարման, որմէ պիտի օգտուին հայրե-

նի պատանիները ընդհանրապէս եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը յատկապէս: Խօսքերուն յաջորդեց կոկիկ հիւրասիրութիւն մը, որմէ ետք ներկաները կեդրոնին հրաժեշտ տուին՝ զայն միշտ

գործունեայ տեսնելու ակնկալութեամբ:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar




*Feel at home, away from home...*

**Reservations Yerevan**  
 32-38, Hanrabadoutian Street,  
 Yerevan 375010, Armenia  
 Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
 sales@europehotel.am

[www.europehotel.am](http://www.europehotel.am)



# Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՀԱՅԿ ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ԲԱՆԱԿԱՎԱՅՐԻՆ ՎԵՐԱԲԱՅՈՒՄԸ ԷՐԵՐՈՒՆԻԻ ՄԷՋ



Թղթակից  
ԵՐԵՒԱՆ

# 30

Սեպտեմբեր  
2015-ին, Երե-  
ւանի վարչա-  
կան շրջաննե-  
րէն էրբերու-

նի մէջ կազմակերպուած պաշտո-  
նական հանդիսութեամբ մը, վե-  
րաբացումը կատարուեցաւ Հ.Մ.-  
Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի Հայկ Յովսէփեան բա-  
նակավայրին, ներկայութեամբ հիւրե-  
րու, հրաւիրեալներու եւ Հ.Մ.Ը.Մ.ա-  
կան պատասխանատուներու:

Հիւրերու շարքին էին Հ.Յ.Դ. Բիւրո-  
յի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան,  
Բիւրոյի անդամ Կիրո Մանոյեան,  
Հ.Յ.Դ. Արեւմտեան Մ. Նահանգներու  
շրջանի ներկայացուցիչ Վիգէն Յովսէփե-  
ան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչու-  
թեան ատենապետ եղբ. Գառնիկ  
Մկրտիչեան, Կեդրոնական Վարչու-  
թեան անդամ եղբայրներ Բագրատ  
Եսայեան եւ Օշին Փիրումեան, Հ.Մ.-  
Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու  
Շրջանային Վարչութեան ատենապետ  
եղբ. Մանուէլ Մարսէլեան, Հ.Մ.Ը.Մ.ի  
Կեդրոնական Վարչութեան նախկին  
փոխ ատենապետ եղբ. Ժիրայր Սարգիս-  
եան, Արեւմտեան Մ. Նահանգներու թե-  
մի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոս-



եան եւ հանգուցեալ Հայկ Յովսէփեանի  
հարազատներ:

Հայկ Յովսէփեան բանակավայրը  
ունի քանի մը տարուան պատմութիւն:  
2010 թուականին, Հայաստանի կառա-  
վարութեան որոշումով, Երեւանի ան-  
տառային բաժինին մէջ գտնուող բանա-  
կավայրին հողաշերտը տրամադրուած  
է Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի-ին՝ Երեւանի միա-  
տրի սկստական աշխատանքներուն  
թափ տալու նպատակով: Բանակավայ-  
րին շինարարական աշխատանքները  
ստանձնած են Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան  
Մ. Նահանգներու շրջանէն, վաղամեռիկ  
եղբ. Հայկ Յովսէփեանի հարազատներն  
ու Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրները: 11 Յու-  
լիս 2011-ին կատարուած է բանակավայ-  
րին բացումը (Տեսնել «Մարզիկ» թիւ  
349-351, էջ 3-4): Երեք տարի ետք, 2014-  
ին, բանակավայրին քովի Յ հեկտար տա-  
րածութեամբ անտառային հողաշերտը

եւս տրամադրուած է նոյն նպա-  
տակին եւ անգամ մը եւս ծաւալած  
է շինարարական աշխատանք՝ բա-  
նակավայրը ընդարձակելու եւ բա-  
րեզարդելու համար:

Սեպտեմբեր 30-ի հանդիսու-  
թիւնը սկսաւ դրօշներու բարձ-  
րացման արարողութեամբ, որմէ  
ետք ներկայ հոգեւոր հայրերը կա-  
տարեցին հողօրհնէքի արարողու-

թիւն:

Այս առիթով իսոյք առաւ Հայկ Յով-  
սէփեանի եղբայրը՝ Վիգէն Յովսէփեան  
եւ ըսաւ, որ բանակավայրը լոկ շինու-  
թիւն մը կամ հողաշերտ մը չէ, այլ կապ-  
ուած է Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի առաքելու-  
թեան, որովհետեւ շուրջ 100 տարի է որ  
այս կազմակերպութիւնը կը դաստիա-  
րակէ սերունդներ:

«Սկստութիւնը կեանքի ձեւ է,  
կարգապահութիւն է, կեանքի արժէքա-  
յին համակարգ մըն է, իսկ Հ.Մ.Ը.Մ.ի  
սկստութիւնը ըլլալը աւելի պարտաւորեցնող  
է: Այս բանակավայրը Հ.Մ.Ը.Մ.ական  
աշխատանքի միայն մէկ երեսն է հայրե-  
նի հողին վրայ: Այստեղ Հ.Մ.Ը.Մ.-  
Հ.Ա.Ս.Կ.ը պիտի համախմբէ հայ երի-  
տասարդութիւնը եւ հայրենասիրական,  
ազգայնական դաստիարակութիւն պի-  
տի փոխանցէ անոր: Նոր, ղէպի պայ-  
ծառ ապագայ եւ ամբողջական Հայաս-

տանի գաղափարախօսութիւնը պիտի փորձէ սերմանել անոր», շեշտեց Վիգէն Յովսէփեան:

Այս բանակազարին բացումը միութեան մեծ ծրագիրին միայն մէկ օղակն է: Օղակներէն մէկն էր նաեւ Աբովեանի մէջ գրասենեակի մը բացումը,- ըսաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան: Ան դիտել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը ամէն բան կը կատարէ, որ պէտքի գործունէութիւնը շէնքերու սահմաններէն դուրս գայ, քանի որ սկաուտութեան հիմքը բնութիւնն է: «Սկաուտ ինքնին կը նշանակէ բնութեան գաւակ, ա՛յս է մեզի համար կարեւորը: Կը փորձենք մեր սկաուտներուն սորվեցընել ինչպէ՛ս ապրիլ բնութեան մէջ, երբ չկան կենցաղային տարրական պայմաններ», աւելցուց եղբ. Շմաւոնեան:

Խօսք առաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ յայտնեց, որ «Իր յարմարութիւններով եւ Երեւանին մօտը գտնուելու առաւելութեամբ, այս բանակազարը իտէպլ վայր մը կը հանդիսանայ մեր սկաուտներուն համար տարուան տարբեր եղանակներուն հաւաքուելու այստեղ եւ կատարելու իրենց միութենական սեմինարներն ու հաւաքները:

«Բանակազարը Երեւանի սկաուտ-



Եկեղեցական հայրերու կողքին, բացման հանդիսութեան կը հետեւին եղբայրներ Մանուէլ Մարտիչեան, Գառնիկ Մկրտիչեան, Վիգէն Յովսէփեան, Գօգօ Պալեան եւ Հրաչ Շմաւոնեան:

ներուն տրամադրութեան տակ ըլլալով հանդերձ, նաեւ օգտագործելի է Հ.Մ.Ը.Մ-ի համահայկական ընտանիքին բոլոր անդամներուն կողմէ: Բոլոր անոնք որոնք կը փափաքին հայրենիք այցելել եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ին հետ բանակում կատարել՝ բարի եկած են: Նախընթացը գոյութիւն ունի: Հ.Մ.Ը.Մ-ի քոյր մասնաճիւղերու բանակումը, որ 2011-ին այստեղ իրագործուեցաւ մեծ յաջողութեամբ»:

Շարունակելով, եղբ. Մկրտիչեան հաստատեց, որ «Հայկ Յովսէփեան բանակազարը սոսկ բանակազար մը չէ,

ան հանդիպման վայր մըն է միութեան սփիւռքեան եւ հայրենի սկաուտական շարժումները համախմբող ճիգերուն: Ան կը ծառայէ մէկ ու նուիրական նպատակի՝ մեր նորահաս սերունդներու դաստիարակութեան գործին: Գործ մը, որուն համար կ'արժէ ի գործ դնել բարոյական եւ նիւթական ամէն գոհողութիւն, որովհետեւ ինչ որ կը ցանենք այսօր, վաղը, վստահաբար կը հնձենք մեծ գոհունակութեամբ»:

Իր խօսքին աւարտին, եղբ. Մկրտիչեան շնորհակալութիւն բոլոր անոնց, որոնք մասնակից դարձան բանակազարի ապահովման, նորոգման եւ բարեգարդման աշխատանքին, յատկապէս՝ Յովսէփեան ընտանիքին եւ Հայկ Յովսէփեանի ընկերներուն, առանց որոնց նիւթական աջակցութեան կարելի պիտի չըլլար բանակազարին իրագործումը:

Յայտնենք, որ մինչեւ Հայկ Յովսէփեան բանակազարին ստեղծումը, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի բանակումները կը կատարէր Բիւրականի բարձունքին վրայ: Նոր բանակազարը սկաուտներուն ո՛չ միայն դիւրութիւն կու տայ տեւական բանակումներ կազմակերպելու, այլ՝ նոյնիսկ իրենց կիրականօրեայ հաւաքները կատարելու այնտեղ:



# «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ ՄԱՍՆԱԾԻԲՂԻՆ (1927-2012)» ԳԻՐՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

**4** Սեպտեմբեր 2015-ի յետմիջօրէին, Երեւանի Աւետիք Իսահակեանի անուան կեդրոնական գրադարանին մէջ տեղի ունեցաւ «Պատմութիւն Հ.Մ.Ը.Մ.Ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղին (1927-2012)» սպաներէն գիրքին ներկայացումը, կազմակերպութեամբ՝ գրադարանի տնօրէնութեան: Իրենց ներկայութեամբ գիրքն ու հեղինակը պատուեցին Աւետիք Իսահակեանի անուան գրադարանի տնօրէնուհի Յասմիկ Կարապետեան, փոխ տնօրէնուհի Ռուզաննա Բարսեղեան, Հ.Մ.Ը.Մ.Ի կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Ստեփան Տէր Պետրոսեան եւ Գարլոս Սէֆէրեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Հորասիո Թերգեան եւ փոխ ատենապետ եղբ. Վիսենթէ Յովասափեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Կուսթաւօ Խաչատուրեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Արմանտօ Թորգոմեան, նախկին ատենադպրուհի քոյր Եփրուհի

Նաքրաչեան եւ Հ.Յ.Դ. Հարաւային Ամերիկայի կեդրոնական Կոմիտէի անդամ եղբ. Տանիէլ Զէքեան:

Գիրքին ներկայացման հանդիսութիւնը բացուեցաւ Վահան Թէքէեանի «Բարձրացում» բանաստեղծութեան ասմունքով, որմէ ետք ցուցադրուեցաւ 2014 թուականին Բիւրականի մէջ տեղի ունեցած Համա-Հ.Մ.Ը.Մ.ական վերջին բանակումին տեսերիզը:

Ապա, պատմաբան Գէորգ Եազրճեան կատարեց գիրքին ներկայացումը: 1918-ին հիմնուած Հ.Մ.Ը.Մ.Ի գործունէութեան եւ դերակատարութեան մասին խօսելով, Եազրճեան մանրամասնօրէն անդրադարձաւ եղբ. Աբրահամ Ահարոնեանի աշխատասիրութեան, շեշտելով գործին բժախնդրութիւնը: Ան հաստատեց, որ պատմութեան այս գիրքը ապագայ սերունդներուն համար պիտի ըլլայ թանկագին յուշամատեան եւ տեղեկատուութեան հարուստ աղբիւր:

Խօսք առաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.Ի կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան: Ան շեշտեց գիրքին կարեւորութիւնը եւ արժեւորեց եղբ. Աբրահամ Ահարոնեանի տարած աշխատանքը, մաղթելով որ գիրքը ունենայ իր հայերէն թարգմանութիւնը:

Այնուհետեւ, խօսք առաւ գիրքի հեղինակ եղբ. Աբրահամ Ահարոնեան եւ շնորհակալութիւն յայտնեց Աւետիք Իսահակեանի անուան գրադարանի



Գրադարանի տնօրէնուհի Յասմիկ Կարապետեանի հետ:

տնօրէնութեան, այս հանդիսութեան կազմակերպման համար: Ան ներկայացուց իր գործին բովանդակութիւնը, նշելով այն աղբիւրները, որոնք օգտակար դարձան իր աշխատանքին յաջողութեան համար: Եղբ. Ահարոնեան յայտնեց նաեւ, որ Հ.Մ.Ը.Մ.Ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի խումբ մը անդամներ եւ նախկին վարչականներ նիւթապէս օժանդակեցին՝ կարելի դարձնելով գիրքին հրատարակութիւնը: Եզրափակելով, եղբ. Ահարոնեան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.Ի աշխարհատարած կառույցը, բաղկացած՝ 103 մասնաճիւղերէ եւ բազմազգար անդամներէ:

Հուսկ, հանդիսութեան փակման խօսքը արտասանեց գրադարանի տնօրէնուհի Յասմիկ Կարապետեան: Ան հաստատութեան կողմէ շնորհակալութիւն յայտնեց գիրքը ստացած ըլլալուն համար եւ շեշտեց պատմութիւնը արձանագրելու կարեւորութիւնը, որպէս մշակութային ժառանգ եւ ուսանելի դաս՝ գալիք սերունդներուն:



# ՄԵՐ ԳՈՐԾԸ ԱԶԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ Է

(Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի 11-ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ԵՐԵՒԱՆ)

**Մ**ենք մեզ գովելու պէտք չունենք, սակայն պիտի ընդունենք, որ Հ.Մ.Ը.Մ.ը մեր իրականութեան ամենայնաջող եւ ամենամեծ հասարակական կազմակերպութիւնն է: Սա իրականութիւն է: Այդպիսին է, բայց դա մեզի պէտք չէ գոհունակութիւն տայ, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը իր առաքելութեան իսկ բերումով դեռ գործ ունի անելու: Այսօր դա հայկական իրակա- նութեան կապելն է ազգի մի կարե- ւոր մաս , որ մինչեւ 20-25 տարի առաջ մեզ հասանելի չէր, այ- սօր հասանելի է:



Կարելոր է, որ Հ.Մ.Ը.Մ.ը կա- րողանայ կազմակերպական ցան- ցի մէջ առնի հայութեան այն մա- սը, որ մինչեւ հիմա մեզ համար հասանելի չէ, դա Ռուսաստան լի- նի, Խ. Միութեան նախկին հանրա- պետութիւններ լինեն, Վրաստան լինի: Ուր որ հայ կայ՝ Հ.Մ.Ը.Մ.ը այնտեղ պէտք է ներկայութիւն դառնայ: Սա կարելոր է: Կարելոր է, որ հայութեան ամէն մէկ մաս- նիկ իրեն զգայ ամբողջականու- թեան մի մաս: Այն օրը, երբ մեր գաղութները, մեր առանձին շրջ-

Մեր գործը ազգի կազմակերպումն է: Ազգը մէկ ամբող- ջականութիւն է: Ոչ մի ժամանակ չի կարող Հ.Մ.Ը.Մ.ը հան- գիստ քնի, եթէ կազմակերպուածութիւնը ամբողջական, հայ- կական չի: Այսինքն՝ հայկական իրականութիւնը պարտադ- րում է, Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը պարտաւորեցնում է, որ նա մտածի իր սփռուածութեան քարտէսը ամբողջացնելու համար: Մտածի եւ աշխատի տարածուելու եւ ամէնուր ներ- կայ լինելու մասին: Եւ սա չպէտք է համարուի Հ.Մ.Ը.Մ.ի գա- լիք Կենտրոնական Վարչութեան գործը: Սա պէտք է լինի Հ.Մ.Ը.Մ.ի ամբողջ կառույցի աշխատանքը: Ամէն մէկ շրջան պէտք է ծրագիր մշակի եւ մտածի, որ այս տարածման, ընդ- լայնման գործի մէջ ինքը ի՞նչպէս պէտք է մասնակցի:

Հ.Մ.Ը.Մ.ի ներկայութիւնը Հայաստանում յոյժ կարելոր է: Գիտեմ, որ Հայաստանը իբրեւ հայութիւն, չունի այն խնդիրը, զոր Սփիւռքը ունի, բայց Հայաստանը իր հերթին ու- նի իր խնդիրները: Իբրեւ հասարակական կազմակերպու- թիւն, Հ.Մ.Ը.Մ.ը Հայաստանում անելիք ունի, հայրենասի- րութեան տարածման առումով, ազգային շունչի փոխանց- ման առումով, պատասխանատուութեան գիտակցութիւն տալով, կենդանի օրինակ դառնալով Հայաստանի մէջ այսօր առկայ քաղաքացիական շարժումներին եւ կազմակերպու- թիւններին: Քաղաքացի դաստիարակելու, հայրենասիրու- թիւն տարածելու գործը ամէն տեղ անհրաժեշտ է:

ջանները չկարողանան իրենք զիրենք տեսնել ընդհանուրի մաս, այդ օրը կը սկսի իրենց ոչնչացումը: Սա իրականութիւն է նաեւ մեր կազմակերպական միաւորների համար: Այն օրը որ մեր կազմակերպական միաւորներուն համար իրենց տեղական գործը կը դառնայ ինքնանպատակ, եւ այն օրը որ անոնք չեն կարողանար իրենց գործը տեսնել համահայկական ընդհան- րութեան մէջ, այդ օրը իրենք դադարելու են Հ.Մ.Ը.Մ. լինելուց եւ դադարելու են ընդհանրապէս հայկական կազմակերպու- թիւն լինելուց: Ուրեմն, կարելորը համահայկականութիւնն է:

Դուք մեր ուղեկից կազմակերպութիւնն էք: Մենք նոյն ու- ղու վրայ ենք, նոյն արժէքներով ենք առաջնորդուում: Նոյն նպատակներն ենք հետապնդում: Մենք քաղաքական դաշ- տում, դուք՝ հասարակական դաշտում: Մենք մէկս միւսով պէտք է հզօրանանք եւ մէկս միւսով պէտք է աւելի դիւրու- թիւն ունենանք աշխատելու: Ձեր գործը համահայկական գործ է, ազգային գործ է, քաղաքացիական հասարակութիւն ձեւաւորելու գործ է, եւ այս գործը մեծ առաքինութիւն է պահանջում, սա մեծ աշխատանք է, որ չպէտք է կիսատ թող- նենք: Պէտք է ներկայութիւն լինէք ամէնուր, որովհետեւ կազմակերպուածութիւնը ուժ է, կազմակերպուածութիւնը ազդեցութիւն է, կազմակերպուածութիւնը ամէն ինչ է այսօր մեզի համար:

Հայութեան այն մասում, որ գործ արել էք, լա՛ւ էք արել, ձեր վարձքը կատար, պիտի մնացեալ մասում էլ նոյն աշխա- տանքը տարուի:

# ՄԵՐ ՈՒԺԻՆ ԱՂԲԻԲՐԸ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԾԱՌ-ԱՅԵԼՈՒ ՄԵՐ ՈՒԽՏՆ Է

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ  
ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝  
11-ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Պատուարժան հիւրեր, սիրելի քոյրեր եւ եղբայրներ,

Ուրախութեամբ կ'ողջունեմ ձեր բոլորը Հ.Մ.Ը.Մ.Ի հիւրընկալ յարկին տակ: Մեզ համախմբող առիթը Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական 11-րդ Ընդհանուր Ժողովն է, որ քիչ ետք ընթացք կ'առնէ Աղվերանի մէջ, մասնակցութեամբ միութեան Շրջանային եւ Մեկուսի 20 շրջաններէն 104 պատգամաւորներու:



Ծագոյն իրագործումը եղաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Բիւրականի բանակավայրին ընդարձակումը եւ վերանորոգումը հայրենի պետութեան եւ «Փիւնիկ» մարդկային պաշարներու հիմնադրամին օժանդակութեամբ:

Այս բոլորը կատարուեցան հայրենի իշխանութիւններու բարեխնամ օժանդակութեամբ: Նախագահ Սերժ Սարգսեան անձամբ կատարեց Բիւրականի բանակավայրին բացումը: Հայրենի պետու-

Միութեան համահայկական կառույցի բոլոր ներկայացուցիչները ներկայ են այստեղ: Մայր Հայաստանէն մինչեւ Աւստրալիա, Ամերիկաներ, Եւրոպա եւ տազնապահար Միջին Արեւելք: Հ.Մ.Ը.Մ.Ի դրօշին տակ համախմբուած քոյրեր եւ եղբայրներ եկած են հաշուեքննութեան եւ վերարժեւորման ենթարկելու միութեան գործունէութիւնը աւելի լաւ ապագայի մը կերտման համար:

Նախորդ Պատգամաւորական Ժողովէն ասդին շատ բան փոխուած է մեր կեանքին մէջ: Ուրախութեամբ պէտք է յայտնենք, որ Հայաստանեան մեր կառույցը անցնող չորս տարիներուն ապրեցաւ քանակական եւ որակական ուսում:

Այսքան մեծ գործ կը կատարուի կամաւոր աշխատանքով, զոհաբերութեամբ եւ նուիրումով: Մեր դրամագրւուիսը մեր մարդուծն է: Մեր ուժին աղբիւրը մեր գաղափարախօսութիւնն է, հայութեան եւ Հայաստանին ծառայելու մեր ուխտն է, որ գրաւականն է այսօրուան եւ վաղուան մեր բոլոր յաջողութիւններուն:

Հ.Մ.Ը.Մ. իր արմատները ամրապնդեց հայրենի հողին մէջ: Միութիւնը փայլուն յաջողութեամբ կատարեց Համա-Հ.Մ.Ը.Մ.ական իր 9-րդ մարզախաղերը եւ 10-րդ բանակումը: Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ա.Ս.Կ. ղ օժտուեցաւ նոր եւ յարմարաւէտ կեդրոնով մը, իսկ մե-

թիւնը Հ.Մ.Ը.Մ.ին յատկացուց նոր հողաչերտ մը Երեւանի անտառային մասին մէջ՝ ընդարձակելու համար Հայկ Յովսէփեան բանակավայրը:

Անցնող քառամեակը Հ.Մ.Ը.Մ.ին համար նշանակալից եղաւ նաեւ անոր համար, որ ան գործակցութեան յուշագիր ստորագրեց Սփիւռքի նախարարութեան հետ: Միութեան մասնաճիւղերը մեծաթիւ մասնակցութիւն բերին համահայկական ամառնային եւ ձմեռնային խաղերուն՝ հայ երիտասարդութեան պարգեւելով ազգային դաստիարակութեան բացառիկ առիթներ:

Այս բոլորին կողքին, Հ.Մ.Ը.Մ. բացառիկ շուքով նշեց հայ սկաուտութեան 100-ամեակը եւ այս առիթով յատուկ բանակում մը կազմակերպեց Հայաստանի մէջ: Միութեան ներկայացուցիչը ընտրուեցաւ Համաշխարհային Սկաուտական Շարժումի Բիւրոյի անդամ՝ Հայաստանին եւ հայ սկաուտութեան ապահովելով պատուաբեր դիրք միջազգային սկաուտութեան մեծ ընտանիքին մէջ:

Ուրախալի այս իրագործումներուն կողքին, միութիւնը բաժնեկցեցաւ մեր ժողովուրդին վիճակուած դժուարին պահերը: Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբոյ մասնաճիւղերը իրենց ընթացիկ գործունէութիւնը առկախելով նուիրուեցան մեր ժողովուրդի ծառայութեան գործին: Տուին նահատակներ, բայց մնացին պատնէշի վրայ, հաւատարիմ իրենց խոստումին եւ դաւանանքին:

Դժուարին օրեր ապրեցան նաև Իրաքի մեր մասնաճիւղերը, որոնք Քերթուկի, Մուսուլի եւ Պաղտատի մէջ ցուցաբերեցին ազգային գիտակցութեան եւ յանձնառութեան բարձր ոգի:

Պայմաններու բերումով, մեծաթիւ Հ.Մ.Ը.Մ.ականներ լքեցին իրենց անապահով շրջանները եւ անցան սփիւռքեան տարբեր ոստաններ, բայց ուր որ գացին, անոնք իրենց հետ տարին Հ.Մ.Ը.Մ.ն ու Հ.Մ.Ը.Մ.ականութիւնը:

Պատմութիւնը կրկնեց ինքզինք: 1918-ին Հ.Մ.Ը.Մ. հազիւ հիմնուած զբաղեցաւ որբահաւաքի եւ զաղութներու երիտասարդութեան կազմակերպման աշխատանքով: Այսօր որբեր չկան, սակայն որբացած զաղութներ կան: Հ.Մ.Ը.Մ. դարձեալ գործի վրայ է: Հայ երիտասարդութիւն կը համախմբէ, հայեցի դաստիարակութեան միջավայր եւ մթնոլորտ կը ստեղծէ: Սկստուածութեան եւ մարգարտութեան ճամբով երիտասարդները ձուլման վտանգէ կը փրկէ, հայութեան եւ Հայաստանին կը կապէ: Կը բաւէ նշել, որ վերջին երկու տարուան ընթացքին, իր ժողովուրդի կարիքներուն ընդառաջելով, Հ.Մ.Ը.Մ. նոր մասնաճիւղեր հիմնեց Հո-

Սիւրիոնը բաժնեկցեցաւ մեր ժողովուրդին վիճակաւ ղժուարին պահերը: Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ մասնաճիւղերը իրենց ընթացիկ գործունէութիւնը առկախելով նուիրուեցան մեր ժողովուրդի ծառայութեան գործին: Տուին նահատակներ, բայց մնացին պատնէշի վրայ, հաւատարիմ իրենց խոստումին եւ դաւանանքին:

Դժուարին օրեր ապրեցան նաև Իրաքի մեր մասնաճիւղերը, որոնք Քերթուկի, Մուսուլի եւ Պաղտատի մէջ ցուցաբերեցին ազգային գիտակցութեան եւ յանձնառութեան բարձր ոգի:

իր 100-ամեակին կը նայի լաւատեսութեամբ եւ նորանոր մարտահրաւէրներ ղիմազրաւելու վճռակամութեամբ, ինչպէս՝  
- Հայաստանեան կառույցի ուժեղացում եւ նոր կեդրոններու բացում:

լանտայի եւ Գերմանիոյ մէջ, իսկ Շուէտի մէջ գործող իր կառույցը մեծցաւ երեք անգամով, երբ Սթոքհոլմի մասնաճիւղը ծնունդ տուաւ երկու այլ մասնաճիւղերու: Այս բոլորը արդիւնք են Եւրոպա հասնող հայութեան դադարաւոր զաւակները համախմբելու եւ կազմակերպելու Հ.Մ.Ը.Մ.ական գործին, ազգային փրկութեան առաքելութեան:

Այսքան մեծ գործ կը կատարուի կամաւոր աշխատանքով, զոհաբերութեամբ եւ նուիրումով: Մեր դրամագրութիւնը մեր մարդուծն է: Մեր ուժին աղբիւրը մեր զաղափարախօսութիւնն է, հայութեան եւ Հայաստանին ծառայելու մեր ուխտն է, որ գրաւականն է այսօրուան եւ վաղուան մեր բոլոր յաջողութիւններուն:

97-ամեայ Հ.Մ.Ը.Մ.ը, այսօր աւելի քան երեք, առոյգ եւ կենսունակ է: Ան

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby


# HOTEL



# PAVILLON MONCEAU

## PARIS

Full of charme,  
Tastefully decorated 36 rooms  
and 6 suites with individual  
heating / air conditioning,  
direct access telephone line,  
internet connection, minibar,  
safety box and satellite TV.  
Private bathroom with hairdryer.  
The suites can accommodate  
3 adults or a family  
with parents and 2 children.



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com

- Եւրոպայի տարածքին նոր մասնաճիւղերու ստեղծում:
  - Միութեան եւ Հայաստանի Առաջին հանրապետութեան 100-ամեակի տօնակատարութիւններ:
  - Ռազմավարական ծրագրի գործնականացման հանգրուաններ եւ այլն:
- Այս բոլորը կ'ենթադրեն ուժերու ամբողջական լարում, վասն միութեան հեռաւոր նպատակներուն իրագործման եւ ի շահ հայութեան եւ Հայաստանին բարգաւաճման:
- Խօսքիս աւարտին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան

անունով պարտք կը զգամ շնորհակալութիւն յայտնելու բոլոր անոնց, որոնք անցնող չորս տարիներուն իրենց նիւթական եւ բարոյական աջակցութիւնը չզլացան միութեան: Այս առթիւ ունիմ նաեւ անակնկալ մը:

Պատգամաւորական ժողովի բացման հանդիսաւոր այս պահուն, ուրախութիւնն ու պատիւը ունիմ պարգեւատրելու արժանաւոր երկու դէմքեր՝ եղբ. Աբրահամ Ահարոնեան Հ.Մ.Ը.Մ-ի «Արժանեաց» շքանշանով, իսկ պրն. Գաբրիէլ Զեմպէրճեան՝ միութեան «Արտակարգ» շքանշանով:

## ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՋ ՊԱՀԵԼՈՒ Է ՅԱԲԵՐԺ

(Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՀՐԱՋ ՇՄԱԻՈՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Մեծարգոյ հիւրեր,  
Սիրելի Հ.Մ.Ը.Մ-ական քոյրեր,  
եղբայրներ,

Նախ թոյլ տուէք բարի գալուստ մտադրել բոլորիդ, վստահութիւն յայտնել, որ Մայր հողի վրայ 4-րդ անգամ կայացող Հ.Մ.Ը.Մ-ի Պատգամաւորական սոյն Ա-րդ ժողովը մեզ նպատակամղելու, հաւատ ներշնչելու, նուիրական նպատակներն իրականացնելու երաշխիքն է հանդիսանում:

Յիրաւի, 2015 թ-ը հայ ժողովրդի համար կարեւորագոյն տարեկից է: Սփիւռքը եւ Մայր Հայրենիքը մէկ անգամ եւս հաւաստեցին, որ համախմբուած են եւ համախմբումն այդ մէկ յիշողութեան շուրջ է:

Մեծ Եղեռնի վերջերս աւարտուած սզահանդէսները վկա-



յեցին, որ չնայած 100 տարի առաջ ոսոխը անճիտել է մեր մտաւորականութեանը, բռնասպանել ժողովրդին, վերապրողներին, առանց յետդարձի իրաւունքի արտաքսել է հազարամեայ բնօրրաններից, աստուածաշնչային մեր գոյութիւնը վերացնել չի կարողացել: Դա առաջինը Յեղասպանութեան ոճրագործութիւնից ընդամէնը երեք տարի անց, 1918 թուականի Նոյեմբերի 16-ին, ընդ որում բուն իսկ Թուրքիայի մայրաքաղաքում հաւաստեցին մի խումբ նախանձախնդիրներ, որոնք հիմ-

նադրեցին Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնն ու «Հայ սկսուտ» ամսագիրը: Երախտիքով յիշատակելով հիմնադիրների՝ Գրիգոր Յակոբեանի, Հայկ Ճիգմէճեանի, Լեւոն Յակոբեանի, Տիգրան Խոյեանի, Գարլօ Շահինեանի, Վահրամ



Չնայած 100 տարի առաջ ոսոխը անճիտել է մեր մտաւորականութեանը, բռնասպանել ժողովրդին, վերապրողներին, առանց յետդարձի իրաւունքի արտաքսել է հազարամեայ բնօրրաններից, աստուածաշնչային մեր գոյութիւնը վերացնել չի կարողացել: Դա առաջինը Յեղասպանութեան ոճրագործութիւնից ընդամէնը երեք տարի անց, 1918 թուականի Նոյեմբերի 16-ին, ընդ որում բուն իսկ Թուրքիայի մայրաքաղաքում հաւաստեցին մի խումբ նախանձախնդիրներ, որոնք հիմնադրեցին Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը:

Փափագեանի, Ժիրայր Խորասանճեանի, Յակոբ Սիրունու անունները, անհնար է անտեսել Շաւարշ Քրիսեանի ներդրումը, որը Օսմանեան սահմանադրութիւնից անմիջապէս յետոյ առաջինը Պոլսում եւ ընդհանրապէս հայ իրականութիւնում սկզբնաւորեց սկաուտական շարժումը, շարժմանը ազգային նկարագիր, ուղղութիւններ հաղորդեց: ԸՍկաուտական կարգախօսը, որ ձեւակերպել էր Քրիսեանը, պարզ ու պերճախօս էր՝ «Պատուի վրայ երդուել ազգին ու հայրենիքին ամէն կերպ օգտակար լինել»: Պատահական չէ, որ երեսունը դեռ չբոլորած Շաւարշին, 1915-ի Ապրիլի 24-ի գիշերը ձերբակալեցին Պոլսի ութ հարիւր հայ մտաւորականների հետ, խողխողեցին Անգարայի խորածորում: Քրիսեանը բացառիկ սկաուտ էր: Այաջի բանտում, շատ լաւ իմանալով, թէ ինչ ճակատագիր է սպասում իրեն ու իր բախտակիցներին, ամէն առաւօտ համախոհների հետ սկաուտական գործունէութիւն էր իրականացնում:

Ցաւօք, Հայաստանի Հանրապետութեան խորհրդայնա-

Հայրենասիրութիւնը մեր ժողովրդի այն առանձնայատկութիւնն է, որը, չնայած բռնագաւթումներին ու բռնասպանութիւններին, անգամ ցեղասպանութիւններին դարեր ի վեր մեզ հայ է պահում: Ու պահելու է յաւերժ: Դրա վառ ապացոյցն է այսօրուայ Ազատ, Անկախ Հայաստանի Հանրապետութիւնը, հզօր Սփիւռքը, որը մշտապէս Մայր հայրենիքի կողքին է, երեք տարուց 100-ամեակը տօնող Հ.Մ.Ը.Մ.ը, որը հաւատացել էլ աւելի է ծաղկելու, էլ աւելի ուժեղ եւ գիտակից սերունդներ է դաստիարակելու եւ տանելու է մեր նուիրական նպատակի իրականացմանը:

ցումը ի դերեւ հանեց այդ նպատակները՝ դրանք փոխարինուեցին պիտոնէրական կարգախօսներով:

Բնական է, այդպէս երկար շարունակուել չէր կարող: Հայրենասիրութիւնը մեր ժողովրդի այն առանձնայատկութիւնն է, որը, չնայած բռնագաւթումներին ու բռնասպանութիւններին, անգամ ցեղասպանութիւններին դարեր ի վեր մեզ հայ է պահում: Ու պահելու է յաւերժ: Դրա վառ ապացոյցն է այսօրուայ Ազատ, Անկախ Հայաստանի Հանրապետութիւնը, հզօր Սփիւռքը, որը մշտապէս Մայր հայրենիքի կողքին է, երեք տարուց 100-ամեակը տօնող Հ.Մ.Ը.Մ.ը, որը հաւատացել էլ աւելի է ծաղկելու, էլ աւելի ուժեղ եւ գիտակից սերունդներ է դաստիարակելու եւ տանելու է մեր նուիրական նպատակի իրականացմանը:

Թօյլ տուէք շնորհաւորել Հ.Մ.Ը.Մ-ի 11-րդ Պատգամաւորական Ժողովի մասնակիցներին՝ մաղթելով բեղմնաւոր գործունէութիւն:

PINK  
Kimberley™  
AUSTRALIA

PinkKimberley.com.au

*Diamonds beyond rare*



Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.







Գրիգոր ճուղլեանի որդի՝ Փաթրիս ճուղլեան:



րուծիւններով ուրախութիւն յայտնեց շնորհահանդէսին մասնակցութեան համար: «Հայրս Պոլսոյ մէջ լուսանկարիչ եւ մարզիկ էր: Յեղասպանութեան ժամանակ անոր հայրն ու եղբայրը մահացան, միւս եղբայրը՝ Յակոբ Սիրունին Ռումանիա գնաց: Հայրս Ֆրանսա անցաւ եւ լուսանկարիչ դարձաւ՝ մարզական լուսանկարչութեան աւանդութիւնները շարունակելով: Անոր շնորհիւ է, որ այս ցուցադրութիւնը կը կատարուի», նշեց ան:

Շարունակելով, ճուղլեան ըսաւ, թէ ինչո՞ւ որոշած է հօրը ամբողջական հաւաքածոն նուիրել Հայոց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկին. «Փափաքեցայ տունս չմնայ ան, որպէսզի ապագայ սերունդները իմանան, թէ ի՞նչպէս էր իրենց նախնիներուն կեանքը եւ ի՞նչպէս ապրած են անոնք Օսմանեան կայսրութեան մէջ»:

Խօսք առաւ նաեւ հայ մարմնակրթութեան մեծ երախտաւոր Շաւարշ

Քրիսեանի եղբօրորդին՝ Շաւարշ Քրիսեան: Ան ըսաւ, որ այս ցուցադրութիւնն ու գիրքը կու գան ապացուցելու, թէ որո՞նք եղած են հայերը եւ ինչպիսի՞ ժառանգութեան տէր են անոնք: «Անոնք որոնք Հայաստանի պատմութեան թանգարան այցելած են, պէտք է ծանօթ ըլլան հսկայական այն աւանդին եւ ժառանգութեան, զոր մենք ունինք: Ես անցեալ անգամ զարմացայ, երբ այցելեցի, ակնատես եղայ հինգ հազարէն ետեւ թը հազար տարուան հնութիւններու,

## «ՀԱՅԿԱԿԱՆ ՍՊՈՐՏԸ ԵՒ ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆՈՒՄ» ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՄԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔԻ ԽՕՍՔԸ

Հայկ Դեմոյեան  
Պատմական գիտութիւններու դոկտոր

Ընթերցողի ուշադրութեանը ներկայացուող այս աշխատութիւնը նուիրուած է քիչ ուսումնասիրուած, սակայն չափազանց կարեւոր ու հետաքրքիր մի ոլորտի՝ Օսմանեան կայսրութեան հայ բնակչութեան շրջանում մարմնակրթական շարժման ձեւաւորման ու սպորտի զարգացման պատմութեանը:

Օսմանեան կայսրութիւնում հայկական սպորտային ու մարմնակրթական ակումբների ու միութիւնների զարգացման պատմութիւնը սկսուում է 20-րդ դարի սկզբներից, երբ ձեւաւորուեցին առաջին մարմնամարզական խմբակները, եւ ի յայտ եկան առաջին հայ մարզիկները: Աւելի վաղ հայկական վարժարան-

ներ էին ներմուծուել մարմնամարզութեան դասընթացներ՝ առողջ ու աշխոյժ սերունդ դաստիարակելու հրամայականով: Կայսրութիւնում մարմնակրթական շարժման զարգացումը, չնայած քրիստոնեայ հպատակների նկատմամբ կիրառուող խտրականութեանը եւ բռնութիւններին, հետեւանք էր առաջին հերթին հայ եւ յոյն ազգաբնակչութեան շրջանում տեղի ունեցող արդիականացման գործընթացների եւ պայմանաւորուած էր ներհամայնքային որոշակի հիմնախընդիրներով:

20-րդ դարի սկզբներին Պոլսում եւ Չմիւռնիայում ձեւաւորուեցին առաջին հայկական սպորտային ակումբները: Այս ընթացքում ասպարէզ իջան նաեւ մասնագիտական կրթութիւն ստացած մարզիկներ Գրիգոր Յակոբեանը, Շաւարշ Քրիսեանը, Վահան Չե-



**Հայաստանի մարմնամարզի եւ երիտասարդութեան  
նախարար Գաբրիէլ Ղազարեան:**

որոնց նմանները կ'երեւի չէք գտներ Եգիպտոսի եւ Յունաստանի նման երկիրներու մէջ: Այս ենք մենք: Մեր գիտակից ճանաչման մէջ կայ այս ժառանգութիւնը, զոր կը փորձեն մեզմէ խլել»: Քրիսեան հաստատեց նաեւ, որ մեր ժառանգութիւնը միայն հայերուն յատուկ չէ, այլ՝ համաշխարհային արժէք է: «Մարզական, ֆիզիքական կոփուածութիւնը, առողջ ապրելակերպի քարոզչութիւնը քաջալերանք գտաւ քանի մը երիտասարդներու կողմէ, որոնք եւրոպական կրթութիւն ունէին, անոնցմէ մէկն ալ հօրեղբայրս էր»:

Այնուհետեւ, Քրիսեան իր խօսքը եզրափակեց ըսելով. «Մենք պէտք է տեղեակ ըլլանք մեր ժառանգութեան մասին, որ պէսզի կարողա-



**ՊԱՍՏՈՒՄԻԱՆ ԹՅՈՒՄՆԵՐԻ ԿՈՒՆԿՐԱԿԱՆ ԽՈՒՐԻՆ ԸՆԴՈՒՆԱԿԱՆ ԳՆՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԴԱՆԵՐ 1919-1922թթ.**

րազը, Սկրտիչ Սկրեանը եւ այլք, ովքեր կարելի էր դերակատարութիւն ունեցան օսմանահպատակ հայերի շրջանում սպորտի զարգացման ու դրա նկատմամբ հետաքրքրութիւն առաջացնելու գործում:

Օսմանեան կայսրութեան անդրանիկ սպորտային պարբերականի՝ «Մարմնամարզ»-ի հրատարակումը (1911-1914 թթ.) նշանաւոր մարզիկ Շաւարշ Քրիսեանի ջանքերով լրացուցիչ ազդակ էր Պոլսի, Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիայի եւ այլ վայրերում բնակւող հայ երիտասարդութեան շրջանում սպորտի եւ մարմնակրթութեան հանդէպ հետաքրքրութիւնն ուժեղացնելու համար:

Կայսրութեան մարզական տարեգրութեան մէջ իւրայատուկ դրուագ էր 1912 թ. Սթոքհոլմի հինգերորդ միջազգային ողիմպիական խաղերին երկու հայ մարզիկների՝ Վահրամ Փափագեանի եւ Սկրտիչ Սկրեանի մասնակցութիւնը: Այն, խորհրդանշական լինելուց զատ, նոր մեկնակէտ դարձաւ մարզական կեանքի հանդէպ լուրջ հետաքրքրութիւն ձեւաւորելու եւ մասնակցութիւն ապահովելու տեսանկիւնից: Դրա դրսեւորումներից մէկը Պոլսի եւ գաւառի հայ-

կական ակումբների ներկայացուցիչների մասնակցութեամբ եւ նոյնիսկ Պոլսի Հայոց Պատրիարքի հովանաւորութեամբ կազմակերպուած հայկական ողիմպիական խաղերն էին, որի աւանդոյթները մեր օրերում շարունակուում են ի դէմս Համահայկական խաղերի:

Օսմանեան կայսրութիւնում հայկական սպորտի հարուստ պատմութիւնն ու ժառանգութիւնը եւս մէկ անգամ վկայում են կայսրութեան մէջ հայերի ունեցած առաջատար դերակատարութեան մասին: Յատկանշական է որ այդպիսի ազգային առաջադիմութիւնն ու արդիական արժէքներ որդեգրելու հակումները որոշակիօրէն ուժեղացրին անհանդուրժողականութեան դրսեւորումները երիտթուրքական իշխանութիւնների շրջանում: Վերջիններս ամեն կերպ փորձեցին խոչընդոտել քրիստոնեաների ազգային վերելքն ու կրթամշակութային զարթոնքը, որը, ի վերջոյ, իր դրսեւորումը ստացաւ Առաջին Աշխարհամարտի քողի տակ իրականացուած հայ բնակչութեան ցեղասպանութեամբ:

Ներկայ հրատարակութիւնը պատրաստելիս օգ-



նանք արժեւորել աշխարհի մէջ մեր գոյութիւնը»:

Աւարտին, խօսք առաւ «Հայկական սպորտը եւ մարմնակրթութիւնը Օսմանեան կայսրութիւնում» մենագրութեան հեղինակ Հայկ Դեմոյեան: Ան յայտնեց, որ մենագրութիւնը կատարելու առիթ եղած է Ֆրանսայի եւ Պոլսոյ մէջ նշանաւոր մարզիկ Գրիգոր Ճոլոյեանի ընտանիքին հետ պատահականօրէն կատարուած մէկ հանդիպումը: «Ցնցող կացութիւն էր, երբ որոշում ար-

ւած ընտանիքը Փարիզի մէջ թանգարան-հիմնարկին յանձնեց Ճոլոյեանի հաւաքածոն, ինչ որ դարձաւ գիրք կազմելու եւ ցուցադրութիւն ներկայացնելու առանցքը», նշեց Դեմոյեան՝ աւելցնելով, որ 600 լուսանկարները կը ներկայացնեն հայկական մարմնակրթութիւնը 1900-1923 թուականները:

Հայկ Դեմոյեան ներկայացուց քանի մը դրուագ՝ նկատել տալով, որ Օսմանեան կայսրութիւնը ներկայացնող առաջին ողիմպիական մարզիկները, որոնք

հանդէս եկած են Օսմանեան դրօշին ներքեւ, եղած են երկու հայ մարզիկներ՝ Վահրամ Փափագեան եւ Մկրտիչ Մկրեան, որոնք 1912-ին Սթոքհոլմի 5-րդ ողիմպիական խաղերուն մասնակցելով, պատիւ բերած են Օսմանեան կայսրութեան:

Դեմոյեան շեշտեց, որ նախաեղեւեան շրջանին հայ մարմնակրթութիւնը մեծ զարգացում կ'ապրի: Պոլսոյ եւ Զմիւռնիոյ մէջ կը կազմուին ֆութպոլի հայկական առաջին խումբերը: Այս ըն-

տագործուել են նորայայտ ու հազուագիւտ աղբիւրներ եւ լուսանկարչական հաւաքածոներ: Դրանք հիմնականում Հայոց Ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի հարուստ հաւաքածոյի, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչութեան արխիւի, Հայաստանի ազգային արխիւի, «Մարմնամարզ» պարբերականի, Միքայէլ Իշլէմէճեանի, Միհրան Մինասեանի, Դիլիլեան ընտանիքի, PROJECTSAVE նախագծի հաւաքածոյի նիւթերն են:

Հատորն ամբողջացնելու գործում օգտագործուել են հայ նշանաւոր մարզիկ, սկաուտապետ եւ լուսանկարիչ Գրիգոր ճոլոյեանի լուսանկարչական եւ տպագիր ժառանգութիւնը ներառող հաւաքածոյի նիւթերը, ինչպէս նաեւ սփիւռքահայ մամուլում հայկական սպորտի պատմութեանն ու զարգացմանն անդրադարձող հեղինակի յօդուածաշարը: Հատորը պատրաստելիս մեծապէս օգտուել ենք նաեւ հայկական սպորտի պատմութեան լաւագոյն գիտակ Բիւզանդ Թորիկեանի՝ հայ մարմնակրթական եւ սկաուտական շարժման պատմութեանը նուիրուած քառահատորեակից:

Ցանկանում եմ իմ խորին երախտագիտութիւնը յայտնել բոլոր նրանց, ովքեր աջակցեցին այս աշխատութեան պատրաստման գործին, մասնաւորապէս տէր եւ տիկին Փաթրիս եւ Սեդա ճոլոյեաններին, ովքեր սիրայօժար համաձայնուեցին Գրիգոր ճոլոյեանի արժէքաւոր հաւաքածոն յանձնել Հայոց Ցեղասպանութեան թանգարան-հիմնարկին: Ցանկանում եմ երախտագիտութեան խօսք ուղղել նաեւ Պէպօ Իշլէմէճեանին՝ իր հօր՝ Միքայէլ Իշլէմէճեանի լուսանկարչական հաւաքածոն Հայոց Ցեղասպանութեան թանգարան-հիմնարկին յանձնելու համար:

Յատուկ շնորհակալութիւն եմ յայտնում ամերիկաբնակ իմ բարեկամին՝ Շաւարշ Քրիսեանին, հատորի պատրաստման ընթացքում ցուցաբերած անշահախնդիր աջակցութեան համար:

Նիւթերի տրամադրման համար իմ երախտագիտութիւնն եմ յայտնում Եաշար Տոլգա Ջոռային, Միհրան Մինասեանին, Արմէն Մարսուպեանին եւ Յարութիւն Սամուէլեանին:



Թացքին ի յայտ կու գան նաեւ արհեստավարժ մարզական կրթութիւն ստացած մարզիկներ, մարմնամարզիկի կրթութիւն ստացած Շաւարշ Քրիսեանը, որ նաեւ «Մարմնամարզ» պարբերականի խմբագիրն էր, Մկրտիչ Մկրեանը եւ ուրիշներ, որոնք կարեւոր դերակատարութիւն կ'ունենան օսմանահաստակ հայերուն մէջ մարմնակրթութեան ընդհանրացման եւ անոր հանդէպ հետաքրքրութեան ընդարձակման իմաստով, ըսաւ ան եւ աւելցուց,

որ նման զարգացում բնականաբար շատ հաճելի աչքով պիտի չդիտուէր Օսմանեան իշխանութիւններուն կողմէ:

Հեղինակը առանձնացուց գիրքին մէջ տեղ գտած, իր իսկ խօսքով, «Համեղ պատառը»՝ «Սպորտը եւ ազգայնական մրցակցութիւնը» գլուխը, «Որովհետեւ գիտական նոր հիմնաւորում կայ այս մեկնաբանութեան մէջ, Մեծ Եղեռնը գործադրելու եւ հոգեբանական նախադրեալներու ստեղծում՝ հայ ժողովուրդին, ի մասնաւորի հայ մարզիկներու

մարմնակրթական շարժման հանդէպ: Երիտթուրքերը ուշի-ուշով հետեւած են հայ մարզիկներու, հայ մարզական ակումբներու գործունէութեան, սկստական շարժումը նկատուած է երկրին հիմքը քայքայելու շարժում: Նկատեցէք, որ ներքին գործոց նախարար Թալէաթը դիմած է էնվերին՝ 1914-ին, եւ ըսած է, որ համազգեստաւոր հայ սկստներուն քայլարշաւը երկրին սպառնացող վտանգ է, ուստի ներքին գործոց նախարարութիւնը չէ, որ պէտք է զբաղի, այլ պատերազմական նախարարութիւնը պէտք է զբաղի անոնցմով», եզրափակեց Դեմոյեան:

Խօսքերու աւարտին, ներկաները շրջեցան ժամանակաւոր ցուցադրութեան բաժինը եւ մեծ հետաքրքրութեամբ ծանօթացան Արեւմտեան Հայաստանի եւ Օսմանեան կայսրութեան հայաշատ քաղաքներուն մէջ ծաւալած հայ մարմնակրթական շարժումին վերաբերող արժէքաւոր նիւթերու, լուսանկարներու, հրատարակութիւններու եւ թանգարանային իրերու:



**Լուսանկարները՝  
Տաքել Դուրեանի**

# ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 6-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ԱՍՏՂԸ՝ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՄԱՐԶԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐԸ

**Ա**նցնող ամրան, Հայաստանի ու Արցախի մէջ տեղի ունեցան Համահայկական վեցերորդ մարզախաղերը, որոնք նախորդ մարզախաղերուն հետ բաղդատած՝ աննախըթաց էին թէ՛ իրենց նախապատրաստութեամբ, թէ՛ մասնակցութեան թիւերով ու ներկայացուցչութեամբ եւ թէ կիրարկուած մարզախաղերու թիւով:

16 տարուան պատմութիւն ունեցող Համահայկական այս



տարուան խաղերուն մասնակցեցան 36 երկիրներու 175 քաղաքներէ 6352 մարզիկ-մարզիկուհիներ, որոնք հանդէս եկան 17 մարզախաղերու մէջ՝ Ֆութպոլ, մինի Ֆութպոլ, պասթիպոլ, վոլիպոլ, աթլետիզմ, թենիս, փինկ-փոնկ, ճատրակ, պատմինթըն, լող, պիչ-վոլիպոլ, մարզական պարեր, կոլֆ, հենտպոլ, բազկամարտ, հեծելարշաւ եւ հրացանաձգութիւն: Վերջին եօթը մարզաձեւերը նկատի կ'առնուէին առաջին անգամ ըլլալով:

Ինչպէս նախորդ մարզախաղերուն, այս մարզախաղե-



**2** 015-ը Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի տարին ըլլալով, ի նշան սփռուած հայերու միասնականութեան, վառեցաւ երեք ջահ՝ Սփիւռք, Արցախ եւ Հայրենիք եռամիասնութեամբ:

Սփիւռքի ջահը վառեցաւ Վանայ լիճի Աղթամար կղզին վրայ կառուցուած Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ եւ պատմական ուղեւորութեամբ մը փոխադրուեցաւ համայն հայութեան մայրաքաղաք Երեւան:

Այս նպատակով, Համահայկական խաղերու համաշխարհային կոմիտէի պատուիրակութիւնը, նախագահ Իշխան Զաքարեանի գլխաւորութեամբ, Յուլիսին այցելեց Արեւմտահայաստան, ուր «Բարով եկած էք ձեր տուն, բարով եկած էք ձեր հողերը» խօսքերով դիմաւորուեցաւ հայոց հնազոյն մայրաքաղաք Վանի քաղաքապետ Պեքիր Քայեանի կողմէ:

Վանի քաղաքապետարանին մէջ, հայրենի պատուիրակութիւնը իրեն ի պատիւ կազմակերպուած պաշտօնական ընդունելութեան ընթացքին մանրամասնօրէն ներկայացուց մարզախաղերուն պատմութիւնը:

Վանի քաղաքապետը մեծ պատիւ նկատեց իրենց մասնակցութիւնը այս նախաձեռնութեան եւ իր պատուիրակութեամբ, քաղաքի մշակութային համոյթներով, պատուիրակներուն ուղեկցեցաւ մինչեւ Աղթամար, ուր տեղի ունեցաւ պատմական բոցավառումը:

Այնուհետեւ, ջահը դէպի Պիթլիս եւ Տիգրանակերտ փոխադրուեցաւ Օհաննէս Օհանեանի կողմէ: Տիգրանակերտ տանող ճանքուն վրայ, Հայաստանի պատուիրակութիւնը ընդունեց Պիթլիսի քաղաքապետ Հիւսէյն Օլանը: Այս առիթով ան տեղեկացուց, որ իր գլխաւորած պատուիրակու-

րուն եւս, Հ.Մ.Ը.Մ. մեծաթիւ մասնակցութիւն բերաւ քաղաքներու ներկայացուցչական խումբերու ճամբով: Յատկանշական մասնակցութիւն ունեցան Թուրքիոյ հայաբնակ քաղաքներուն անուններով ներկայացող խումբերը: Նախորդ մարզախաղերուն, Թուրքիան ներկայացուած էր Պոլսոյ եւ Սասունի հայկական խումբերով, այս մարզախաղերուն, Պոլսոյ եւ Սասունի հաւաքականներուն կողքին, իրենց մասնակցութիւնը բերին Պիթիսի, Տիգրանակերտի, Տէրսիմի, Վաքըֆ գիւղի եւ Սամաթիոյ թաղամասերու խումբերը, ընդամէնը 400 մարզիկով, մարզիչներով եւ 350 կազմակերպիչներով ու համակիրներով:

Բացման հանդիսութեան շքեղ տողանցքին հայաբնակ այս եօթը շրջաններու մասնակցութիւնը ստեղծեց բացառիկ խանդավառութիւն: Հպարտութեան եւ ուրախութեան առիթ մը եղաւ նաեւ նոյն հանդիսութեան Թուրքիոյ հայութեան սիրւած երգչուհի Սիպիլի ելոյթը: Սիպիլ Հայաստան ժամանեց Համահայկական խաղերու համաշխարհային կոմիտէի հրաւերով եւ հանդիսութեան երգեց «Գետաշէն» երգը:



## ՍՓԻՒՔԻ ԶԱՀԻՆ ՈՒԵՂԲՈՐՈՒԹԻՒՆԸ ԱՂԹԱՄԱՐԷՆ ԶԱԼԱԽՔ ՈՒ ԵՐԵՒԱՆ

Թիւնը պիտի ըլլայ Համահայկական խաղերու բացման: Հիւսէյն Օլան ցաւով անդրադարձաւ հարիւր տարի առաջ տեղի ունեցածին՝ ըսելով, որ իրենք բոլորն ալ մեղաւոր են, եւ ժամանակն է պատմութեան նայելու ուղիղ աչքերով:

Ապա, պատուիրակութեան անդամները մեկնեցան հայոց արքայ Տիգրան Մեծի հիմնած Տիգրանակերտ քաղաքը, ուր դիմաւորուեցան Տիգրանակերտի քաղաքապետ Ֆրրաթ Անլի եւ Սուրիի քաղաքապետ Ֆաթմա Շըք Պարաթ՝ «Բարի եկաք ձեր տուն» կարգախօսով: Հիւրերուն դիմելով՝ Տիգրանակերտի քաղաքապետը կարեւոր նկատեց երկու ժողովուրդներու մշակութային եւ մարզական կապերը, խօսեցաւ Երեւանի մէջ կայանալիք մարզախաղերուն իրենց մասնակցութեան կարեւորութեան մասին: Երեկոյեան, Ս. Կիրակոս եկեղեցւոյ բակին մէջ տեղի ունեցաւ հայկական պատուիրակութեան հանդիպումը համայնքի հարիւրաւոր ներկայացուցիչներուն հետ:

Վանէն Տիգրանակերտ տարուած ջահը այնուհետեւ ուղեւորուեցաւ Մուշ: Դէպի հրգրում ճանապարհին, հայկական պատուիրակութեան անդամները խոնարհեցան հայ ազգային-ազատագրական պայքարի հերոս Գէորգ Չաւուշի գերեզմանին դիմաց:

Հայրենի պատուիրակութեան անդամները Մշոյ վերին թաղի հայկական գերեզմանոցին մէջ գտնուող Գէորգ Չաւուշի գերեզմանը ծածկեցին հայոց եռագոյնով, ապա վարդեր

նետեցին Սուլուխի կամուրջէն Արածանի գետը՝ ի նշան խոնարհումի բոլոր հերոսներուն առջեւ:

Մշոյ դաշտէն հրգրումի եւ Անիի ուղղութեամբ ջահը ճամբեց Համահայկական խաղերու գործադիր կոմիտէի անդամ Ռոյանտ Շառոյեան:

Անին՝ հայոց հինաւուրց մայրաքաղաքը գրկաբաց ընդունեց Համահայկական խաղերու ջահը: Մայր տաճարին մէջ հնչեցին Անիի նուիրուած երգեր: Կարսէն եւ Անիէն պատուիրակութիւնը ուղեւորուեցաւ Ջաւախք:

Համահայկական խաղերու ջահը Ջաւախքի Ս. Խաչ եկեղեցի բերաւ մարզական մեկնաբան Կարէն Գիլոյեան: Պատուիրակութիւնը դիմաւորացին հարիւրաւոր Ջաւախքցիներ: Ջաւախքի վարչական շրջանի ղեկավար Համլէտ Մովսիսեան եւ ծնունդով Ջաւախքցի պատմաբան Աշոտ Մելքոնեան հանդէս եկան ելոյթներով եւ շեշտեցին նախաձեռնութեան էութիւնը՝ հպարտութեամբ նշելով, որ Ջաւախքի քաղաքները մեծաթիւ պատուիրակութեամբ պիտի մասնակցին Համահայկական վեցերորդ խաղերուն:

Այսպէս, Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ վառած ջահը Ջաւախքէն անցնելով Գիւմրի, ապա Սարդարապատ եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ ստանալով Ամենայն Հայոց Հայրապետին օրհնութիւնը՝ Օգոստոս 2-ին մուտք գործեց Երեւանի Հանրապետական մարզադաշտ:

# ԵՐԵՒՈՅԹՆԵՐ ԵՒ ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 6-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԷՆ



գային, ինչպես վազքի մրցումներուն, մասնակիցներուն մեծամասնութիւնը միեւնոյն քաղաքէն (Երեւան) էին եւ շատ փոքր թիւով մրցակիցներ ունէին այլ քաղաքներէ:

- Բազմաթիւ մրցումներ եւ խաղեր ջնջուեցան մասնակիցներու անբաւարար թիւին պատճառով:

- Համահայկական մարզախաղերու դիմատետրի էջին վրայ ներկայացուեցան մետալներու ընդհանուր բաշխումի երկու տարբեր դասաւորումներ, մէկը 13 Օգոստոս, իսկ երկրորդը՝ 14 Օգոստոս թուականով: Մեր եզրակացութիւնները հիմնուած են 14 Օգոստոսի թիւերուն վրայ:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շատ մը մարզաձեւեր ունեցան աւելի միջ-Հայաստանեան՝ քան Համահայկական մրցակցութեան բնոյթ: Հետեւաբար՝

1. Անիմաստ է Համահայկական մարզախաղերուն մէջ նկատի ունենալ մարզաձեւեր, որոնց միայն Հայաստանեան քաղաքներ կը մասնակցին:

Կարգ մը մարզաձեւեր, ինչպէս ամֆիթիոն, մարզական պար, հեծելաբարձ եւ այլն, որոնց միայն Հայաստանէն եւ

- Մարզախաղերուն մասնակցեցան 175 քաղաքներ եւ միայն 47-ը տիրացան մետալներու:

- 6352 մարզիկ-մարզիկուհիներ մասնակցեցան 17 մարզաձեւերու տղոց եւ աղջկանց մրցումներուն:

- Մետալակիր 47 քաղաքներէն Երեւան տիրացաւ 51 ոսկի մետալի, իսկ մնացեալ 174 քաղաքները միասնաբար 6 ոսկի մետալի:

- Եօթը մարզաձեւեր՝ Ֆութպոլ, Ֆութսալ, պասքեթպոլ, վոլբոլ, հէնտպոլ, թենիս եւ փինկ-փոնկ ունեցան ամէնէն աւելի մեծ թիւով մասնակիցները տարբեր երկիրներու տարբեր քաղաքներէ:

- Պիչ վոլբոլի եւ լողի մարզաձեւերը ունեցան համեմատաբար փոքր թիւով մասնակիցներ ոչ Հայաստանեան քաղաքներէ:

- Աթլետիզմի, հեծելաբարձի, մարզական պարի, պատմիւնթընի, բազկամարտի, ճատրակի, պիչ վոլբոլի եւ հրացանաձգութեան մրցումներուն, որոշ բացառութիւններով, մասնակցեցան միայն հայրենի եւ փոքրաթիւ ուսական ու վրացական քաղաքներ:

- Կարգ մը մարզաձեւերու պարա-

## Տոթ. Վիգէն Գիզմէտեան ԳԱՅԻՐԷ

Համահայկական մարզախաղերու մետալակիր մարզիկներու եւ քաղաքներու ամբողջական անուանացանկերը Հրապարակուեցան կազմակերպիչներու կողմէ, հետեւաբար մեր եզրակացութիւնները կը կատարենք ընդհանուր դասաւորման եւ տարբեր մարզախաղերու մասնակցութեան թիւերու լոյսին տակ:

## ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

- Ընդհանուր դասաւորման առաջին 10 մետալակիր քաղաքներէն 8-ն հանդիսացան հայրենի քաղաքներ:

- Տարբերութիւն մեծ էր մարզախաղերու առաջին երեք դիրքերը գրաւած քաղաքներու շահած մետալներու թիւերուն եւ չորրորդ դիրքը գրաւած քաղաքին միջեւ: Այսպէս, Երեւան արժանացաւ 140 մետալի, Գիւմրի՝ 46, Վանաձոր՝ 18, իսկ չորրորդ հանդիսացած Ստեփանակերտ քաղաքը տիրացաւ 15 մետալի, իսկ հինգերորդ դիրքը գրաւած Թիֆլիսը՝ հազիւ 8 մետալի:

Ռուսաստանէն փոքր թիւով մարզիկներ կը մասնակցին, պէտք է ջնջուին:

2. Իւրաքանչիւր մարզաձեւ նուազագոյնը պէտք է ունենայ 4 տարբեր երկիրներէ 4 տարբեր քաղաքներու մասնակցութիւն, այլպէս ան պէտք է ընդգրկուի համահայկական մարզախաղերուն մէջ:

3. Մասնակցութիւնը պէտք է ըլլայ ըստ քաղաքի եւ ոչ՝ ըստ շրջանի:

4. Մետալներու ընդհանուր դասաւորումը պէտք է ներկայացուի երկիրներով (նոյն երկրի քաղաքներուն շահած մետալները պէտք է գումարել) եւ առանձին դասաւորում մըն ալ պէտք է հրապարակել՝ ըստ քաղաքներու:

5. Իւրաքանչիւր մարզաձեւի համար որդեգրուած կանոնները պէտք է նախօրոք հրապարակել եւ մասնակիցներուն յղել:

6. Մարզախաղերու մասնակցութեան վերջին պայմանաժամը պէտք է ըլլայ մրցումներէն երեք շաբաթ առաջ, որպէսզի մրցումներուն յայտագիրը մասնակից խումբերուն եւ մարզիկներուն ծանօթ ըլլայ նախքան անոնց Երեւան ժամանելը:

7. Մասնակիցներու «հայկական ծագում»ի հասկացողութիւնը պէտք է լաւ սերտել եւ յստակացնել բոլորին: Հայկական ծագումի փաստերը եւ մասնակցութեան անհրաժեշտ փաստաթուղթերը պէտք է յստակ ըլլան բոլորին:

8. Մարզախաղերու կազմակերպման ձեւին եւ կառոյցին ուսումնասիրութիւնը վստահիլ մասնագիտական ընկերութեան մը:



## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 6-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

	ՈՍԿԻ	ԱՐԾԱԹ	ՊՐՈՆՁ	ԸՆԴՀ.
1. Երեւան	51	42	47	140
2. Գիւմրի	15	12	19	46
3. Վանաձոր	6	8	4	18
4. Ստեփանակերտ	5	4	6	15
5. Թիֆլիս	4	2	2	8
6. Նիկոսիա	3	4	1	8
7. Սոչի	3	-	-	3
8. Ախալցխա	2	2	2	6
9. Արմաւիր	2	1	3	6
10. Քիւ	2	1	1	4
11. Յրազդան	2	-	1	3
12. Մցխէթ	2	-	-	2
13. Թեհրան	1	7	2	10
14. Կապան	1	4	2	7
15. Մարտունի	1	2	2	5
16. Սիսիան	1	2	1	3
17. Իջուան	1	2	-	3
18. Էջմիածին	1	1	4	6
19. Սոֆիա	1	1	-	2
20. Աբովեան	1	1	-	2
21. Չալթըր	1	1	-	2
22. Պառնաուլ	1	1	-	2
23. Փարիզ	1	-	-	1
24. Պէյրութ	1	-	-	1
25. Մարսէյ	1	-	-	1
26. Պուրժ Յամուտ	1	-	-	1
27. Նիկոլաե	1	-	-	1
28. Չարենցաւան	1	-	-	1
29. Լոս Անճելըս	1	-	-	1
30. Մոսկուա	-	5	-	5
31. Կլէմտէյ	-	2	1	3
32. Արտաշատ	-	1	3	4
33. Արթիկ	-	1	2	3
34. Քեօլն	-	1	1	2
35. Վառնա	-	1	-	1
36. Աշտարակ	-	1	-	1
37. Տազաքոզ	-	1	-	1
38. Պատն՝Պատն	-	1	-	1
39. Մեծամօր	-	1	-	1
40. Յալէպ	-	-	2	2
41. Պուէնոս Այրես	-	-	2	2
42. Լոնտոն	-	-	1	1
43. Լուգանօ	-	-	1	1
44. Քեսապ	-	-	1	1
45. Տաւուշ	-	-	1	1
46. Ախալքալաք	-	-	1	1
47. Պիլար	-	-	1	1
	114	113	114	341



# ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ. ԻՆՉՊԷՄ ԿԵԱՆՔԻ ԿՈՉՈՒԵՑԱԲ ԱՅՍ ՏՕՆԸ

Թաթուլ Յակոբեան  
Արեւմտահայերէնի վերածուած

**1** 999 թուականի Օգոստոսին, Համահայկական առաջին խաղերուն կրակը Գառնիի հեթանոսական տաճարէն փոխանցավագքերով հասաւ Երեւանի Հրազդան մարզադաշտ, ուր ողիմպիական խաղերու ախոյեան, օղակներու արքայ Ալպէրթ Ազարեան բոցավառեց խաղերուն ջահը: Այսպէս, սկիզբը դրուեցաւ Համահայկական առաջին խաղերուն:

Մտայղացումը ծնած էր աւելի կանուխ, Խորհրդային Միութեան վերջին տարիներուն, երբ Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ կապերը ընդլայնած էին:

1990 թ. Հոկտեմբերին, սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէն որոշեց 15-30 Յուլիս 1992-ին, Երեւանի մէջ կազմակերպել Համահայկական նաւասարդեան մարզական առաջին խաղերը չորս մարզաձեւերով՝ ֆուտպոլ, պասքեթպոլ, փինկ-փոնկ եւ ճատրակ:

Ամիս մը ետք, Հայաստանի կառավարութիւնը, փոխ վարչապետ Կարինճ Սարգսրեանի ստորագրութեամբ, իր համաձայնութիւնը տուաւ, սակայն այդ խաղերը տեղի չունեցան, որովհետեւ Հայաստանն ու Արցախը մտան արիւնալի պատերազմի մէջ:

Արցախեան պատերազմի զինադադարէն ետք, Համահայկական խաղեր կատարելու մտայղացումը կրկին օրակարգ ներկայացաւ:

1994-ին, Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մօտ ստեղծուեցաւ նախաձեռնող խումբ, իսկ Ապրիլ 1997-ին, հայկական մարզական կազմակերպութիւններու համաժողովին համաձայնութիւն գոյացաւ ստեղծելու Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէ, որուն նախագահը ընտրուեցաւ արտաքին գործոց նախարարութեան դիւանագէտներէն Աշոտ Մելիք-Շահնազարեանը:

Հայաստանի կառավարութիւնը վարչապետ Վազգէն Սարգսեանի ստորագրութեամբ որոշեց 28 Օգոստոսէն 5 Սեպտեմբեր 1999 Երեւանի մէջ կատարել Համահայկական առաջին խաղերը:

Խաղերու կազմակերպման նպատակով, 1999 թուականին, Միջազգային Ողիմպիական Կոմիտէն, «Մարմնամարզը բոլորին համար» ծրագրի ծիրէն ներս, Հայաստանի Ազգային Ողիմպիական Կոմիտէին յատկացուց նիւթական օժանդակութիւն, իսկ Միջազգային Ողիմպիական Կոմիտէի նախագահ Խուան Անթոնիօ Սամարանչը ողջոյնի հեռագիր յղեց Հայաստանի նախագահին:

Համահայկական առաջին խաղերը տեղի ունեցան 28 Օգոստոսէն 5 Սեպտեմբեր 1999, Երեւանի մէջ, մասնակցութեամբ 23 երկիրներ 63 քաղաքներու աւելի քան 1100 մարզիկ-մարզուհիներու: Խաղերուն աշխարհագրութիւնը եւ մարզաձեւերուն քանակը տարուէ տարի ընդլայնեցան: Համահայկական վեցերորդ խաղերուն մասնակցեցան աւելի քան 6000 մարզիկ-մարզուհիներ, որոնք մրցեցան 17 մարզաձեւերու մէջ:

Առաջին երեք խաղերը կատարուեցան երկու տարին անգամ մը, չորրորդ խաղերէն ետք անոնք կատարուեցան չորս տարին անգամ մը: 2014-ի Փետրուար 24-էն Մարտ 2 առաջին անգամ ըլլալով տեղի ունեցան Համահայկական ձմեռային խաղեր, Երեւան եւ Ծաղկաձոր քաղաքներու մէջ, մասնակցութեամբ 11 երկիրներէ 22 քաղաքներու շուրջ 400 մարզիկ-մարզիկուհիներու, որոնք մրցեցան ձմեռային 4 մարզաձեւերու մէջ:

Համահայկական վեցերորդ խաղերը կրեցին «Միասնութիւն մարմնամարզով» կարգախօսը: Անոնք սկսան 2 Օգոստոսին եւ շարունակուեցան մինչեւ 13 Օգոստոս 2015: Խաղերու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, բացի Երեւանէն, մրցումներ կատարուեցան



նաեւ Ստեփանակերտի, Գիւմրիի, Վանաձորի, Աբովեանի եւ Արտաշատի մէջ: Այս, անկասկած, ուշացած, բայց արդար որոշում էր:

Վեցերորդ խաղերուն առաջին անգամ ըլլալով մասնակցեցան Տիգրանակերտ եւ Տէրսիմ քաղաքներու հայկական խումբերը, ՎաքրՖ գիւղի եւ Սամաթիոյ թաղամասի: Նախորդ՝ հինգերորդ խաղերուն մասնակցած էին Պոլիս եւ Սասուն քաղաքներու խումբերը:

Ի դէպ, աշխարհի եւ Հայաստանի բազմաթիւ քաղաքներու շարքին, Համահայկական վեցերորդ խաղերուն ջանք վառեցաւ նաեւ Վանի Աղթամար կղզիի Սուրբ Խաչ եկեղեցւոյ մէջ:

Համահայկական խաղերը, անկասկած, յաջող ծրագիր են Հայաստան-Սփիւռք համագործակցութեան տեսանկիւնէն: Սակայն ժամանակն է, որ Համահայկական խաղերը վերածուին նաեւ իրական մարզական միջոցառումի՝ մասնակցութեամբ նաեւ բարձրակարգ հայ մարզիկներու, աշխարհի տարբեր երկիրներէն, Հայաստանէն ու Արցախէն:

Հասկնալի է, որ խմբային մարզաձեւերու մէջ դժուար է ապահովել արհեստավարժութիւն, քանի որ Հայաստանէն



դուրս արհեստավարժ խումբեր դիւրին չէ գտնել: Սակայն անհատական մրցումներու պարագային կարելի է ապահովել արհեստավարժութիւն, հաշուի առնելով, որ աշխարհի տարբեր երկիրներուն մէջ կան ծագումով հայ բազմաթիւ բարձրակարգ եւ աշխարհահռչակ մարզիկներ:



**ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԻՐ ՈՒՆԵՑԱԾ  
ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՒԱՆԴԻՆ ՀԱՄԱՐ՝**

**ԵՂԲ. ՍՏԵՓԱՆ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ  
Կ ԱՐԺԱՆԱՆԱՅ  
«ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ»  
ՇՔԱՆՇԱՆԻ**

**Յ.**Մ.Ա.Ս.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եւ Համահայկական մարզախաղերու գործադիր կոմիտէի փոխ նախագահ Եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան Օգոստոսին արժանացաւ Հայաստանի Հանրապետութեան «Երախտագիտութեան» շքանշանին:

Եղբայր Տէր Պետրոսեանի պարգևատրումը տեղի ունեցաւ նախագահական նստավայրին մէջ կազմակերպուած յատուկ հանդիսութեան մը ընթացքին, որուն ներկայ գտնուեցան Համահայկական մարզախաղերու առթիւ Երեւան ժամանած պատուոյ հիրերն ու հովանաւորները: Նախագահ Սերժ Սարգս-

եան պարգևատրեց 24 անձնաւորութիւններ, որոնց կարգին՝ Եղբ. Տէր Պետրոսեանը:

Նախագահը նաեւ շնորհակալագիրով պարգևատրեց խումբ մը այլ անձնաւորութիւններ՝ Համահայկական 6-րդ մարզախաղերու նախապատրաստութեան եւ իրականացման իրենց գործօն մասնակցութեան համար:

Նշենք, որ Եղբ. Տէր Պետրոսեան չորս տարի առաջ արժանացած էր յատուկ յուշամետալի՝ Համահայկական 5-րդ մարզախաղերու կազմակերպման իր ունեցած մեծ ներդրումին համար:

# ՆՈՒՐՈՒՄԻ ՈԳԻՆ ՎԱՌ ՊԱՀԵԼ ԳԱԽՔ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ ՄԷՁ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ՝ ԵՂԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏՈՅԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)



Հ.Մ.Ը.Մ.Ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան եւ իր չորս մասնաճիւղերու վարչութիւններուն, անդամական ընդհանուր շարքերուն, մարզիկներուն եւ սկաուտներուն կողմէ եկած ենք յարգանքի մեր վերջին տուրքը տալու վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Յովհաննէս Մարտոյեանին:

Իբրեւ տիպար ու նուիրեալ Հ.Մ.Ը.Մ.ական, Ամմանի եւ Սիտնիի մէջ միութեան իր ունեցած անսակարկ ծառայութեան եւ նուիրումին համար, եղբ. Մարտոյեան արժանացած էր Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանին:

Եղբ. Մարտոյեանի մահը ցնցեց ո՛չ միայն Աւստրալիոյ գա-

ղութիւնը, այլեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհացրիւ մեծ ընտանիքը: Չորս օր առաջ, Հ.Մ.Ը.Մ.ի «Անդրանիկ» մասնաճիւղի յիսնամեակի տօնակատարութեան պատգամը փոխանցեց ան եւ մեծապէս յուզեց ներկաները, երբ անդրադարձաւ հայապահպանման սրբազան աշխատանքին, այլասերման դէմ տարւելիք պայքարին եւ ծնողներու խիստ կարեւոր դերակատարութեան այս աշխատանքին յաջողութեան մէջ:

Արդեօք կարելի՞ է պահ մը երեւակայել Աւստրալիոյ շրջանը առանց եղբ. Մարտոյեանի ներկայութեան: Բայց կը վստահեցնենք, որ անոր ունեցած եղբայրական ոգին, սէրն ու յարգանքը, անսակարկ նուիրումը դաս մը պիտի ըլլան գալիք սերունդներուն, որոնք եղբայր Մարտոյեանի օրինակին հետեւելով պիտի ջանան լեցնել անոր ստեղծած մեծ բացը:

Այս տխուր առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան եւ չորս մասնաճիւղերու վարչութիւններուն կողմէ կու գանք մեր խորին ցաւակցութիւնները փոխանցելու տիկին Գեղանոյ Մարտոյեանին եւ զաւակներուն՝ Յարութիւնին, Հուրիին, Սեդային եւ սգակիր բոլոր ազգականներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ականներուն, խոստանալով որ անոր նուիրումի եւ զոհողութեան ջանք վառ պիտի պահենք գալիք սերունդներու հոգիներուն մէջ:

Վարձքը կատարեալ եղբ. Մարտոյեան: Հողը թեթեւ գայ ազգային մտահոգութիւններով տառապած քու սրտիդ վրայ: Երթա՛ս բարով եղբայր:

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԵԾ ԿՈՐՈՒՄՏԸ՝ ԵՂԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏՈՅԵԱՆ

**Ե**ղբայր Յովհաննէս Մարտոյեան ծնած էր 1936-ին, Երուսաղէմ: Դեռ մանուկ, ընտանիքին հետ կը փոխադրուի Սալթ, Յորդանան: 12 տարեկանին ան կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի սկաուտական շարքերուն: Կը ստանձնէ Փոխ Առաջնորդի եւ Առաջնորդի աստիճան եւ գայլիկապետի պաշտօն:

1950-1963 եղբ. Յովհաննէս կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի միջ-մասնաճիւղային Նաւասարդեան տողանցքներուն: 1951-ին կ'ընտրուի



Հ.Մ.Ը.Մ.ի

ընդհանուր խմբապետ: 1958-ին ան կը նախաձեռնէ արեւոյշներու եւ արծուիկներու խումբերու կազմութեան: 1960-1961 մաս կը կազմէ մասնաճիւղի վարչութեան:

1963-ին Աւստրալիա հաստատուելէ ետք, եղբ. Յովհաննէս այլ եղբայրներու հետ կը ձեռնարկէ սկաուտական խումբի մը կազմութեան: 1965-ին ան կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ առաջին մասնաճիւղի հիմնադիրներէն: Կ'ընտրուի վարչութեան անդամ եւ կը ստանձնէ սկաուտութեան խմբապետի պարտականութիւնը:

1973-ին, ան իր մասնակցութիւնը կը բերէ Սիտնիի արեւմտեան շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի հիմնադրութեան: 1974-ին կ'ընտրուի վարչական անդամ, ատենապետ, ապա՝ մասնաճիւղի ընդհանուր խմբապետ մինչեւ 1979:


1979-ին եղբ. Յովհաննէս մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ անդրանիկ Շրջանային Վարչութեան: Երկու շրջան կըլլայ ատենադպիր: Ընդամէնը 12 տարի մաս կը կազմէ յաջորդական Շրջանային Վարչութիւններու:

Եղբ. Յովհաննէս 1981-էն սկսեալ կ'աշխատակցի «Մարգրիկ»ին: Ան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի միջ-դիւանական առաջին եւ երրորդ ժողովներուն (1985, 1993) եւ 1983-2011 երկարած միութեան 8 Պատգամաւորական ժողովներուն:



Երկարամեայ իր ծառայութիւններուն իբրեւ գնահատանք, եղբ. Յովհաննէս 1995-ին կը պարգեւատրուի «Ծառայութեան» շքանշանով, իսկ Մարտ 2007-ին՝ միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:

Ան կը մահանայ 13 Սեպտեմբեր 2015-ին,



## ՄԱՀԱԶԴ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ շրջանի վաստակաւոր եղբայրներէն, «Արժանեաց» շքանշանակիր՝

### ԵՂԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏՈՅԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 13 Սեպտեմբեր 2015-ին, Սիտնի, Աւստրալիա:



# Elegance Plus

Shoes, Bags,  
Fashion Accessories  
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.  
Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

## H. N. BOYADJIAN & CO.

## Տարբեր Հայեացքով



## ՍՈՒՏՈՔՈՒ

2	7					5	3
			3		7		
	6	8		9		1	4
4			8		2		1
		2		7		4	
7			6		4		5
	2	7		6		5	3
			5		8		
1	4					6	2

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուծով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

### Նախորդին լուծումը

4	9	2	5	3	1	8	6	7
5	3	6	2	7	8	9	4	1
7	1	8	4	9	6	3	2	5
1	2	3	7	4	5	6	9	8
6	4	7	9	8	2	1	5	3
8	5	9	1	6	3	2	7	4
2	6	1	8	5	7	4	3	9
3	7	4	6	1	9	5	8	2
9	8	5	3	2	4	7	1	6

Պատասխանը՝ յաջորդիւ

## ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Չուիցերիացի անուանի թենիսմէն:
2. Մարգաձեւ մը՝ մենամարտի դրուժեամբ:
3. Տիրացու, ժամի երգիչ - Ստինք:
4. Շուտ, փութով - Լեցուն:
5. Հարս ու փեսայի օրհնուելի հանդերձանք - Վերջին:
6. Պայթեան մայրաքաղաք - էջին յատակը՝ ծանօթագրութեան բաժին - Երիթ:
7. Արական օտար անուն - Ածականակերտ մասնիկ - Պրագիլական գետ:
8. Անձնական դերանուն - Տարածքի միաւոր - 1998-ի ողիմպիականները հիւրընկալած քաղաքը - Լծկան անասուն:
9. Սկզբնական - Նախահօր կողակիցը:
10. Հեծկլտուք - Արական օտար անուն - Պատկեր:
11. Ժխտական մասնիկ:
12. Աւրուք - Կանացի կոշիկան բառ:
13. Պուրճ Համուտի մայր պողոտան - Որաներու շեղջ:
14. Խուժում - Թագ - Գրաւում:
15. Նրբախաւ կերպաս - Յուցական ածական - Չամուսնացած:
16. Ածականակերտ մասնիկ - Թագաւոր, ինքնակալ - Հայրենի մամուլէն:
17. Աղտ - Ետին դարձած՝ յամառիլ:
18. Պաշտպանութիւն - Յուցական ածական - Ջրուցել:
19. Իգական օտար անուն - Սուրբ գրային բարեգործ մը:
20. Առարկայ - Խրճիթ - Շատ ուտելէն ուռիլ:

## ՈՒՂՂԱՀԱՅԵԱՅ

1. Կամազուրկ - Ողորմիլ - Առատ:
2. Սքանչանալ - Նախաճաշիկ - Գուր:
3. Սիամանթոյի ծննդավայրը - Մոն - Շաղկապ - Ապաւառ:
4. Իրերայաջորդ գիրեր - Շուէտացի անուանի ֆութպոլիստ:
5. Սողուն միջատ - Յատկութիւն - Յարաբերական դերանուն - Իրանեան քաղաք:
6. Երիգ - Կաթիլ - Կոյր, աչազուրկ:
7. Արաբ իշխան - Հաւու երկճիւղ ոսկոր - Սուրիոյ օդափոխութեան վայրերէն:
8. Լիբանանի ամարանոցներէն - Ոջիլի հակիթ - Շրջուած՝ դեղ մանրելու քար - Յուցական ածական:
9. Յոգնակերտ մասնիկ - Չուրի փոքր հոսանք - Փոքրացնող մասնիկ - Չեւ:
10. Նոյն տառերը - 20-րդ դարու առաջին քառորդին Եւրոպայի մէջ յառաջացած մերժումի շարժում - Որոգայթ:
11. Թել մանելու ձեռային գործիք - Պնակ - Ածականակերտ մասնիկ:
12. Նուաստ - Իտալական գետ - «Ֆորմիլա 1»-ի գերմանացի մրցավարորդ:
13. Յուցական ածական - Ժամանում - Ազազուն - Յուրտէ պնդացած ջուր:
14. Արեւու մոլորակներէն - Մեղմ հով - Չեռնատ, միաձեռանի:
15. Արեւելեան շուկայ - Անխոհեմ - Ֆրանսական քաղաք:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1																				
2																				
3																				
4																				
5																				
6																				
7																				
8																				
9																				
10																				
11																				
12																				
13																				
14																				
15																				
16																				
17																				
18																				
19																				
20																				

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1																				
2																				
3																				
4																				
5																				
6																				
7																				
8																				
9																				
10																				
11																				
12																				
13																				
14																				
15																				
16																				
17																				
18																				
19																				
20																				

ԹԻՒ 218 ԽԱՉՔԱՌԻՆ ԼՈՒՓՈՒՄԸ



ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ  
ՄԱՐԶԱԽԱՂԵՐ ՈՒՏՕՆԸ